ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՀՐԱՆԻ ՀԱՅ ԱԿՈՒԲՄԻ

Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

# ՖԷՐԴՈՎՍԻՆ ԵՒ ԻՐ ՇԱՀՆԱՄԷՆ

Ա. ՀԱՏՈՐ

1934

ԼՆ «ՄՈԴԵՐՆ», ԹԻՀՐԱՆ

891.5
Ա-16

891.5
U-16
30 MAY 20
1934

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԷՀԵՐԱՆԻ ՀԱՅ ԱԿՈՒԲԱՅԻ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY
1936 թ. մայիս 20

# ՖԷՐԴՈՎԱԻՆ ԵՒ ԻՐ ՇԱՀՆԱՄԷՆ

Ս. ՀԱՏՈՐ

1934

ՏՊԱՐԱՆ «ՄՈԴԵՐՆ», ԹԷՀԵՐԱՆ

9186
- .01. 2013
2429-2011

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս տարի ինչպէս Պարսկաստանը, այնպէս և գրեթէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը տօնում է Իրանի մեծանուն բանաստեղծ Ֆէրդուսու ծննդեան հազարամեակը։ Թէհրանի հայութիւնը չէր կարող իր մասնակցութիւնը չը բերել այս մեծ տօնին։

Հայ Ակումբը տրուելիք հանդէսի նախաձեռնութիւնն իր վրայ վերցրեց՝ օգնութեան հրաւիրելով բոլոր ազգային մարմինների, միութիւնների և մամուլի ներկայացուցիչներին։ Խորհրդակցութեանց ընթացքին միտք առաջացաւ այս տօնը յաւերժացնել մի մընայուն գործով, այն է՝ հրատարակութեան տալ պրոֆ. Ռ. Աբրահամեանի գեղեցիկ ու արժէքաւոր ուսումնասիրութիւնը Ֆէրդուսու մասին, որն արդէն մաս-մաս լոյս էր տեսնում պարսկերէն և հայերէն թերթերում։ Վարչութիւնս չը վախեցաւ դժուարութիւններից և գրքի հրատարակութիւնն էլ իր վրայ վերցրեց։ Այս բանում մեզ օգնեցին «Թհեղնա»-ն և «Հ. Կանանց Եկեղեցասէր Միութիւն»-ը դրամով և պ. պ. Յովսէփ Թադէոսեան և Ա. Տէրեան գործով ու խորհուրդներով։ Սրանց յայտնում ենք անկեղծ շնորհակալութիւն։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱԿՈՒՄԲԻ

# ՆԱԽԱԲԱՆ

Սոյն գիրքը ներկայացնում է Շահնամէի ամբողջական ուսումնասիրութեան առաջին մասը, որ նուիրուած է վէպի առասպելական շրջանին։ Երկրորդ մասը կը կազմէ Շահնամէի պատմական բաժնի ուսումնասիրութիւնը, որ տարբերւում է սոյն երկասիրութիւնից ինչպէս իր նիւթով, այնպէս և ուսումնասիրութեան մեթոդներով։

Թէհրանի Հայ Ակումբի Վարչութիւնը շնորհ է արել ինձ, վերցնելով իր վրայ գրքիս տպագրութեան ձեռներեցութիւնը, որի համար խորին շնորհակալութիւն եմ յայտնում յարգելի Վարչութեան։

Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Ամենախոշոր դժուարութիւնը, որի առաջ կանգ է առնում պարսիկ գրականութեան և լեզուի ուսումնասիրողը, պարսկերէնի արտասանութեան ճիշտ արտայայտելու հարցն է հայերէն գրերի օգնութեամբ։

Հարցին գիտական հիմունք տալու, բայց միևնոյն ժամանակ տեղական տպագրական պայմաններին յարմարուելու դիտմամբ, ـَ -ի համար («զաբար») մենք ընտրեցինք շրջած ա (ɒ). այսպես مَرد մենք տառաշրջում ենք «մորդ» ձևով։ Այս հնչիւնի նշանակութիւնը մօտաւորապէս նոյնն է, ինչ որ a հնչիւնը անգլերէն bad («վատ») բառում։

ق գրի հնչիւնը, որ յիշեցնում է համապատասխան հնչիւնի արտասանութիւնը վրացերէն ծղալի բառի մէջ (որ նշանակում է «ջուր»), մենք տառաշրջում ենք լատինական q-ով, ինչպէս արդէն ընդունուած է գիտական հրատարակութիւններում. օր. دقیقی — Դոqիqի։

ع գիրը տառադարձուած է ՙ նշանով. օր. معلم — մոՙալլէմ։

ـِ («զիր») միշտ արտայայտւում է է-ով, իսկ ـُ («փիշ») օ-ով կամ ո-ով։

# ՖԵՐԴՈՎՍՈՒ ԴԱՐԸ

Պարսիկ գրականութեան ուսումնասիրողը իրեն զգում է այն անձի դերում, որ կուժն առած գնում է ծովը ջուր բերելու. այնքան մեծ և փարթամ է այդ գրականութիւնը և այնքան չնչին ուսումնասիրողի անհատական ուժերը։

Պարսկական գրականութիւն ասելով սովորաբար հասկացւում է իսլամական շրջանի պարսիկ գրականութիւնը, որ սովորաբար կոչւում է նոր պարսկական և որի սկիզբը վուլգար ըմբռնումով դրել է Ֆերդովսին։ Սակայն բացի այն, որ մուսուլմանական շրջանից առաջ գոյութիւն է ունեցել մէկի փոխարէն ամբողջ երեք գրականութիւն, այլ և մուսուլմանական շրջանում, Ֆերդովսուց առաջ, եղել է հոյակապ մուսուլմանական գրականութիւն։

Աւելին. Գէօթէն այսպէս է արտայայտւում պարսիկ բանաստեղծների մասին. «Ասում են, որ պարսիկները իրենց բոլոր բանաստեղծների միջից, հինգ դարերի ընթացքում, այդ կոչումին արժանի են համարել եօթ հոգու. բայց և միւսների մէջ, որ մերժուած են նրանց կողմից, շատերն ինձնից աւելի պատրիէն են»։ Ի հարկէ, այս խոշոր չափազանցութիւն է «բանաստեղծների իշխանի» կողմից. բայց այդ արտայայտում է այն անսահման յարգանքը, որ նա տածում էր դէպի

պարսիկ գրականութիւնը։

Եւ մենք գտնում ենք, որ Գöթէի ակնարկած մեծ բանաստեղծներից ոմանք ծաղկում էին նախաֆերդուսեան շրջանում, առնուազն երկուսը՝ Ռուդաքին և Դոզիզին և մի քանիսը ժամանակակից էին Ֆերդուսուն։

Նոր պարսկական գրականութիւնը, որ կրթնել է Իսլամին, իր արմատները թաղել է խորը, ազգային աւանդական անցեալի ծալքերում և սնւում է նրա հիւթով։ Այս արտասովոր միացումով է, որ առաջացել է այն պաղարիկ գրականութիւնը, որ իրաւամբ Արևելքի գրականութիւնների թագուհու համբաւն ունի։ Այս է պատճառը, որ Ֆերդուսու ուսումնասիրողին անհրաժեշտ է ծանօթանալ նաև գոնէ նախաֆերդուսեան իսլամական պարսիկ գրականութեան հետ։

Խալիֆ Օմարի և պարսից երիտասարդ թագաւոր Յազկերտ կամ Եազդգերդ Գ-ի ժամանակ, 637 թւին, տեղի ունեցաւ մի ահեղ պատահար. Արաբիայի անապատի զաւակները, թւով մօտ 7-8000 հոգի, առաջանալով Միջագետքում իրենց Սա՛դ էբնէ Աբի Վագգաս զօրապետի առաջնորդութեամբ, Զադէսիէ քաղաքի մօտ (Քուֆայի շրջակայքում, Միջագետքում) հանդիպեցին պարսից 30,000-անոց բանակին, որի առաջնորդն էր նշանաւոր զօրապետի հռչակ վայելող Ռոստամ Ֆառուխզադ. տեղի ունեցաւ ահեղ ճակատամարտ, որի մէջ Ռոստամն ընկաւ և պարսիկների ոյժը խորտակւեց։ Պարսիկները կորցրին Միջագետքը իրենց Տիզբոն մայրաքաղաքով։

Քիչ անցած, 642 թ. տեղի ունեցաւ Նըհաւենդի ճակատամարտը, որտեղ պարտուեց ինքը Յազկեր-



տը և փախուստ տուեց երկրի արևելեան սահմանները և 651 թւին ընկաւ Մերվում անյայտ մարդասպանի ձեռքից։ Պարսկաստանի ղեկն անցաւ արաբների ձեռքը։

Մահմեդականութիւնը ընդունուեց Պարսկաստանում մեծ արագութեամբ և յաղթականօրէն. շնորհիւ կրօնի՝ լեզուն մուտք գործեց հասարակութեան բոլոր խաւերի մէջ և դուրս մղեց փոհլուի (պահլաւական) գրութիւնը, շնորհելով պարսիկներին արաբական այբուբենը։ Պարսիկները արտասովոր ճարպկութեամբ կարողացան իւրացնել արաբերէնը և անցնելով արաբ գիտնականների, նոյնիսկ գեղարուեստագէտների առաջին շարքերը, ճոխացրին նրանց գիտութիւնն ու գրականութիւնը։ Նրանք բնականաբար պէտք է հիմնաւոր կերպով ծանօթանային արաբական տաղաչափութեան հետ, որ հետագայում այնքան պէտք եկաւ զարդարելու պարսիկ բանաստեղծութիւնը միանգամայն հարազատ չափերով։

Միւս կողմից Օմայեան ազգայնական տիրապետութեան տակ պարսիկների մէջ չէր կարող հանգչել ազգային ոգին, որ թարմ էր մնում մանաւանդ շնորհիւ ազգային աւանդութիւնների և վիպական պատմուածքների և մերթ ընդ մերթ պոռթկում էր կրօնական աղանդների զգեստի տակ։ Սկզբում պարսիկները յարեցին շիա աղանդին և շուտով ներկայացրին այնպիսի պատկառելի ոյժ, որ նուաճեցին (750 թ.) Օմայեան խալիֆայական գահը Աբբասիդների համար։ Իսկ հետագայում, հովանաւորուելով աբբասիդ ալ Մա՛մուն խալիֆայից, որ Հարուն ալ-Ռաշիդի որդին էր պարսիկ մօրից, նրանք իրենց փայլուն ներկայացուցիչներով հարստացրին Մօ՛թազիլա կամ Զադարիէ հռչա-

կաւոր աղանդի (և այլ աղանդների) շարքերը, ամէն տեղ իրենց հետ հրապարակ բերելով իրենց ազգային որբացած ոգին և ապրումները։

Վերոյիշեալ բոլոր հանգամանքները, ինչպէս և Իսպանիայում, Սիցիլիայում և Հիւսիսային Աֆրիկայում խալիֆայութիւնից անջատուած նոր հարստութիւնների օրինակը սպասում էին քաղաքական մի խըթանի, որ շուտով երևան եկաւ խալիֆայութեան թուլութեան շրջանում IX դարի ա. կէսից սկսած։ Այդ խթանը Պարսկաստանի քաղաքական ազատագրութեան փորձերն էին, յար և նման հայկական իշխանական փորձերին (Բագրատունեաց, Արծրունեաց և Սիւնեաց)։

Առաջին ինքնուրոյն պարսկական իշխանութիւնը, որ ստեղծուեց Պարսկաստանում արաբացոց իշխանութեան օրով, Թահէրեանների կամ Թահէրիդների հարստութիւնն էր, որի հիմնադիրն էր Մա՛մունի կողմից 821 թ. Խորասանի կուսակալ նշանակուած Թահէր Էբնէ Հուսէյն զօրավարը, որ իբր թէ ծագում էր Ռուստամի ցեղից։ Այդ հարստութիւնը 52 տարի կեանք ունեցաւ միայն (821—873)։ Հիմնադիրը՝ Թահէր, արգելեց խոթբէյի (խոթբէ—մաղթանք) ժամանակ յիշատակել խալիֆայի անունը և հեռանալ և նոյն օրը մեռաւ. նրա ժառանգների ժամանակ խալիֆան յիշատակւում էր։ Նրանք տիրեցին բացի Խորասանից նաև Մաւերաննահրին (Տրանսօքսանիա) և հզօր տիրապետողների համբաւ ունէին, մանաւանդ Աբդալլահ Էբնէ Թահէր, որ պաշտպան էր երկրագործների։

Թահէրիդներից յետոյ երևան եկան Սոֆֆարեանները կամ Սոֆֆարիդները (867—903), որոնք ծագում էին Եա՛գուբ Էբնէ Լէյսից, որ արհեստով պղ-



ղնձագործ էր (սոֆֆար), իսկ նրա եղբայրը՝ Ամր Էբնէ Լէյս՝ չարւադար։ Եա՛գուբը հրոսակ ունէր և կռւում էր խարէջիների դէմ Սիստանում, որին և շուտով տիրացաւ։ Նա շուտով նուաճեց Հերաթը, Քերմանը, նոյնիսկ Ֆարսը։ Ապա նա տիրեց Բալխին և 873 թ. յարձակուեց Նիշապուրի վրայ և նուաճեց Խորասանը։ Ապա 875 թ. արշաւեց Բաղդադի վրայ, բայց Տիգրիսի ափին հանդիպեց խալիֆի եղբօրը՝ Մուվաֆֆաքին և խորտակուեց և մինչև մահը (879) հազիւ իր զօրութիւնը վերականգնեց։ Նրան յաջորդեց եղբայրը՝ Ամր (879—900)։ Սոֆֆարիդների անկումը առաջացաւ այն ընդհարումից, որ տեղի ունեցաւ Սամանեանների հետ։

Սոֆֆարիդներին յաջորդեցին այդ Սամանեանները կամ Սամանիդները, որոնք իբր թէ ծագում էին Խոսրով Բ-ի հակառակորդ հռչակաւոր Բահրամ Չուբինից և որոնց իշխանութիւնն աւելի երկարատև և արգասաւոր եղաւ (124 տարի՝ 875—999)։

Սկսելով իրենց քաղաքական գործունէութիւնը Սամարղանդի շրջանից Մաւերաննահրում, նրանք շուտով իրենց ենթարկեցին Բուխարան, որ խլեցին Սոֆֆարիդներից, ապա Սիստանը, նոյնիսկ Թաբարիստանը (Մազանդարանը)։ Սամանիդները ճոխացրին իրենց երկիրը կուլտուրական ձեռնարկներով, զարկ տուին ճարտարարուեստին և առևտրին, յարաբերութիւններ ստեղծելով ռուսների և չինացիների հետ։ Սամանեան գործարաններում արտադրւում էր թուղթը և Սամարղանդում գոյութիւն ունէր հռչակաւոր գրադարան, որտեղ հրաւիրուել և աշխատել է ժամանակի ամենամեծ գիտնականը՝ Իբն Սինա (Աւիսեննա) և թողել է մեզ այդ ճոխ գրադարանի նկարագրութիւնը։

Այստեղ էին հաւաքուած գրականագէտներ, պոէտներ, և այստեղ էր ծաղկում նախաֆէրդովսեան շքեղ գրականութիւնը, ինչպէս և բնական գիտութիւնները ու յունական փիլիսոփայութիւնը, որ այն ժամանակ արգելուած էր ուղղափառ մահմեդականութեան կողմից։

Սամանիդների մէջ աչքի ընկաւ Նասր Ա.-ի եղբայրը Իսմոյիլ (892-907)։ Ամր էբնէ Լէյսի յարձակումը սրա դէմ անյաջող անցաւ. Բալխի ճակատամարտում 910 թ. նա գերի բռնուեց և Խորասանն ընկաւ Իսմոյիլի ձեռքը։ Ապա Ամրի թոռան ժամանակ Իսմոյիլը տիրեց և Սէջէստանին (Սիստանին)։ Թոխարեստանը ևս գրաւուել էր 900 թւին։ Այս ընդարձակ երկիրը կառավարւում էր վասալների ձեռքով, որոնցից ամենից նշանաւորն էր Խիվայի (Խարազմի) տիրապետը։

Սամանիդները համբերատար վերաբերմունք ունէին դէպի շիա աղանդը. Նասր Բ. ինքը տարուեց այդ աղանդով և հրաժարուեց գահից յօգուտ որդու՝ Նուհ Ա.-ի և տեղի ունեցաւ շիայական կոտորած. իսկ նրա նշանաւոր վեզիր Ջէյհանին դուալիստ զրադաստրեան էր։ Սամանիդների պետութեան անկման գըլխաւոր պատճառ հանդիսացան թուրք ստրուկները, որոնցից Ալփթագինը փախաւ Աֆղանիստան և հիմնեց Ղազնուն, որ կորստաբեր եղաւ Սամանեանների համար։

10-րդ դարում Պարսկաստանում բացի Սամանիդներից զօրացան նոյնպէս Զիարիդներն ու Բուվայհեանները կամ Բուիդները։ Զիարիդների մայրաքաղաքն էր Գորգան, որ ամենից շքեղն էր մայրաքաղաքների մէջ, իսկ տիրապետութեան սահմանները



տարածւում էին մինչև Իսպահան և Համադանի վրայով մինչև Միջագետք։ Զիարիդները ենթարկուեցին Սամանիդներին, իսկ հետագայում որպէս վասալներ երբեմն բուիդներին, երբեմն ղազնուիներին, իրենց գոյութիւնը պահպանեցին մինչև սելջուկեանների ժամանակները և իրենց վախճանը գտան տասասինների (Իսմոյիլիտների) ձեռքով։

Բուվահեանները կամ բուիդները ծագում էին Բուվայից, որ կուսակալ էր հարաւում և նրա երեք որդիներից, որոնք չենթարկուեցին Զիարիդներին և 945 թ. մտնելով Բաղդադ, զրկեցին խալիֆին աշխարհական իշխանութիւնից։ Նրանց մայրաքաղաքն էր Շիրազ. նրանց պետութիւնը կազմուած էր երեք աւատական իշխանութիւններից՝ 1) Ֆարս, Միջագետք, 2) Իրաք, Ահվազ, Քերման, 3) Ռէյ, Համադան, Իսպահան, և նրանց ենթարկւում էին Սինդից (Հնդկաստանում) մինչև Օման և հիւսիսային Արաբիա։ Նրանք թէպէտ գերիշխող էին խալիֆի համեմատութեամբ, բայց իրենց նրա վասալներն էին համարում։ Շիրազը բուիդների ժամանակ շքեղ քաղաք էր, պալատը բաղկացած էր 360 սենեակից և ունէր փառաւոր գրադարան, որ մրցակիցն էր Սամանեան գրադարանի։ Այստեղ գրքերը դարակների վրայ էին դասաւորուած, մինչդեռ Սամանեան գրադարանում սնդուկների մէջ էին։ Բուիդների իշխանութիւնը տևեց 932-1051 թ., երբ նրանք գտան իրենց վախճանը Ղազնաւիների և ապա Սելջուկների ճնշման տակ։

Սրանցից զատ գոյութիւն ունէին դարձեալ մի քանի մանր իշխանութիւններ։

Շուտով ընկան այս բոլոր պետութիւնները և

սուլթան Մոհմուդ Ղազնաւին, որ սելջուկեան ծագումից մի թուրք էր, զօրանալով վերջ տուեց Սամանիդներին և նուաճեց Մարաստանը, Ղիպտանէստանը և հիւսիսային Հնդկաստանը և մինչեւ զօր թագաւորը գարձաւ։ Այս այն սուլթան Մոհմուդն է, որի վառքը երգում էին բազմաթիւ պօէտներ և որի անունը անքակտելի կերպով կապուած է Ֆէրդովսու անուան հետ։

Ինչպէս է ծագել բանաստեղծութիւնը, այս հարցին մի գողտրիկ պատասխան է տալիս պարսկական բանաստեղծական աւանդութիւնը։ Բոհրամ Գուրի*) և նրա սիրեցեալ Դիլարամի սրտերը համատակ էին զարկում և նրանց սիրոյ զեղգեղանքը յորդում էր ոսկեմատեան տողերով, ունենալով յանգեր, որոնք արտայայտում էին միրթ ընդ միրթ լուսով արձագանքը։ Այս աքանչելի աւանդութիւնը, որ բանաստեղծութիւնը դարձնում է սիրող սրտերի բարեխիւն և նախագծում է պարսիկ բանաստեղծութեան հետագայ ուղին, պարսկաստան պօէզիայի սկզբնաւորութիւնը այսպիսով յետ է մղում մինչև Սասանեան շրջան, որտեղ Յոսրով Փարվիզի օրով ծաղկում էր մի նշանաւոր դպրոց բարբոդ անունով։

## ՖԷՐԴՈՎՍՒ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Նոր (մահմեդական) շրջանում բանաստեղծական դրականութեան փորձեր եղան Թ. դարի առաջին կէսից՝ Թահէրիդների և Սաֆֆարիդների տիրապետութեան օրով, թերևս աւելի վաղ։ Պարսկական թագաւորների մէջ սուլթան Մահմուդ Ղազնաւին, որ սելջուկեան ծագումից մի թուրք էր, զօրանալով վերջ տուեց Սամանիդներին և նուաճեց Մարաստանը, Ղիպտանէստանը և հիւսիսային Հնդկաստանը և մինչեւ զօր թագաւորը գարձաւ։ Այս այն սուլթան Մահմուդն է, որի վառքը երգում էին բազմաթիւ պօէտներ և որի անունը անքակտելի կերպով կապուած է Ֆէրդովսու անուան հետ։

Ինչպէս է ծագել բանաստեղծութիւնը, այս հարցին մի գողտրիկ պատասխան է տալիս պարսկական բանաստեղծական աւանդութիւնը։ Բոհրամ Գուրի*) և նրա սիրեցեալ Դիլարամի սրտերը համատակ էին զարկում և նրանց սիրոյ զեղգեղանքը յորդում էր ոսկեմատեան տողերով, ունենալով յանգեր, որոնք արտայայտում էին միրթ ընդ միրթ լուսով արձագանքը։ Այս աքանչելի աւանդութիւնը, որ բանաստեղծութիւնը դարձնում է սիրող սրտերի բարեխիւն և նախագծում է պարսիկ բանաստեղծութեան հետագայ ուղին, պարսկաստան պօէզիայի սկզբնաւորութիւնը այսպիսով յետ է մղում մինչև Սասանեան շրջան, որտեղ Յոսրով Փարվիզի օրով ծաղկում էր մի նշանաւոր դպրոց բարբոդ անունով։

*) Բոհրամ (վահրամ կամ վռամ) ե., որ Գուր, այսինքն գիւտ (վայրի էշ) էր կոչւում այդ կենդանիների որսը սիրելու պատճառով, նա մեր պատմութեան մէջ յայտնի Յազկերտ Բ-ի հայրն էր և թագաւորում էր 420—438 թ.։



բէնեռում (անթոլոգիաներ — բանաստեղծութիւնների ժողովածուներ) պահուած են զանազան հատուածներ նախնական բանաստեղծների, որոնցից որպէս առաջնութեան մրցակիցներ յիշուած են Ղբբաս Մերվեցին, Հոնդալա, Ղբու Սալիք Գորգանի և այլն։ Սրանցից ո՞րին պէտք է տալ նոր պարսկական առաջին բանաստեղծի պատիւը. հաւանականաբար ոչ մէկին, նրանցից մնացած հատուածները զգալի զարդացման նշաններ ունեն։ Իսկ ինչ վերաբերում է Ղբբաս Մերվեցու (†815/16 թ.) հատուածին*), որ նա ձօնել է Թագաժառանգ մու'թազելիտ ալ Մոմունին, վերջինիս Մերվ այցելելու առթիւ, պէտք է նկատել, որ հատուածի վաւերականութիւնը թէպէտ ընդունուած է էթէյի կողմից, բայց ունի և զօրեղ բացատողներ, ինչպէս Բիրերշտէյն կազմիրսկի, Բրաուն և ուրիշները և ուրեմն վիճելի է։ Ցանկանայն դէպս ահա այդ հատուածը հայերէն թարգմանութեամբ։

Դու, որ գագաթդ է հասել մինչ բևեռը երկնային
Եւ քո առատ ձեռքերը կարկառել ես աշխարհին,
Ինչպէս աչքերին բիբը՝ յարմար ես խալիֆութեան
Կրօնին անհրաժեշտ ես զերթ զոյգ աչքերը դէմքին։
Ինձնից առաջ այս կարգով երգեր ոչ ոք չի երգել,
Երբէք այս տեսակ տողեր յատուկ չեն պարսկերէնին։

Բայց ես երգըս հիւսեցի լոկ որպէսզի մեր լեզուն
Քո ճոխ գովքից ընդունի լրևն զարդեր թանկագին։

*) Այս հատուածը շնորհիւ իր բովանդակութեան ամենից շատ յաւակնութիւն է ունեցել առաջին բանաստեղծութիւնը համարուելու։

Ահա և մի հատուած Հանզալա Բադղիսեցուց, որ արդէն ժամանակակից է Սոֆֆարիդների։

Եարըս Թէպէտ կըրակին սպանդ*) է նետում մշտական,
Այդ լոկ ձևի համար է, որ վատ աչք չառնի նրան։
Սպանդն ու բուրվառը եարիս պէտք չեն երբէք,
քանի որ
Կըրակ է դէմքը նորա, խալն էլ սպանդի է նման։

Այս տոտնաւորը աչքի է ընկնում իր պարզութեամբ, անմիջականութեամբ և Թարմութեամբ, բայց դեռ հեռու է նիւթի մշակման արտաքին ձևերի կատարելութիւնից, որի հնարաւորութիւնը ընձեռում էր արաբական օրինակների պօէզիան։ Նոյնը վերաբերում է և Աբու Սալիք Գորգանիին։

Տաղաչափական ձևերի բազմակողմանի մշակում և առհասարակ գրականութեան ուժեղ զարգացում չէր կարող տեղի ունենալ ոչ Թահէրիդների ժամանակ, որոնք խորապէս փարուած էին մահմեդականութեան և ոչ բիրտ Սոֆֆարիդների օրով։ Դրա համար պահանջւում էին աւելի նպաստաւոր պայմաններ, որոնք լիուլի ստեղծուեցին Սամանիդների ժամանակ։ Այդ լուսամիտ իշխանաւորների օրով Պարսկաստանում ստեղծուեց և խօշորագոյն չափերի հասաւ մեկենասութիւնը և ամէն կողմից սամանիդների արքունիք սկսեցին դիմել բանաստեղծներ, գրականագէտներ և գիտնականներ, որոնք բոլորն էլ հովանաւորւում և առատօրէն վարձատրւում էին։ Այստեղ մենք գտնում ենք Աբու Շաքուր Բալխեցուն, Աբու Աբդուլլահ Ջաֆար Ռուդագիին, Աբու Հասան Շահիդ Բալխեցուն և ուրիշներին, որոնք

*) Բոյս, որի սերմերը ծխում են աչքով տուածի տապն առնելու համար։



լծուած գրականութեան նորանոր ձևեր ստեղծելու գործին, առատապէս օգտագործում են արաբական տաղաչափութիւնը և յարմարեցնում պարսիկ լեզուի պահանջներին։ Սրանց միացեալ ուժերով մշակւում և կիրառւում են պարսկական բանաստեղծութեան նորանոր չափեր արաբական հիման վրայ*) և ստեղծւում է ինքնուրոյն քառեակը կամ ռուբա՛յին։

Սակայն մինչդեռ սրանց երկերում տաղաչափական ձևերը դեռ նախատիպից հեռու չեն գնացել, իրենց երկերը աչքի են ընկնում Թարմութեամբ, բնական կառուցուածքով և բազմազանութեամբ և ընդհանրապէս յիշեցնում են մեր Միջնադարեան բանաստեղծութեան ծիլերը։

Որպէս նմոյշ այսօրինակ քերթուածների բերում ենք երկու հատուած Աբու Հասան Շահիդ Բալխեցուց, որ դեռ Դարմստետերի դիտողութեամբ ժամանակի պեսսիմիստն է և Օմար Խայեամի ու Բաբա Թահէրի նախորդը։

Գիտութիւնն ու կայքը նարգէս են ու վարդ,
Իրարից հեռու են փթթում հանապազ։
Ով գիտութիւն ունի, նա զուրկ է կայքից,
Իսկ ով կայք ունի, գիտութիւնն է նուազ։

*) Ղազալ—օդա, իր երեք տեսակով՝ սիրերգ, գիներգ և կրօնական հիմն. Զասիդէ՝ ներբող, կրկնակի ճիւղաւորութեամբ՝ Սատիր (հօջվ) և Եղերերգ (մորսիյէ), Մասնաւի երեք ուղղութեամբ՝ պատմավիպական, ռոմանական վիպական և դիդակտիկական և Քէթ՛ա կամ հատած, միայանգ բանաստեղծութիւն։ Այս չափերից ռուբայի (քառեակի), ղազալի և զասիդէի մասին աւելի մանրամասն տես իմ «Բաբա Թահէր Օրիան Համադանի», ներածութիւն էջ 18—23։

Վիշտը կրակի պէս թէ ծուխ ունենար,
Աշխարհին մռայլ կը պատէր բարդ ի բարդ.
Այս աշխարհը եթէ շրջես ծայրէ ծայր,
Մի գիտուն չես գտնի դու ուրախ զուարթ*)։

Ահա այսպիսի հիմքերի վրայ բարձրացաւ այն բանաստեղծը, որին վիճակուած էր լինել ժամանակակիցներից ամենից մեծը և նոր պարսկական գրականութեան հայրը։ Այս բանաստեղծ Ռուդաքին էր — Հաքիմ Ֆարիդ օդդին Աբու Հասան Մոհամմեդ Աբդուլլահը (+954 թ.), Սամանիդ Նասր Բ-ի (914—943) պալատական բանաստեղծը, որ երևան է գալիս արդէն իր մեծափառ շքախմբով, որի մէջ մտնում են ժամանակի բոլոր տաղանդաւոր բանաստեղծները։ Այսպէս յիշւում են ծերունի բանաստեղծ Աբու Աբբաս Զէնջի Բոխարացի. նա վարպետօրէն ողբում է մի եղերերգում արգացեալ Նասր Բ-ին, բայց և ամէն տողի մէջ ջատագովում է նրա յաջորդ Նուհ Ա-ին և այդպիսով իրականացնում է ֆրանսիական le roi est mort, vive le roi սկզբունքը։ Աբու Թահէր Խոսրովանի, Ռուդաքիի հակառակորդը, յոռետես բանաստեղծ, որի խօսքերը կրկնում է Ֆերդուսին (دریغا جوانی دریغا جوانی — «ափսոս երիտասարդութիւնը, ափսոս երիտասարդութիւնը»), Աբու Շու՛այբ Հէրաթցի, որ գովում է քրիստոնեայ աղջկայ գեղեցկութիւնը, Աբու Աբդուլլահ Մու՛րաֆի Բալխեցին, որ ներբողում է Նուհի որդի Աբդուլ Մալէք Ա-ին (954—961) ևն, որոնց թւում և մի բանաստեղծուհի՝ Ռաբի՛է Բալխեցի, արաբական ծագումից, Զէյն օլ Արաբ (արաբների զարդ) կոչուած։

*) Ամէն տեղ բնագրի չափը պահուած է։



Ռուդաքին պարսկական բանաստեղծական աւանդութիւնը ներկայացնում է երկու աչքով կոյր և նա դրանով յիշեցնում է յունաց գրականութեան հիմնադրին՝ Հոմերոսին։ Նա առաջինն է, որ ունեցել է քերթուածների դիւան, այսինքն ընդհանուր ժողովածու։

Նրա մտքի բեղմնաւորութեան մասին գաղափար է տալիս մեզ աւանդութիւնը յանձին Ռաշիդի Սամարղանդիի, որ նրան վերագրում է մէկ միլիոն երեք հարիւր հազար տող, ամփոփուած հարիւր հատորների մէջ*), որից պահուած են մի քանի հազար տող միայն, որի մի մասը սակայն յատկացւում է հետագայ բանաստեղծ Ղաթրանին։ Այսպիսի բեղմնաւորութեան և գնահատութեան արդիւնքն էր պօէտի հարստութիւնը, որ հսկայական չափերի էր հասնում։ Նա ունէր 200 ստրուկ և 100 ուղտ կրում էր նրա ունեցուածքը։ Սակայն իր կեանքի վերջում Ռուդաքին զրկուեց իր փառքից և ընկաւ աղքատութեան մէջ։

Ռուդաքին քնարերգու է և նրա քնարը գիտէ ներբողներ, գիներգ ու սիրերգ և յոռետես քերթուածներ և ձգտում է, ինչպէս նկատում է Էթէն**), իսլամի անշարժ դիմքը ներդաշնակել արիական ազատ աշխարհահայեացքի հետ և ստեղծել որոշ պանթէիստական ամբողջութիւն։

Ռուդաքին օտար չէ ճարտասանական ձևերին, բայց նրանք նրա մօտ չունէին հետագայ բանաստեղծների չափազանցութիւնները, որով նա պահպանում է իր քնարի կուսութիւնը, հնչեցնելով միայն պարզ և

*) Նոյնը կրկնում է և Ջամին։
**) Grundriss der Iranischen Philelogie II Bd., S. 220.

բնական քնքոյշ ակկորդներ։

Բացի քնարական բանաստեղծութիւններից Ռուդաքին պարսկերէնի է վերածել մանաւանդ Բիլփայի հռչակաւոր Քալիլա և Դիմնա առակագիրքը, որ նախապէս Խոսրով Անուշիրվանի ժամանակ (531—579) փոխուած լեզուով է թարգմանուել և ապա արաբերէնի վերածուել Աբդուլա էբն Մոգաֆֆայի ձեռքով 932 թ.։ Ռուդաքիի այս թարգմանութեան անյայտանալը, ինչպէս իրաւամբ նկատում է Էթէն, Անգարձ կորուստ է ոչ միայն պարսիկ, այլև համաշխարհային գրականութեան համար։ Օնսորին վկայում է, որ այդ աշխատութեան համար Ռուդաքին ստացել է 40,000 դէրհամ (դրամ.— դէրհամ կամ դէրամ=մօտաւորապէս մի ֆրանքի նախկին արժողութեամբ)։

Ռուդաքին յայտնի էր նաև որպէս նշանաւոր երգիչ, որ վարպետօրէն նւագում էր տաւիղ և վին և մեծապէս յարգուած էր իր հովանաւորող Նասր Բ-ի կողմից։ Վերջինիս է նուիրուած Ռուդաքու այն հռչակաւոր երգը, որով նա հարկադրեց թագաւորին հրաժարուել Հերաթի հմայքից և վերադառնալ իր արհամարհուած հայրենիքը՝ Բոխարա։ Սաորև զետեղուած են ինչպէս այդ երգը, այնպէս և երեք այլ ոտանաւորներ Ռուդաքիից, որոնցից մէկը ծերութեան դառն օրերին նուիրուած, միւսները՝ անակրէոնտական։

Զոսիդէ Ռուդաքիի.

Մուլիան*) գետի ջրի փրփուրն է գալիս
Ջոբս կողմը սիրած եարի բոյրն է գալիս.
Ամույի**) աւազը և անհաղթ ճամբան

*) Մուլիան գետ է Հորասանում։

**) Ամու կամ Ամույ—Ամուդարիա մեծ գետն է։



Մեռածի պէս ոտիս տակ խուռն է գալիս.
Ջէյհունի*) ջուրը եարիս զուարթ դէմքից
Մինչև սիպտակ նժոյգիս փորն է գալիս։
Ո՛վ Բոխարա, ուրախ կաց, երկար ապրիր
Ղմիրն**) ուրախ դէպ քեզ յախուռն է գալիս։
Ղմիրը լուսին է, Բոխարան երկինք,
Լուսինը դէպ երկնքի դուռն է գալիս.
Ղմիրը նոճի է, Բոխարան պարտէզ,
Նոճին դէպ պարտէզի վառ բոյրն է գալիս։

Ղազալ Ռուդաքիի.

Զարդուեցան, թափուեցին որքան ատամներ կային
Բերնիս. ոչ թէ ատամներ, լուսաւոր ջահեր էին։
Սիպտակ արծաթի շարան, մարգարիտներ ու մարջան
Վաղորդեան աստղ, անձրևի ցայտուն կաթիլներ էին։
Ջը գիտես, ով իմ արև չնաշխարհիկ սևահեր,
Թէ իմ գործերն անցեալում ինչ շքեղ գործեր էին։
Փայլուն գինին, գեղ դէմքը, չքնաղ տեսքը սիրունի,
Ուրիշին թանկ՝ ինձ համար միշտ աժան բաներ էին։
Ջեռքս անգադար բաւբաւէս գանգուրներ էր գուրգուրում,
Իմ ականջին միշտ հնչող ճարտասան խօսքեր էին։
Գիտեմ, թէ ինչ նազանքով ճեմում էի մարգերում,
Երգերս զուարթ, կարծես սոխակի երգեր էին։
Ոչ ընտանիք և ոչ կին ու զաւակներ, միշտ հանգիստ,
Այդ բոլորն ինձ համար աւելորդ բաներ էին։
Գինին առատ, ես առատ փողեր էի շպրտում
Շրջապատս գեղանի գեղ թրքուհիներ էին։

*) Ջէյհուն—Ամու Դարիայի արաբական անունը։

**) Ղմիր—եմիր, թագաւոր։

Այն դարն անցաւ, երբ երգերս աշխարհ էին թնդացնում,
Խորասան դղրդացնողն ամբողջ իմ երգերն էին։

*Անակրէոնտական երգիր Ռուդոքիի.*

Ուրախ ապրիր հեռը կոյսին գեղանի
Կեանքը բարուրանք է, դատարկ ու քամի.
Ինչ բախտն է բերել, քեզ թող չուրախացնէ,
Ու անցածի համար դու դարդ մի անի։
Ես ու այն մուշկ-յասմիկ խոպոպը բուրիչ
Ես ու այն հուրի զարմ պատկերը լուսնի։
Կեանքում ուտող ու բաշխողն է երջանիկ,
Դժբախտ է ով բաշխած ու կերած չունի.
Այս աշխարհը միայն քամի է ու ամպ
Գինի բեր, ինչ լինելու է, թող լինի։

Դու, որ առաւօտում եւ թաղուած քո վշտում
Ու շարունակ գաղտնի արցունք ես թափում.
Գնաց նա, որ գնաց, եկաւ, որ եկաւ,
Եղաւ, ինչ որ եղաւ, էլ հէք ես տրտում։
Մի արբեցիր, արբեցդ չի լսում նա,
Մի ողբա, ողբալուդ նա ուշ չի դնում.
Մինչ ահեղ դատաստան թէկուզ դու ողբաս,
Ողբով գնացածին ոնց ես յետ բերում.
Հարթ կուզես դարձնել աշխարհըն ամէն,
Կընդունի՞ աշխարհը հաւասարութիւն,
Ծանր վշտում միայն երևան կը գան
Իմաստութիւն և փառք ու հզօրութիւն։

Ռուդաքիի կրասեր ժամանակակիցն էր Քասային, որ փոթորկալից երիտասարդութիւնից յետոյ հրաժարուեց աշխարհային վայելքներից և սկսեց ողբալ անցեալ փայլուն կեանքը։ Նրանից մնացել է մի



սրամիտ քնքոյշ քառեակ նուիրուած վարդին, որի թարգմանութիւնը հետևեալն է։

Վարդերը սիրայօժար պարգև են դրախտին.
Մարդիկ ազնւանում են շնորհով զեղ վարդին.
Ծաղկավաճառ, արծաթին վարդըդ ոնր ես տալիս,
Ի՞նչ կը շահես արծաթով վարդից դու թանկագին։

Ժ. դարի երկրորդ կէսում, հաւանականապէս Նուհ էրնէ Մոնսուրի ժամանակ (976—997) էր ծաղկում Դագիգի նշանաւոր բանաստեղծը*)։ Դագիգիի կեանքի մասին համարեա ոչինչ յայտնի չէ բացի ողբերգական մահից. յայտնի չէ նոյնիսկ իսկական անունը (Դագիգի նրա թեխալլուսն է—բանաստեղծական անունը). թերևս նրա քոնիէն**) ըղուռ Մոնսուր էր. յայտնի չէ նախնական ծննդավայրը. որպէս այդպիսին յիշւում են Թուսը, Բոխարան և Սամարղանդը. նա հաւանականապէս ղրաղաշտական էր. այդ կարելի է տեսնել սորվե բերած նրա հատուածից («Սիրտ իմ, ահա...») և այն հանգամանքից, որ նա իր վիպական քերթուածի կենտրոն դարձրել է Զրադաշտին։ Նա ուշնեցաւ հերոսական որոշում՝ Ֆէրդովսուց առաջ չափանի վերածել իրանական վէպը, բայց այդ նպատակը նա չը կարողացաւ իրագործել, որովհետև զոհ գնաց իր թուրք տարփածուի խանդին երիտասարդ հասա-

*) Այս շրջանը, սկսած Նուհի հօրից՝ Մոնսուր էմնէ Նուհից (961—976) թէպէտ քաղաքականապէս անյաջող, մշակոյթի տեսակէտից սակայն բարձր վերելքի շրջան է։

**) Անուանումն ուրիշ բառի օգնութեամբ, սովորաբար որբու (հայր) և էբն (որդի) կնի. օր. ըղուռ Բաքր, ըղուռ Թալեբ, էբն օլ (հայր) և էբն (որդի) կնի. օր՝

կում, թողնելով իրանական վէպից հազար տող, Նը-ւիրուած զրադաշտական կրօնի Իրանում տարածուելու հանգամանքներին, որ պահուած է Ֆէրդովսու Շահ-նամէում:

Դագիգիից մեզ հասել են և քնարական քեր-թուածներ, որոնք բուրում են իրենց թարմութեամբ և քնքշութեամբ: Ֆէրդովսին խիստ է արտայայտւում Դագիգիի մասին, բայց միևնոյն ժամանակ իր Շահնա-մէում պահել է նրա խոշոր հատուածն ամբողջովին. իսկ Օթբին, Ֆէրդովսու ժամանակակից և Սուլթան Մահ-մուդ Ղազնեւու պալատական պատմագիրը, անուանում է նրան մեծահռչակ բանաստեղծ և ասում է, որ Դա-գիգիից յետոյ Ֆառուխիի նման բանաստեղծ չի երե-ւացել:

Ահա նմոյշներ Դագիգիի քնարական քերթ-ւածներից.

Ղազալներ Դագիգիի

1.

Սիրտ իմ, ահա դցեց ամպը գարնային
Մայիսի խալաթը երկրի ուսերին:
Աշխարհն այնպէս է միգմացել, որ դաշտում
Վագրը խաղ է բռնել հետը սարայծին:
Գետինն արխնոտուած դիպակ է կարծես,
Օդը մուշկ է դարձել՝ բեհեզը հագին:
Ասես անապատում գինով ու մուշկով
Պատուէր ես թելադրում սիրածդ էակին:
Կուռքը*) դէմքը զմայլիչ յակինթ է կարել,
Մեհեանի հանդերձի գոյն ունի գինին:

*) Սիրունին:



Աշխարհը պճնել է ինչպէս սիրամարգ,
Մի կողմը խորթ ու բորթ, ողորկ է միւս դին:
Վարդից վարդաջրի բուրմունք է ծորում,
Ասես վարդի բոյրը խառնած է վարդին:
Դագիգին ընտրել է լոկ չորս յատկութիւն
Լաւ ու վատից, որ կայ երկրի երեսին.
Յակինթ շրթունք, ապա չոնգի*) հեծեծանք,
Զարդուշտի կրօնն ու կաս կարմիր գինին:

2.

Կայ տէրութիւն նուաճելու երկու ձև.
Մէկը բոսորագոյն, միւսը զաֆրանի**).
Մին՝ ոսկին է, դրոշմած արքայի անուամբ,
Միւսը՝ այն Ջրդեղուած սուրը Եոմանի***).
Ով բռնուած է տիրելու կուռ տենչերով,
Նա երկնային շարժում՝ ձիգ պիտի անի:
Լեզուն միշտ ճարտասան, ձեռքը մշտաբաց,
Սիրտը քինախնդիր, սակայն սիրով լի:
Թէ կայքը որս դառնայ, չի յափշտակիլ
Արծիւը սրընթաց, առիւծն անհելի.
Երկու բան կայ, որ կը նուաճի նրան—
Հնդկական սուսեր ու բրածոյ ոսկի:
Սրով է, որ պէտք է տիրանալ նրան,
Փողով կապել տոր, թէ հնար լինի:
Ով բախտ ունի և սուր ու փող, էլ պէտք չէ

*) Չոնգ—վաղեմի երաժշտական գործիք. քնարի մի տեսակն էր՝ ծուռ գլխով:

**) Զաֆրանի—շաֆրանի կամ շաֆրանի գոյն՝ դեղին:

***) Եոմանի—Եմենի,

Նրան նոճի հասակ, թիկունք քիանի*).
Ուսը է պետք ու առատութիւն, քաջութիւն
Բաղդը ձրի կայքեր չնորհ չի անի։

Վիպական կտորները, որոնք պահուած են Շահնամէում, շատ աւելի համեստ կառուցուածք ու արժանիք ունեն. ահա մի նմոյշ.

*Զրադաշտի երեսան գալը եւ Գուշթասպի**) ու Լոհրասպի**) նրա կրօնն ընդունելը*

Երբ երկար ժամանակ այնուհետ անցաւ,
Երկրի վերայ մի նոր ծառ երևեցաւ.
Գուշթասպի պալատից մինչև աշտարակ
Մի ծառ բունեց բազմաճիւղ, առատարմատ.
Տերևները խրատ, բարն***) խոհատութիւն,
Չի մեռնի, ով ունի այդքան մեծութիւն։
Մի սուրբ երևաց այդ ժամանակներում
Խնկամանը խնկով ու հալուէն ձեռում։
Ոարն օրհնուած էր, Զրադաշտ անուն,
Չարագործ Արհմին որ արեց նկուն.
Նա ասաց արքային. «Ես մարգարէ եմ,
Դէպի տիրոջ դահլիք քեզ կառաջնորդեմ.
Ասա մի խնկաման կրակ բերեց ցած,

*) Քիանի—արքայական, վայել Պարսկաստանի Քիան առասպելական հռչակաւոր հարստութեան։

**) Գուշթասպը Լոհրասպ թագաւորի որդին էր և հռչակաւոր փոհլևան Էսֆենդիարի հայրը. Լոհրասպը թագաւորեց Քէյ Խոսրովից յետոյ. բոլորն էլ առասպելական անձնաւորութիւններ են (տ. Շահնամէի բովանդակութիւնը)։ Գուշթասպ հնթադրաբար համապատասխանում է մեծ Դարեհի հայր Վիշթասպը, որին միանգամայն համապատասխանում է հնչաբանօրէն։

***) Բար—պտուղ։



«Դրախտից եմ բերել», արքային ասաց։
«Երկրի ստեղծողն ասաց դու այդ ընդունիր,
Եւ երկինք ու երկրին երիր ուշադիր.
Ես առանց հող ու ջուր եմ այդ ստեղծել,
Մարիկ տուր բոլորն ինչպէս եմ յարդարել.
Նայիր, այս բոլորը էլ ով կը ստեղծի
Բացի ինձնից, որ արարիչն եմ երկրի։
Արդ, երբ յայտնի է, որ այդ ես եմ կերտել,
Տիեզերքի հաստիչ պիտ ինձ անուանել։
Ուղիղ կրօնն առ իմ պատգամաբերից
Ճշմարտութեան ուղին սորվիր նրանից։
Տես ինչ կասէ նա քեզ, լսիր և ուշ դիր,
Գիտութիւնն ընտրիր, աշխարհն արհամարհիր։
Սորվիր սուրբ կրօնի վարդապետութիւն,
Առանց կրօնի արժէք չունի պետութիւն»։
Երբ բարի արքան այդ ամենը լսեց,
Կրօնը ճշմարիտ իսկոյն ընդունեց.
Այն ժամ աստուածային վառքը յայտնուեց
Վատ խոհների վատութիւնը տապալուեց.
Եւ կռապաշտութեան ուղին վերացաւ
Եւ աստուածպաշտութիւնն աճեց, զարգացաւ։
Շերեփք աստուածային լուսով լցուեցին
Ու սերմերը երենց ազատից սրբուեցին։
Եւ ազատն Գուշթասպ իր գահը բազմեց
Ու երկրի ամէն կողմ զօրքեր ուղարկեց.
Իրարանցման մէջ թագուեցին մովբեդներ
Եւ կերտուեցան մեհեաններում դմբէթներ։
Նախ նա Բորզին Միհր*) կրակը կանգնեց,
Եւ աւա թէ աշխարհում ինչ կարգ սահմանեց։

*) Բորզին Միհր հնագոյն հռչակուած աստուածաններից էր, ինչպէս և Աբուրֆոնբակը և Գուշասպը։

Բոլորին Մինը կրակն անծուխ էր շինուած,
Փայտով ու հալուէով չէր լուսավառուած.
Ապա այն մեհեանի դրան առաջին
Զարդուշտը*) մի կիպարիս անկեց գետին։
Անունը կիպարիսի գրած էր վրան.
«Ընդունիր, Գուշթասպ, այս կրօն արքայական»։
Անունը կիպարիսին նա բռնեց վկայ,
Որ այսպէս կարծարծի նոր կրօնը նա։
Երբ մի քանի տարի այնուհետ անցաւ,
Կիպարիսն արմատ ձգեց ու բարձրացաւ.
Եւ այդ ծառն այնքան մեծացաւ, որ նրան
Չէր ընդգրկի, եթէ բռնայիր, պարան։
Երբ ճղները վեր բարձրացան դէպ երկինք,
Այնտեղ կերտեց նա մի շքեղ արքունիք։
Քառասուն կանգուն լայնքը, նոյնքան
բարձրութիւն,
Կաւ ու ջրի չարեց նա գործածութիւն։
Մի պատշգամբ շինեց նա ոսկեյարդար
Պատերն ամբողջ արծաթ, յատակը՝ յամպար.
Այնտեղ նա նկարեց մեծն Ջամշիդին**),
Որ երկրպագում է լուսնին, արևին։
Կովագլուխ գուրզը ձեռքին Ֆէրէյդուն**)
Արքայի հրամանով այդտեղ կար կանգուն։
Բոլոր մեծերին նա ապա նկարեց
Եւ ինչ փարթամութիւն նա ի գործ դրեց։
Երբ այն շքեղ ոսկէ տունը զարդարեց,
Պատերը թանկագին քարերով պատեց.
Շուրջը ծածկեց երկաթով ամբողջովին,
Իր կայքը դարձրեց ու նստեց միջին։

*) Զարդուշտ կամ Զարթուշտ — Զրադաշտի անուան ներկայ ձևն է։
**) Տ. Շահնամէի բովանդակութիւնը.



Ուղարկեց պետութեան չորս կողմը պատգամ
Ասաց. «Սա է Բէշմար*) ծառը աննման.
«Դրախտից Աստուած է նրան ուղարկել
«Եւ ինձ նրա ձեռքով դրախտ հրաւիրել։
«Եւ արդ, ովքեր իմ այս խրատս կ՚անսան,
«Բէշմար կիպարիսի մօտ ոտով թող գան։
«Բոլորդ բռնեցէք Զարդուշտի ճամբան
«Երես շրջէք դուք կուռքերից չինական։
«Եւ գուրզով ու փառքով շահին Իրանի
«Փառաւորուէք դուք միշտ պատրաստ հրամանի։
«Նախնիքների օրէնքին մի անսացէք,
«Կիպարիսի ստուերի տակ հաւաքուեցէք։
«Դէպի գմբէթը դուք դարձէք մեհեանին
«Ականջ դրէք մարգարէի հրամանին։
«Երդւում եմ, չի տեսնի նա արքայութիւն,
«Ում անծանօթ է Զարթուշտի ուղղութիւն»։
Նրա պատգամը տարածուեց աշխարհում,
Մեծամեծաց, ազատանու շարքերում։
Թագակալներն ամէն նրա հրամանով
Ճամբայ ընկան Բէշմար կիպարիսի քով։
Թէ չը գիտես, ինչու Բէշմար նա կոչուեց
Գիտցիր, որ դրախտային նոյնպէս անուանեց։
Եւ պարտ է նրան դրախտային անուանել
Չի Բէշմարի պէս ծառ ոչ ոք չի տեսել։
Նա սրբավայր դարձաւ, դրախտի փոխուեց,
Եւ Զարթուշտը այնտեղ գևին շղթայեց։

Դաքիքիի այս և Շահնամէում եղած միւս հատուածները գրուած (և թարգմանուած) է մտնուելով և հնագոյնը կարող է համարուել, եթէ չը հաշուենք Ռուդաքիի «Քալիլա և Դիմնայի» թարգմանութիւնը։

*) Կիպարիսի անունն է։

Բոլոին Մինր կրակին անծուխ էր շինուած,
Փայտով ու հալուէով չէր լուսավառուած.
Ապա այն մնհեանի դրան առաջին
Զարդոշը*) մի կիսալուսին անկից գետին։
Աղնիւ կիսալուսնի գլած էր վրան.
«Ընդունիր, Գոշթասպ, այս կրօն արքայան»։
Աղնիւ կիսալուսնին նա բռնից վկայ,
Որ այսպէս կարծարծի նոր կրօնը նա։
Երբ մի քանի տարի այնուհետ անցաւ,
Կիսալուսնի արմատ ձգից ու բարձրացաւ.
Եւ այդ ծառն այնքան մեծացաւ, որ նրան
Չէր ընդգրկիլ, եթէ բանայիր, պարան։
Երբ ճղները վեր բարձրացան դէպ երկինք,
Այնտեղ կերտից նա մի շքեղ արքունիք։
Քառասուն կանգուն լայնքը, նոյնքան
բարձրութիւն,
Կաւ ու ջրի չարից նա գործածութիւն։
Մի պատշգամբ շինից նա ոսկեյարդար
Պատերն ամբողջ արծաթ, յատակը՝ յամպար.
Այնտեղ նա նկարից մեծն Ջամշիդին**),
Որ երկրպագում է լուսնին, արևին։
Կովազլուխ գուրզը ձեռքին Ֆէրէյդուն**)
Արքայի հրամանով այդտեղ կար կանգուն։
Բոլոր մեծերին նա ապա նկարից
Եւ ինչ վարժամուրհակ նա ի գործ դրեց։
Երբ այն շքեղ ոսկէ տունը զարդարեց,
Պատերը թանկագին քարերով պատեց.
Շուրջը ծածկեց երկաթով ամբողջովին,
Իր կայքը գարձրեց ու նստեց միջին։

*) Զարդոշտ կամ Զարթոշտ – Զրադաշտի անուան ներկայ ձևն է։
**) Տ. Շահնամէի բովանդակութիւնը.



Ուղարկեց պետութեան չորս կողմը պատգամ
Ասաց. «Սա է Թէշմար*) ծառը աննման.
«Դրախտից Աստուած է նրան ուղարկել
«Եւ ինձ նրա ձեռքով դրախտ հրաւիրել։
«Եւ արդ, ովքեր իմ այս խրատիս կ'անսան,
«Թէշմար կիսալուսնի մօտ ատով թող գան։
«Բոլորդ բռնեցէք Զարդոշտի ճամբան
«Երեսս շրջէք դուք կուռքերից չինական։
«Եւ գուրզով ու փառքով շահին Իրանի
«Գօտեպնդուէք դուք միշտ պատրաստ հրամանի։
«Նախնիքների օրէնքին մի անսացէք,
«Կիսալուսնի ատուերն ատակ հաւաքուեցէք։
«Թէպէ գմբէթը դուք գարձէք մնհեանին
«Ականջ դրէք մարդարէի հրամանին։
«Երդուում եմ, չի տեսնի նա արքայութիւն,
«Ում անծանօթ է Զարթոշտի ուղղութիւն»։
Նրա պատգամը տարածուեց աշխարհում,
Մեծամեծաց, ազատանու շարքերում։
Թագաւորներն ամէն նրա հրամանով
Ճամբայ ընկան Թէշմար կիսալուսնի գով։
Թէ չը պիտես, ինչու Թէշմար նա կոչուեց
Գիտացիր, որ դրախտային նոյնպէս անուանից։
Եւ պարտ է նրան դրախտային անուանել
Զի Թէշմարի պէս ծառ ոչ ոք չի տեսել։
Նա սրբավայր դարձաւ, դրախտի փոխուեց,
Եւ Զարթոշտը այնտեղ գնին շղթայեց։

Դավիթի այս և Շահնամէում եղած մեծ հատուածները գրուած (և թարգմանուած) է մոնսուխով և հնագոյնը կարող է համարուել, եթէ չը հաշուենք Բուդդոյենը կարդ է «Բալհար և Յիննայի» թարգմանութիւնը։

*) կիսալուսնի անունն է։

## ՖԷՐԴՈՎՍՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ

Ժ. դարի վերջը, 998 թուին Ղազնայում*) թուրք սարուկ Սաբուքթագինին, որ մի փոքրիկ անկախ իշխանութիւն էր հիմնել, յաջորդեց որդին՝ Մահմուդ (988—1030). նա մի բիրտ թուրք էր, ունէր արաբերէնի համեստ պաշար, գիտէր պարսկերէն, բայց խօսակցական լեզուն թուրքերէն էր (ինչպէս հետագայում Սէֆեւիներինը)։ Նա ֆանատիկոս սիւննի էր, չէր սիրում պարսկերէնը և նոյն իսկ կարգադրեց փոխարինել այն արաբերէնով, որ սակայն յաջողութիւն չունեցաւ։

Ռազմական յաջողութիւնը հետևում էր Մահմուդին ամէն քայլափոխում. նա խորտակեց Սամանիների զօրութիւնը և մի շարք վասլուն յաղթանակներ շնորհիւ ստեղծեց մի ընդարձակ կայսրութիւն, որ տարածւում էր Հինդոս գետի ափերից մինչև Խալիֆայի պետութեան սահմանները և իրեն սուլթան հռչակեց։

Եւ սակայն վառասիրական տենչը և Սամանիների օրինակը ստիպեցին նրան կազմել իր կլոր սեղանը մօտ 400 հոգուց, ոչ այնքան խոստումներով ու առատ վարձատրութեամբ, որքան բունի ուժով։ Այսպիսով կազմած բանաստեղծների յարգելի կաճառի մէջ մտնում էին ժամանակի տաղանդաւոր բանաստեղծները, որոնց գլուխ կանգնած էր «Բանաստեղծների թագաւոր (մուլէք օշ շօ'ռա) Օնսորին և որոնցից աչքի էին ընկնում Ֆառռուխի, Մանուչէհրի, Ղսջադի Մերվեցին, Ղատրին և վերջապէս Ֆէրդովսին, որ Սուլթան Մահմուդի արքունիք եկաւ 1010 թուին։ Սրանք բոլորն

*) Նշանաւոր պատմական քաղաք Աֆղանէստանում։



էլ շահի հրամանով ենթարկւում էին Օնսորիին և պարտաւորութիւն ունէին գոսիդէները (ներբողները) գրել Սուլթան Մահմուդին։ Այս բանաստեղծները, բնական է, բացի ներբողներից, գրում էին նաև իրենց ժանրով. այսպիսով ստեղծւեց մի շքեղ գրականութիւն, որի պրակը կազմեց Ֆէրդովսու Շահնամէն։

Օնսորի Բալխի (Բալխեցի † 1040 կամ 1050 թ.). պաշտօնի հանգամանքը դրել է իր կնիքը այդ բանաստեղծի ստեղծագործութեան վրայ, նրա դիւանը համարեա ամբողջովին բաղկացած է գոսիդէներից, որոնք նա գրել է Ռուդաքու հետևողութեամբ, բայց ոչ նրա պարզութեամբ ու բանաստեղծական աւիւնով։ Ռուդաքու մրցակիցն է նա նաև իր զոզոլներում, սակայն անյաջող, որ նոյն իսկ ինքն է խոստովանում։

Օնսորին, անշուշտ Ֆէրդովսու ազդեցութեան տակ, գուցէ և դրդումով, մշակել է ռոմանտիքական վիպական ուղղութեամբ երեք նիւթ «Նահր օ այն» (գետ և աղբիւր) «Խէնգ բոթ օ սորխ բոթ» (սպիտակ կուռք և կարմիր կուռք) և «Վամիզ օ ոզրա» (սիրահարն ու կոյսը), որոնցից և ոչ մէկը չի հասել մեզ։ Վամիզ օ ոզրան պահլաւական սիրուած սիւժետ էր և հետագայում մի շարք բանաստեղծներ զբաղուել են նրանով Օնսորիի հետևողութեամբ։

Պարսկաստանում Օնսորին յայտնի է որպէս մեծ սիմիլիստ բանաստեղծ և իրաւ, նրա լեզուն, թէպէտ համեմուած ճարտասանական ձևերով, ունի սակայն որոշ վսեմութիւն։

Այստեղ առաջարկւում է Օնսորիի զոզոլներից մէկի թարգմանութիւնը։

Բոլոր հարցերիս, որ արի անհման

Այն թարմ գեղաշուրթից առայ պատասխան.
Ասի՝ միայն գիշերներն եմ տեսնում քեզ.
Ասաց. գիշերն է վառ փայլում լուսընկան։
Ասի՝ այն ինչ հուր է, որ դէմքդ է այրել.
Ասաց. այն, որ սիրտդ արել է բրիան։
Ասի՝ դէմքիդ քօղից երեսս եմ շրջում,
Ասաց. միթէ մէհրաբից*) յետ կը դառնաս։
Ասի՝ սիրոյդ տուայտանքում մաշուեցի,
Ասաց. սիրահարին տանջանքն է արժան։

«Պատմում են, որ երբ Սուլթան Մահմուդ Ղազնուին ձիարշաւի և գնդախաղի ժամանակ ձիուց վայր ընկաւ և դէմքը վիրաւորեց, հաքիմ Օնսորին այս քառեակն ասաց որպէս ներողութեան խօսք և սուլթանը ձին նրան նուիրեց»

Մոջամ՚ոլ ֆասահա, հատ. I, էջ 366.

Արքայ, դու խրատիր այդ անկիրթ երկնքին
Որ զրկանք պատճառեց քո փառաւոր դէմքին.
Թէ գունդը ծուռն անցաւ, չովգանին**) դու զարկէ,
Թէ ձին յանցանք գործեց, ինձ նուիրիր այդ ձին։

Սուլթան Մահմուդի կլոր սեղանի մեծագոյն բանաստեղծ (չը հաշուած Ֆերդովսին) պէտք է համարուի Փառռուխին՝ Աբու Հասան Ալի Բէն Ջուլու՝ Սիստանցին. սրա կեանքի հանգամանքները հետաքրքիր են և մանրամասն. մենք անտես ենք անում մանրամասնութիւնները։ Նրա հայրը ծառայում էր Ամիր Խալաֆի

*) Մզկիթի ներքին պատի որմնախորշը, որ ցոյց է տալիս Մեկկայի ուղղութիւնը, ուր դարձնում են իրենց դէմքերը աղօթաւորները.

**) Ճոկան, ծայրը կեռ փայտ, որով հեծեալները գլորում և բռնում են գնդակը «պօլօ» խաղի ժամանակ.



մօտ, որ ծագում էր Սաֆֆարիդներից. Ֆառռուխին վաղ ուսումնասիրեց գրականութիւնը և անուշ ձայն ունենալու պատճառով նաև երաժշտութիւնը և սիրելի դարձաւ ժամանակակից աւագանուն։ Նա նախապէս ծառայում էր մի դէհգանի (կալուածատիրոջ) մօտ. այնուհետև արժանացաւ Բալխի կառավարիչ Ամիր Աբուլ-Մուզաֆֆար Թահէր Չաղանիի ուշադրութեան և վերջը մուտք ունեցաւ սուլթան Մահմուդի արքունիքը, որտեղ սակայն միշտապէս չը վայելեց սուլթանի բարեհաճութիւնը, զրկուեց նրա շնորհից և վռնդուեց արքունիքից։ Վախճանուել է հաւանականաբար 1037—38 թ.։

Ֆառռուխից մնացել է նրա դիվանը*). այստեղ մենք տեսնում ենք բազմատեսակ ղասիդներ, որտեղ նա ներբողում է սուլթան Մահմուդի ինչպէս պատերազմական, այնպէս և շինարարական փառքը և դըրւատում է նրա մերձաւորներին, արտայայտելով իր քնարական նրբին զգացմունքները։ Այսպիսով նա գերազանցում է Օնսորիին և պարսիկ քննադատները նըրան համեմատում են և հաւասար են դասում արաբ հռչակաւոր բանաստեղծ Մոթանաբբիի հետ։ Նրա քնարական քերթուածները գրաւիչ են իրենց առանձին քնքշութեամբ և ողջախոհութեամբ և այդ տեղից է տալիս Էթէին համեմատել նրան գերմանական մինեզենգերների հետ։

Ֆառռուխին վերագրւում է նոյնպէս պօէտիկայի և հռետորիկայի վերաբերեալ մի երկ, որ հետագայում հիմք է ծառայել Ռաշիդ ոլ Վաթվաթի «Հա-

*) Վերջին տպագրութիւն «Դիվանէ Հաքիմ Ֆառռուխի Սիստանի», Թեհրան, 1311 (1932), 447 մեծադիր էջ.

դայեզօս սէհր» (կախարդական այգիներ) երկին*)։

Ֆառուխիից որպէս նմոյշ տալիս ենք տեղի սղութեան պատճառով միայն մի զուխդէ։

Ներքող ամիր Իւսուֆ էբնէ Նասէրօդդինին**).

Ո՛վ գեղադէմ, դէմքդ ինձ արա, նայիր իմ կողքին
Զգոյշ, ինձնից մի՛ հեռացնիլ շուրթդ կաթոգին.
Այսօր հաճոյքով կը ճաշեմ հետդ, վաղն արդէն
Ոմիրն ինձ անպայման կրկին տանում է Ղոզնին***)։
Աստուածդ իմ, գահը քեզ նման երբէք չի տեսել.
Ո՛վ բազմայաղթ, աշխարհ չի տեսել քո նմանին.
Տապալում ես ժանտ առիւծին, փղին կատաղի,
Նետով առիւծներին, տէգով փղերին։
Զարկի նշանը քո Բոստից մինչև Սոմջար է,
Զարկդ անցնում է Բոլխից մինչև պաղեստին.
Երբ խաղ սկսես չովգանի, քո կուռ գնդակից
Տաս հարուած լուսինն է առնում, հարիւրը Փարուին։
Որքան վատեր սուրդ է ջարդել, Ֆորհադն իր դուրով
Երբէք այնքան չի հարուածել սարի լանջերին։
Ռազմի տենչից անկողինդ ոսկույ ես ուզում,
Նոյն տենչից վահանն է հանգչում քո գլխատակին։
Ճակատամարտում թէ տեսնեն քեզ ասախիդ հետ,
Կը կարծեն, թէ դու Խոսրովն ես, ասախդ՝ Շիրին։

Որպէսզի դիւրացուի այս զուխդէի ըմբռնումը, պէտք է ընդհանրապէս նկատել, որ Ֆառուխին իր զուխդէների սկզբում Մոթոնաբբիի հետևողութեամբ դի-

*) Hermann Ethé, Neupersische Litteratur Grundr. der Iran. Philol. II B, S. 225.

**) Սուլթան Մոհմուդի եղբայրը։

***) Ղոզնին—Ղազնա։



մում է իր սիրուհուն, կամ նկարագրում է գարունը կամ աշունը, ապա ճարպկօրէն անցնում է այն անձնաւորութեան, որ ներբողման առարկան է զուխդէի մէջ։

Աւելի համառօտակի կանգ կառնենք Ֆէրդուվսու միւս նշանաւոր ժամանակակցի՝ Հոքիմ Ոբօնոջմ էբնէ Եոզուբ Մ՛ոնուչէհրիի վրայ, որ Օնսորիի տաղանդաւոր հետևողն է։ Մոնուչէհրի նրա թոխալլոսն է։ Նա ծնուել է Դամղանում (Թէհրանի շրջակայքը) և յայտնի էր իր առասպելական հարստութեամբ և կոչւում էր շաստ գ՛ոլլէ (شصت گله—վաթսուն հօտեան)։ Նա նոյնպէս գրել է զուխդէներ, որոնց մէջ փառաբանել է սոլթան Մոհմուդին և նրա յաջորդներին Մ՛ասուդ Աին (1030—1041) և Մոհամմադին (1041), այլ և դոլներ։ Մահուան տարին անյայտ է։ Նրան նոյնպէս նմանեցնում էին արաբ բանաստեղծ Մոթոնաբբիին իր զուխդէների ձևի համար։

Հետևեալ գողոլը մի նմոյշ է Մոնուչէհրիից։

Նովրուզը եկել է արդէն, Մոնուչէհրի,
Լ՛ոլ*) կակաչներով ու կարմիր վարդերով լի.
Փակ լեզու թռչունները ամէն միանգամից
Երգեր դայլայլեցին լատին հրէայ լեզուի.
Մի թռչուն գեղգեղեց անհա փարսի մի երգ,
Միւսը Միջագետքի երգում է մեղեդի։
Գիշերուայ կաքաւը սարի թեք լանջերում
Սիրոյ պար է բռնում հետը մայրահաւի։
Եւ բոլբոլը նստած այն որդուան**) ծառին,

*) Լո՛լ—սուտակ։

**) Ծառ որոշ գունաւորութեամբ, որ յիշեցնում է կաս կարմիրի և մանիշակագոյնի խառնուրդը։

Գեղ հովիան է նայուած, սիրտը թախիծով լի։
Երգեր է յօրինում նա տաղաչափութեամբ
Երբեք նման երգեր պօետը չի երգի։
Օնսորիի գովքը սիրամարգն է անուամ,
Կաքաւը տաղերն է երգում Մոնուչէհրի։

## ՖԷՐԴՈՎՍՈՒ ՇԱՒԱՍՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ֆէրդովսու կեանքի հանգամանքները մանրամասն պատմուած են զանազան ազբիւրներում և զարդարուած են բազմաթիւ բանաստեղծական լեգենդանեերով։ Այդ աւանդական նիւթին անհրաժեշտ էր գտել և մաքրել և այդ պատասխանատու գործը կատարել է գերմանացի մեծանուն պիտնական Նէլդէքէն իր Das Iranische Nationalepos*) (Իրանի ազգային վէպը) ուսումնասիրութեան մէջ, որից առատապէս օգտուել ենք մեր գրքի այս հատուածը կազմելիս։

Յուսալի կենսագրական տեղեկութիւններ Ֆէրդովսու մասին տալիս է Նէզամի 'Ղրուզին, որ բանաստեղծի մահից հարիւր տարի յետոյ այցելել է նրա ծննդավայրը—Թուսը։ Շահնամէի առաջաբաններից երկուսը Թէյմուրի (Լանկթէմուրի) թոռ Բայսանղորինը և մի ուրիշը նոյնպէս պարունակում են արժէքաւոր տեղեկութիւններ Ֆէրդովսու մասին. կենսագրական նիւթ մենք գտնում ենք նաև Դովլաթշահի, Ջամիի մօտ և Լոթֆալիբէգի Ատէշքադէում։ Այս կենսագրական տեղեկութիւնները սակայն շատ տեղերում հակասում են Ֆէրդովսու իր Շահնամէում տուած տեղեկութիւններին։

Ֆէրդովսու իսկական անունը, ինչպէս և հօր անունը անյայտ է. կենսագիրները նրան անուանում

*) Grundriss der Iranischen Philologie էջ 130—211 և առանձին։



են երբեմն Մոնսուր, երբեմն 'Ղհմոդ, երբեմն Հոսէն. Աբօլգասէմ բանաստեղծի քունիէն է, իսկ Ֆէրդովսի նրա գրական անունն է։

Ֆէրդովսու ծննդեան և մահուան թիւը ստոյգ նեելիս օգտագործուում են նրա Շահնամէում յայտնած տեղեկութիւնները. այսպէս՝ նրա վերջին տեղեկութեան համաձայն հէջրի 400 թուին (1010 թ.) նա 80 տարեկան էր, ուրեմն նա ծնուած պէտք է լինի հէջրի 320 թ. (932 թ.)։ Մի այլ տեղեկութեան համաձայն նա հէջրի 389 թ. (999 թ.) 65 տարեկան էր, ուրեմն 400 թ.՝ 76-77 տարեկան էր և ուրեմն ծնուած պէտք է լինի հէջրի 323-24 թ. (934 թ.)։

Ֆէրդովսու ծննդավայրը ըստ իւր վկայութեան Թուսն է։ Նէզամի 'Ղրուզին նրա ծննդավայրը համարում է Թաբարանը, որ մի մեծ գիւղ էր կամ Թուսի մի մասը։ Ըստ 'Ղրուզիի վկայութեան Ֆէրդովսին մէջտեղ կալուածատէր էր—դէհգան։ Թուսում անշուշտ նա ձեռք է բերել կամ նրան յանձնուել է Թուսում կազմուած արձակ «Շահնամէ»-ի մի օրինակը, որ նա սկզբին հասուն տարիներում սկսել է վերածել ոտանաւորի, որի համար վարժութիւնները թերևս արել է աւելի երիտասարդ տարիներում։ Ֆէրդովսու Շահնամէի ստեղծագործութիւնը տևել է 30-35 տարի։

Դժուար է ասել թէ երբ է սկսել գրել Ֆէրդովսին իր Շահնամէն և երբ է վերջացրել։ Նէլդէքէն ասում է, որ 999 թ. նա մի աւարտած Շահնամէ տուեց 'Ղհմոդ Խանլոնջանեին (Իսպահանի մօտ) և ուրեմն նա Շահնամէն չի գրել սուլթան Մահմուդի համար, քանի որ սուլթանի հայրը Սեբուքթագին մեռել է 997 թ. և որդին գահակալել է 999 թուին, բայց

Խանլոնջանիին տուած օրինակը անշուշտ աւարտուած չէր, քանի որ Ֆիրդուսին իր ներբողներով սուլթան Մահմուդի անունը կապում է Իսֆանդիարի, Ռոստոմի ու Շաղադի և Դարաբի պատմուածքների հետ, որոնք եթէ նոյնիսկ Ֆիրդուսու վերջին հատուածները լինէին ժամանակագրական տեսակէտից, դարձեալ կապ կը ներկայացնէին սուլթան Մահմուդի հետ։

Ըստ աւանդութեան Ֆիրդուսին սուլթան Մահմուդի մօտ եկել է որպէս մի համեստ երկրագործ՝ գանգատուելու իր անհաւատարիմ ծառայի վրայ։ Մինչդեռ նա ղողնոտ է գնացել սուլթան Մահմուդի մօտ ըստ 'Ղըրուզիի' ոտանաւոր նուիրելու շահին, որ և արել է՝ յանձնելով ոտանաւորը Թագաւորին՝ վոզիր Հասէյն Էբնէ Ղընմոդի միջոցով։ Անշուշտ, սուլթան Մահմուդին, որ արաբերէն ևս գիտէր, մատչելի էին ինչպէս իր պալատական այլ բանաստեղծների, այնպէս և Ֆիրդուսու ներբողները, այլ և վերջինիս Շահնամէն. բայց այլ բան է, թէ նա որքան կը գնահատէր Իրանի վեհապետների այդ հռչակաւոր մատեանը, քանի որ ինքը Թուրք ծագումից լինելով պատկանում էր այն ցեղին և երկրամասին, որ Իրանի յաւիտենական քէնի առարկան էր և դժուար թէ այդ Թուրք Թագաւորը առանձնապէս սքանչանար Իրանի գահակալների Թուրանակործան գործողութիւններով։

Ի միջի այլոց այս է պատճառը, որ թէպէտ և Ֆիրդուսին իր Շահնամէում սուլթան Մահմուդին նուիրած ներբողներում գովաբանում է սուլթանի առատաձեռնութիւնը, բայց ոչ մի տեղ չի երևում, որ այդ առատաձեռնութիւնը տարածուել է նաև բանաստեղծի վրայ։ Մինչդեռ Ֆիրդուսին, որ ընդհանրապէս յոռետես



էր աշխարհի գործերի նկատմամբ, մեծ յոյսեր էր կապել Սուլթան Մահմուդի մեծահոգութեան, նախատեսելով առատ և բարեկեցիկ ծերութիւն։

Ինչպէս յայտնի է, բանաստեղծի յոյսը մեծապէս ջախջախուեց, քանի որ Սուլթան Մահմուդ ուղարկեց նրան ընդամէնը քսան հազար դէրամ, որ նա տուեց բաղնիսի ծառայողին և ֆոզա՛-ի (գարեջրի), ինչպէս այդ երևում է նաև նրա հռչակաւոր երգիծաբանութիւնից, ուղղուած սուլթան Մահմուդի դէմ։ Բանաստեղծի այս վերաբերմունքի մասին սուլթանին տեղեկանալը դժուար չէր, քանի որ Ֆիրդուսին շրջապատուած էր հակառակորդների և թշնամիների մի ստուար խմբով և մենք տեսնում ենք, դարձեալ նոյն երգիծաբանութիւնից, որ սուլթանը սպառնում է նրան գցել փղի ոտների տակ, մի սովորութիւն, որ լայն չափերով գործադրում էր սուլթանը իրեն անհաճոյ անձնաւորութիւնների վերաբերմամբ։

Բանաստեղծն անպատասխան չը թողեց այդ սպառնալիքը. նա գրեց իր հռչակաւոր սատիրը—երգիծաբանութիւնը, որտեղ նա սպանիչ վրէժ լուծեց, ցոյց տալով սուլթանի ստոր ծագումը։ Ֆիրդուսին մըտադիր էր նոյն իսկ դուրս հանել գրքից և ոչնչացնել այն բոլոր ներբողները, որ նուիրուած էին սուլթանին Շահնամէում և փոխարինել նրանց հայհոյականներով։ Նա մտադիր էր նուիրել գիրքը Թաբարիստանի (Մազանդերանի) տէր սպահբադ Շահրիարին, որի մօտ ապաւինել էր կէս տարի Հերաթում թագնուած մնալուց յետոյ։ Սակայն Շահրիարը ակնածելով սուլթանից, վճռեց հարցն աւելի զգուշութեամբ լուծել և գերադասեց գնել Ֆիրդուսուց նրա երգիծաբանութիւնը, վճա-

րելով խուրաքանչիւր տողին 1000 դէրամ, այսինքն ամբողջ 100 տողի համար 100 հազար դէրամ և ոչնչացրեց։ Այդ չի նշանակում, իհարկէ, որ երգիծաբանութիւնը դրանով ոչնչացաւ. բայց հաւանական է, որ Շահրիարը զրկեց Սուլթան Մահմուդին երգիծաբանութիւնը կարդալու հնարաւորութիւնից։

Սէփահբոդի մօտ մնալը սակայն վտանգաւոր էր դառնում և Ֆերդուսին Թաբարիստանից փախաւ բուիդ Բահաօդ Դովլէի կամ նրա որդու՝ Սուլթան օդ Դովլէի մօտ (1012 թ.), որտեղ և գրեց իր երկրորդ խոշոր գործը՝ Իւսուֆ վա Զուլէյխա (Յովսէփ և Զուլէյխա —Պետափրէսի կինը)։

Նօլդէքէն անարժէք է համարում խալիֆի մօտ գնալու աւանդութիւնը, ինչպէս և մի քանի այլ աւանդութիւններ։

Երևի ապահով համարելով իրեն, զառամեալ Ֆերդուսին հարաւից վերադառնում է հայրենիք, որտեղ և շուտով մեռնում է։ Գեղեցիկ է Ֆերդուսու մահուան առթիւ հիւսուած աւանդութիւնը. սուլթան Մահմուդ զղջալով, թէ Ֆերդուսու ժողովրդականութիւնից ակնածելով, մի մեծ գումար է ուղարկում Ֆերդուսուն. բայց մինչդեռ դրամով բեռնաւորուած ուղտերը մտնում էին քաղաքի մի դարպասով, միւս դարպասով դուրս էին տանում Ֆերդուսու դիակը։ Յամենայն դէպս սուլթան Մահմուդի փող ուղարկելը յայտնի է և ‘Արուզիին այլև Բայսոնգորին և Նասէրէ Խոսրովին և այդ փողի գումարը ‘Արուզիի վկայութեան համաձայն եղել է 60 հազար դէրամ, այսինքն մի գումար, որ նոյնպէս ողորմութիւն էր և որի ընդունելուց հրաժարուել է բանաստեղծի աղջիկը։



Ֆերդուսու մահուան թիւը Դովլաթշահը ընդունում է հէջրի 411 (1020/21) թ., ուրիշները ցոյց են տալիս 416 թուականը։ Այս թուերից մանաւանդ առաջինն անհաւանական չէ, երբ ի նկատի ունենանք, որ բանաստեղծն ինքն իրեն Շահնամէում 80 տարի է պարգևում։

# ԾԱՀՆԱՄԷ

Վերոյիշեալ պայմանների մէջ և յիշեալ անձնաւորութեան ձեռքով պրուեց Շահնամէն—այն հռչակաւոր մատեանը, որին վիճակուած էր լինել ամենամեծ հայրենասիրական խթանն Իրանում, ստեղծել և վառ պահել ազգային գիտակցութիւնը, մի բան, որ ընդհանրապէս քչերին է բաժին ընկնում։

## ՁԱՓԸ

Ծէրդովսին Շահնամէն գրելիս կանգ առաւ այն չափի վրայ, որ ընտրել և կիրառել էր Դագիկին իր վիպական հատուածում և որ հատանականաբար գործ է ածուել նրանից էլ առաջ։ Սա արաբական Մութագարիբ չափն է, որ պարսկերէնի մէջ որոշ ձևափոխութեան է ենթարկուել։ Արաբերէնում այդ չափի սքեման հետևեալն է.

⏑ — ⏓ | ⏑ — ⏓ | ⏑ — ⏓ | ⏑ —,

որ չորս կարճ և չորս երկար վանկերից գոյ պարունակում է երեք անցեպս (երկդիմի), այսինքն այնպիսի վանկեր, որ կարող են և երկար և կարճ լինել։ Պարսկերէնում այդ անցեպս վանկերը վերացուել են և չափը ընդունել է աւելի կուռ ձև՝

⏑ — — | ⏑ — — | ⏑ — — | ⏑ —,

այսինքն չորս կարճ և եօթ երկար վանկ, որ աւելի վայելուչ է վիպական գրուածքի համար։



## ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

Այս չափի վրայ գրուեց մի հսկայական վիպական բեռ, որ Ծէրդովսու իր ասելով վեց անգամ բիւր հազար (ուզում է ասել վեց անգամ բիւր) կամ 60,000 բէյտ (երկտող) է պարունակում. արդի ձեռագրերն էլ երկտողներ ունեն 60,000-ի սահմանում, մինչև հաշուով մօտ 55,000 բէյտ։

Այդ հսկայական նիւթն ամփոփուած է 50 գլուխում, որոնցից իւրաքանչիւրը մի թագաւորի սերտպետութեան պատմութիւն է ընդգրկում, բացառութեամբ Արշակունիներին նուիրուած գլխի, որ մի ամբողջ հարստութեան պատմութիւն է ներկայացնում։ Այդ գլուխները տարբեր մեծութիւն ունեն։ Այսպէս՝ Ջէյ Խասրովի թագաւորութիւնը պարունակում է 13395 երկտող կամ բէյտ*), մինչդեռ օր. Յազկերտ Բ. Սանեանի թագաւորութիւնը 26 երկտող ունի։ Կան դեռ աւելի համառօտ գլուխներ**)։

Այդ հսկայական նիւթը ոտանաւորի վերածելու համար հարկաւոր էր նոյնպիսի հսկայական համբերութիւն, իսկ նրան գեղարուեստական փայլ պարգևելու և միութիւն հաղորդելու համար կը պահանջուէր արտակարգ տաղանդ, որպիսին էր Ծէրդովսու տաղանդը։

---

*) Ըստ Խաւարի հրատարակութեան, Թէհրան, 1312 (1932) թ.։

**) Յիշեալ թագաւորները հետևեալներն են՝ փիշդադհաններ՝ 10 անուն, Քիանիներ (որոնց մէջ և Ալէքսանդր Մակեդոնացին)՝ 10 անուն, Արշակունիներ՝ 9 թագաւոր, բայց մի անուն և Սասանեաններ՝ 29 անուն. ընդամէնը 50 անուն, մօտ 4000 տարի ընդհանուր տևողութեամբ։

# ՇԱՀՆԱՄԷ

Վերոյիշեալ պայմանների մէջ և յիշեալ անձնաւորութեան ձեռքով գրուեց Շահնամէն—այն հռչակաւոր մատեանը, որին վիճակուած էր լինել ամենամեծ հայրենասիրական խթանն Իրանում, ստեղծել և վառ պահել ազգային գիտակցութիւնը, մի բան, որ ընտրեալներից քչերին է բաժին ընկնում։

## ՉԱՓԸ

Ֆէրդովսին Շահնամէն գրելիս կանգ առաւ այն չափի վրայ, որ ընտրել և կիրառել էր Դաքիքին իր վիպական հատուածում և որ հաւանականաբար գործ է ածուել նրանից էլ առաջ։ Սա արաբական Մոթոգարէբ չափն է, որ պարսկերէնի մէջ որոշ ձևափոխութեան է ենթարկուել։ Արաբերէնում այդ չափի սքեման հետևեալն է.

◡ — ⏓ | ◡ — ⏓ | ◡ — ⏓ | ◡ —,

որ չորս կարճ և չորս երկար վանկերից զատ պարունակում է երեք անցեպս (երկդիմի), այսինքն այնպիսի վանկեր, որ կարող են և երկար և կարճ լինել։ Պարսկերէնում այդ անցեպս վանկերը վերացուել են և չափըն ընդունել է աւելի կուռ ձև՝

◡ — — | ◡ — — | ◡ — — | ◡ —,

այսինքն չորս կարճ և ութ երկար վանկ, որ աւելի վայելուչ է վիպական գրուածքի համար։



## ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

Այս չափի վրայ գրուեց մի հսկայական վիպական բեռ, որ Ֆէրդովսու իր ասելով վեց անգամ բիւր հազար (ուզում է ասել վեց անգամ բիւր) կամ 60,000 բէյտ (երկտող) է պարունակում. արդի ձեռագրերն էլ երկտողներ ունեն 60,000-ի սահմանում, միջին հաշուով մօտ 55,000 բէյտ։

Այդ հսկայական նիւթն ամփոփուած է 50 գըլխում, որոնցից իւրաքանչիւրը մի թագաւորի տիրապետութեան պատմութիւն է ընդգրկում, բացառութեամբ Արշակունիներին նուիրուած գլխի, որ մի ամբողջ հարստութեան պատմութիւն է ներկայացնում։ Այդ գլուխները տարբեր մեծութիւն ունեն։ Այսպէս՝ Քէյ Խոսրովի թագաւորութիւնը պարունակում է 13395 երկտող կամ բէյտ*), մինչդեռ օր. Յազկերտ Բ. Սասանեանի թագաւորութիւնը 26 երկտող ունի։ Կան դեռ աւելի համառօտ գլուխներ**)։

Այդ հսկայական նիւթը ստանաւորի վերածելու համար հարկաւոր էր նոյնպիսի հսկայական համբերութիւն, իսկ նրան գեղարուեստական փայլ պարգևելու և միութիւն հաղորդելու համար կը պահանջուէր արտակարգ տաղանդ, որպիսին էր Ֆէրդովսու տաղանդը։

*) Ըստ Խաւարի հրատարակութեան, Թէհրան, 1312 (1932) Թ.։

**) Յիշեալ թագաւորները հետևեալներն են՝ փիշդադեաններ՝ 10 անուն, Քիանիներ (որոնց մէջ և Ալէքսանդր Մակեդոնացին)՝ 10 անուն, Արշակունիներ՝ 9 թագաւոր, բայց մի անուն և Սասանեաններ՝ 29 անուն ընդամենը 50 անուն, մօտ 4000 տարի ընդհանուր տևողութեամբ։

## ԱՂԲԻՒՐՆԵՐԸ*)

*Ի՞նչ աղբիւրներից է գալիս Շահնամէի նիւթը. ինչպէս վերը յիշուեց**), Ֆէրդովսին իր երկը ստեղծագործելիս օգտուել է գլխաւորապէս այն Շահնամէից, որ կազմուել էր Թուս քաղաքում. այս գրքի կազմուելն ևս ունի իր խոշոր պատմութիւնը։*

*Իրանի վիպական նիւթը յայտնի է հնագոյն ժամանակներից մասամբ Իրանի սուրբ գրքերից՝ Աւեստայից և մասամբ յոյն հեղինակների գրուածքներից։ Գերմանացի գիտնական Շպիգել իր* Iranische Altertumskunde *(գիտութիւն իրանական հնութիւնների) գրքում ցոյց է տալիս, որ վերոյիշեալ նիւթը ընդհանուր առմամբ և իր ժամանակագրական յաջորդականութեամբ յայտնի է եղել Աւեստայի հեղինակներին սկսած* Gayo Mareta*-ից, այսինքն Քէյօմորսից։ Նիւթի որոշ մասերը ծանօթ էր նոյնիսկ Ռիգվեդային, որ հնդկական հնագոյն գրքերից կարևորագոյնն է։ Այսպէս՝* Yima *(հնդկական* Yama*) համապատասխանում է նոր պարսկերէն Ջամ կամ Ջամշիդ թագաւորի անուան։* Thraetaona *(հնդկ.* Traitana*) նոր պարսկական Ֆէրէյդունն է.* Kavi Usan *(հնդկ.* Kava Ushanas*) նոր պարսկերէնում՝ Քաւուս։* Kavi Hursavah *(հնդկ.* Sushravas*) — նոր պարսկ. Խոսրով։ Նոյն իսկ նրանցից որոշ անուններ գալիս էին ընդհանուր հնդեւրոպական աղբիւրից, ինչպէս* Azhi-dahaka *(նոր պարսկ.* Azhdäha *կամ* Dähak*՝ արաբականացրած Զոհհակ)։*

---

*) Այս գլուխը կազմելիս նոյնպէս օգտուել ենք Nöldeke-ի* Das Iranische Nationalepos *ուսումնասիրութիւնից։*

**) Կենսագրութեան մէջ։



*Աւեստայի հեղինակներին այդպիսով յայտնի է առասպելական անունների մի սիստեմ, ի միջի այլոց մի շարք անուններ, որոնք հետագայ աղբիւրներում չեն հանդիպում։ Անունների այդ սիստեմի շուրջը գոյութիւն ունէր անշուշտ պատմուածքների մի շարք, որոնց թատերաբեմը եղել է Իրանի հիւսիս արևելքը, որտեղ պէտք է փնտռել և Աւեստայի ծննդավայրը։*

*Յոյն հեղինակներից ոմանց մօտ պահուած իրանական վիպական հատուածներ գալիս են Աքեմենեան և մարական շրջաններից և վերաբերում են արևմտեան Իրանին։ Այդ հեղինակներից յիշատակութեան արժանի են Կտեզիաս, որ աքեմենիդ Արտաքսերքսէս Բ-ի բժիշկն էր և ապրում էր 4-րդ դարում ն. Ք., սակայն այդ հեղինակը կասկածելի է իր թեթև վերաբերմունքի և աղբիւրների ճշտութեան կողմից։*

*Հերոդոտ տարբեր քան Կտեզիաս, պատմում է Կիւրոսի առասպելը, որ կատարեալ անալոգիա է ներկայանում Քէյ Խոսրովի առասպելի հետ, ինչպէս այդ պատմում է մեզ Ֆէրդովսին։ Մարաց Աժդահակ թագաւորին համապատասխանում է իրանական վէպի Թուրանի Ղփրասիաբ թագաւորը։ Թագաւորը հրամայում է ոչնչացնել իր աղջկանից (Մանդանա—Աժդահակի աղջիկը, Ֆորանդիզ—Ղփրասիաբինը) ծնուած մանչին (Կիւրոս—Քէյ Խոսրով)։ Անալոգիան ընդգծվում է և երկու դեր խաղացող բարձր պաշտօնեաներին՝ պատմական Հարպագոսին (մար) և առասպելական Փիրանին (Թուրանցի)։ Մանուկին երկու դէպքում էլ ապաւում և անուցանում են հովիւները, որից յետոյ նրբանք պալատ են ընդունւում և տապալում են իրենց*

պապին*)։ Ի մէջ այլոց այս աւանդութեան մի նոր անալոգիան իր հերթին մենք գտնում ենք Մովսէս Խորենացու մօտ**), որտեղ Արտաշիր Բաբկանը ծծում է այծին «ընդ հովանեաւ արծւոյն»։

Ըստ Էլիանի Աքամենէս, հռչակաւոր հարստութեան նախահայրը, սնուել է արծւի ձեռքով, իսկ Շահնամէի մեծ փահլեաններից մէկին՝ Զալին, սնուցել է Սիմորղը***)։ Դրա նոր անալոգիան ներկայացնում է վերևը յիշած Խորենացու «ընդ հովանեաւ արծւոյն» պատկերը·

Մի նմանութիւն էլ գտնում ենք Աթենէոսի պատմած և Ալէքսանդր Մեծի սենեակապետ Միթիլենցի Խարէսի վերարտադրած Հիստասպէսի եղբայր Զարիադրէսի և արքայադուստր Օդատիսի և Ֆէրդովսու պատմած Զարիրի եղբայր Գոշթասպի և Ռումի (Յունաստանի) արքայադուստր Քոթայունի լեգենդի մէջ։

Աւեստայի սկզբնաւորութիւնից յետոյ երկար դարեր շարունակ լռում է իրանական վէպը, սակայն նա չի մեռնում և նոր ուժով երևան է գալիս Սասանեանների օրով։ Ք. յ. Ե. դարի կէսից սկսած արքայական տան անդամների մէջ մենք տեսնում ենք վէպի անուններ — Զարիր, Նաւառ (Զոբադ), Ջամասպ, Ջամ, Քաւուս, Խոսրով։

Քրիստոսից 5 դար յետոյ պահլաւերէն (Փահլուի) լեզուով երևան է գալիս Եատկարէ Զարիրան

*) Քէյ Խոսրովի մասին մանրամասն տ. Շահնամէի բովանդակութիւնը ստորև։

**) Գիրք Բ. գլ Ը.։

***) Առասպելական թռչուն, այլ կերպ Օնգա կոչուած։



(Զարիրի յիշատակը), 3000 բառ պարունակող մի գիրք*), որտեղ պատմուած է Իրանի Վիշթասպ թագաւորի (Ֆէրդովսու մօտ որոշ հնչաբանական տարադարձութեամբ Գոշթասպ) և խիոնների Արջասպ թագաւորի կրօնական կռիւը, որի ժամանակ Իրանը յաղթանակող է դուրս գալիս։ Սա իրանական վէպի հնագոյն պահպանուած նմոյշն է և համապատասխանում է Ֆէրդովսու, աւելի ճիշտ Դոզիզու, որոշ հատուածին, որտեղ հերոսներն են Զարիր և Իսֆոնդիար։

Մի ուրիշ պատմութիւն, որ վիպական է գոնէ կիսով չափ, մենք գտնում ենք Քարնամակէ Ըրդոշիրէ Բաբգան գրքոյկի**) մէջ, որտեղ պատմուած են Արտաշիր Բաբկանի գործերը։ Այս պատմուածքը որոշ յաւելումներով ու յապաւումներով գտնւում է և Ֆէրդովսու Շահնամէում։

Սասանեանների ժամանակ սկսւում է պատմական և վիպական նիւթի կենտրոնացումը· առաջին յիշատակութիւնն այդ մասին վերաբերում է Խոսրով Անուշիրվան մեծ թագաւորին, որի ժամանակ պահւում էին այսպէս կոչուած ըստ Ագաթիասի Persikoi bibloi (պարսկական մատեաններ) կամ Basilikoi difterai (արքայական դաֆթարներ), որոնց մէջ երևան էին գալիս ժամանակագրական կարգով Սասանեան արքաները։ Այս քրոնիկոններին կից էին անշուշտ և աւանդական թագաւորների ու հերոսների գործերի նկարագրութիւնները։

Եազդգերտ (Յազկերտ) Գ-ի ժամանակ (632—637), երբ թւում էր, թէ Պարսկաստանի երջանիկ

*) Հասել է մեզ։

**) Կայ հայերէն թարգմանութիւն դոքտ. Թիրեաքեանի։

պատմութեան մի նոր դարաշրջան է սկսւում, մի դէհ-զան*) Դանէշվար անունով, կազմել է մի ժամանակագրութիւն Քոյոմորսից սկսած մինչև Խոսրով երկրորդ Փորվէզ (590—628), օգտուելով մովպեատն մովպետ Ֆառռուխանի և Ռամինի առասպելական գործերից։ Գիրքը գրուած էր, ի հարկէ, պահլաւերէն և կոչւում էր Խութայնամակ (արքայագիրք)։ 8-րդ դարու կիսում նա թարգմանուեց արաբերէն լեզուով էրն Մոզաֆֆա՛յի ձեռքով։ Ինչպէս բնագիրը, այնպէս և արաբերէն թարգմանութիւնը, չեն հասել մեր ձեռքը, միայն հատուածներ։ Արաբ պատմաբանների մօտ պահուած զանազան կտորներից կարելի է եզրակացնել, որ բացի Խութայ Նամակից եղել են և այլ ժամանակագրութիւններ։

Խութայնամակի հետագայ վիճակի մասին Բայսունղորի առաջաբանում պատմւում է, ինչպէս թէ Սո՛ղդէրնէ վազգաս, որ պարսից ոյժը խորտակողն էր Զադէսիէի ճակատամարտում 636-37 թ., գտնելով Խութայնամակը Յազկերտ Գ-ի գանձերի մէջ, ուղարկում է Խալիֆ Օմարին, որ հրամայում է թարգմանել այն արաբերէն։ Բայց երբ հասնում են կրակի պաշտամունքին և Զալի ու Սիմորղի պատմութեան, գտնում է, որ դա մի պիղծ գիրք է և նրանից օգտուել չի կարելի։ ապա այդ գիրքը ճանապարհորդում է Հաբէշստան և Հնդկաստան, որտեղից բերել է տալիս Նո՛զուբ էրնէ

*) Դէհզան են կոչւում նախկինում առհասարակ երկրագործները, իսկ առաջ՝ մեծ կալուածատէրերը, որոնց մօտ պահւում էին տեղական ատենադպրութիւնները և որոնք հնարաւորութիւն էին ունենում գրով և պատմութեամբ զբաղուելու. այստեղից և դէհզանի «պատմաբան» նշանակութիւնը։



Լէյսը թարգմանելու նոր պարսկերէնի*)։ Այդ աւանդութիւնն, ի հարկէ, արժէք չունի։

Մեզ առաջաբանում պատմւում է այն արքայագրքի մասին, որի վրայ հիմնուած է Ֆէրդովսու Շահնամէն։ Ըստ այս տեղեկութեան, հէջրի 346 (957/8) թ. Մոնսուր ոլ Մո՛մարի չորս հոգու միջոցով մի արձակ Շահնամէ գրել տուեց Թուսի այն ժամանակուայ կառավարիչ Աբու Մոնսուր էբնէ Աբդռռազագի համար. այս չորս հոգու անունները, թէպէտ որոշ չափով ազաւաղուած, կասկած չեն թողնում, որ նրանք զրադաշտականներ էին**)։

Այս արքայագիրքը, դառնալով նրա հիմքի վրայ կառուցած Շահնամէից, պէտք է աւելի ընդարձակ և բազմակողմանի եղած լինի, քան Խութայ Նամակը, որի վրայ հաւանականաբար և հիմնուած էր։

Չորս հոգու ներկայութիւնը հաստատում է, որ ինչպէս նրանց աղբիւրները, այնպէս և նրանց կազմած գիրքը պէտք է պահլաւերէն լինէին և այդպիսով Ֆէրդովսու աղբիւրները եղել են պահլաւերէն։

## ՇԱՀՆԱՄԷԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Շահնամէի առաջին, առասպելական, մասը վերյիշեալ («Խաւտրի») հրատարակութեան մէջ ընդգրկում է երեք հատոր—1448 էջ, 37170 երկտող կամ բէյտ։ Այս խոշոր նիւթի մանրամասն բովանդակութիւնը տալը մեզ հեռու կը տանէր և դժուար թէ նպատակայարմար լինէր։ Միւս կողմից Շահնամէի էու-

*) Jule Mohl, Le livre des Rois T. I, Préface, X.

**) Առաջինն աղաւաղուած, ք. Եազդանդադ որդի Շափուրի, գ. Մահօի Խորշիդ, որդի Բահմանի, դ. Շադան, որդի Բորզինի։

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

թեան մասին մեզնում շատ քչերը գաղափար ունեն, սւսաի անհրաժեշտ է այդ բովանդակութիւնը տալ, մի-այն դասաւորուած յարմար ձևով։

Իլիականը, որ նման նիւթ ունի, մեծացած է մի ղեկավար սկզբունքով, մի լեյտմոտիւով և նրա բոլոր մասերը յաջորդական կերպով բղխում են այդ հիմնա-կան մտքից։ Այդ լեյտմոտիւը Աքիլլեսի քէնն է, որ մեծ բանաստեղծը դրել է իր գրքի ճակատին.

Քէնն երգիր, աստուածուհի, Աքիլլեսին Պելիսեան,
Կորստաբեր, որ Աքէացոց բիւր տառապանք պատճառեց։

Այս սկզբունքը մի իրական դաժան կոնկրէտ երևոյթ է, որ ի վիճակի էր անվերջ շարժման մէջ դնել յունաւորոյական բանակները։ Ֆէրդովսու մօտ ևս մենք գտնում ենք նման մի սկզբունք, որ կարելի է ձևակերպել որպէս Իրանի և Թուրանի քէն։ Բայց այդ սկզբունքը վերացական է։ Մօտիկից ծանօթանալով Շահնամէի հետ, կարելի է կանգ առնել մի քանի լեյտ-մոտիւների վրայ, որոնց մէջ շարժիչ սկզբունքը նոյն-պէս իրական երևոյթ է և համարեա ամէն տեղ մի է— կոնկրէտ քէնը, ինչպէս Իլիականում։

Այս տեսակէտով Շահնամէի առասպելական բաժնի ամբողջ նիւթը բաժանւում է հինգ մասի. 1. Պե-տութեան կազմակերպումը, 2. Քէն առ Զոհակ, 3. Ի-րջի սպանման քէնը, 4. Սիավոշի սպանման քէնը, 5. Կրօնական քէն (Պարսկաստանում զրադաշտականու-թիւնն ընդունելու հետևանքով. սրանց միանում են յաւելեալ պատմուածքներ—Ռոստամի սպանման քէնը և Էսֆոնդիարի սպանման քէնը։ Քէնի այս ընդհանուր ֆոնի վրայ և նրան կից ծայր են տալիս բազմաթիւ էպիզոդներ, որոնք ծաւալւում են առանձին առանձին



և շաղկապւում են իրար, համախմբուելով որոշ լեյտմո-տիւների շուրջը, որոնց միացնում է մի ընդհանուր ա-ռանցք—Իրանի և Թուրանի փոխադարձ քէնը, այն-պէս, որ չի կարելի ասել, որ Շահնամէն խառնիճա-ղանճ կոնգլոմերատ է. նա ևս ունի իր սիստեմը։ Որ չափով մօտենում ենք պատմական շրջանին, այդ քէնի ծանրութեան կենտրոնը աստիճանաբար թեքւում է դէպի Արևմուտք, որ և վերջնականապէս տեղի է ու-նենում Դարայեան Դարայի, որ ասել է՝ Դարեհ Կոդո-մանոսի օրով։

Այլ սկզբունքով վերոյիշեալ նիւթը բաժանւում է երկու մասի—թագաւորների պատմութիւն, որ աւելի հոր և ցամաք է և փոխանների պատմութիւն, որ ա-ւելի խոշոր տեղ է բռնում և շատ աւելի հետաքրքիր է. ճիշտ է, թագաւորներից ոմանք նոյնպէս փոխանների են։ Անշուշտ, պարսկական վէպը իր իսկական մտքով փոխանների պատմութիւնն է։

## I ՇՐՋԱՆ. ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

1. Առաջին թագաւորը ՔԱՅՈՄԱՐՍՆ էր. նա էր առաջինը, որ մի լուսաւոր քաթխոդայ (տանուտէր) դարձաւ, մարդկանց նոր ձևի կերակրուել և հագնուել սովորեցրեց։ Նրա որդուն Սիամոքին սպանում է սև դևը, որին նա սպանում է իր հերթին իր թոռան՝ Հու-շանգի օգնութեամբ։ Սրա թագաւորութիւնը տևեց 30 տարի։

2. ՀՈՒՇԱՆԳԻ ժամանակ (40 տարի) մարդկութիւնն աւելի է առաջադիմում. երևան է գալիս կրակը քարի հարուածից և թագաւորն այդ առիթ սահմանում է այսպէս կոչուած Սէդէի տօնախմբութիւնը։

3. ԹԱՀՄՈՒՐԱՍ, այսպէս կոչուած դևակապ (30 տարի). նա ընտանեցրեց զանազան կենդանիների, բըռնեց Ղնրիմանին, թամքեց և քշեց երկրի չորս կողմը: Կռւում բռնեց դևերին և նրանցից սովորեց գրելու արուեստը:

4. ՋԱՄՇԻԴ—հզօր թագաւորը. նա հնարեց զէնքեր, վուշը, մետաքսը, կարել, հիւսել, աղիւս պատրաստել, շինութիւնները շինել, թանկագին քարեր, բալասան և դեղեր, նաւաշինութիւն և այլն. նա սահմանեց Նովրուզի տօնը և հանդիսաւոր կերպով տօնեց և հպարտացաւ. ասաց, որ ամէն բան մարդկութեան համար ես եմ հնարել. ուրեմն ինձ պէտք է համարել աշխարհի արարիչ: Նրա փառքը խաւարեց և շրջապատողները թողեցին նրան: Ջամշիդ թագաւորեց 700 տարի:

5. ԶԱՀԱԿ. Զահակը մի թեթևամիտ արաբ թագաւորն էր. Էբլիսը (սատանան) փորձում է նրան, որ հօրն սպանի. նա այդում հոր է փորում, որի մէջ և ընկնում է հայրը՝ Մորդասը: Էբլիսը խոհարարի պաշտօնով գրաւում է նրա սէրը և որպէս երախտագիտութեան նշան համբուրում է նրա ուսերը, որտեղից բըսնում են երկու սև իժ. ապա որպէս բժիշկ՝ Էբլիսը խորհըրդատրում է օրական երկու մարդու ուղեղ ուտեցնել օձերին: Իրանից հրաւիրում են նրան թագաւորելու Ջամշիդի փոխարէն, որ փախչում է և 100 տարի թագնուելուց յետոյ գտնւում է Չինաստանում և Զահակի հրամանով սղոցւում է:

Զահակը բռնութեամբ կառավարում է հազար տարի, մի օր պակաս: Նա մի երազ է տեսնում, որ եւրեք հոգի յարձակուեցին նրա վրայ և նրանցից ամեն



նից վոքրը կովագլուխ գուրզով*) խփեց նրա գլխին: Մովբոդները**) գուշակում են, որ Ֆէրէյդունը կը ըսպանի նրան և նրա տեղը կը թագաւորի:

## II. ՇՐՋԱՆ. ՓԷՆ ԱՌ ՋՈՀԱԿ.

Ֆէրէյդունի հօր ուղեղն էլ տուել էին օձերին, իսկ իրեն փնտռում էին, որ սպանեն. նրան թագցնում են և կերակրում է Փորմայէ կովը. ապա նրան տանում են Հնդկաստան, վերջապէս նա իրեն պատրաստ զգալով կովագլուխ գուրզով կռւի է ելնում Զոհակի դէմ երկու եղբայրների հետ. նրան միանում է Դարբին Քաւէն, որի կաշէ գոգնոցից դրօշակ են պատրաստում, որ յետոյ գառնում է Իրանի պատուոյ դրօշակը: Տիգրիսն անցնում են ձիով և տիրում են Երուսաղէմին. Ֆէրէյդունը վերցնում է Ջամշիդի երկու աղջիկներին, որոնք Զոհակի կանանոցումն էին: Վերջապէս Ֆէրէյդունը հարուածում է Զոհակին և բռնում ու պէս Ֆէրէյդունը հարուածում է Զոհակին և բռնում ու Սորուշ հրեշտակի հրամանով տանում է Դոմավոնդ սարը և մի այրի մէջ գամում:

6. ՖԷՐԻՅԴՈՒՆ—500 տարի: Ֆէրէյդունն ունենում է երկու աղայ, որոնց համար առնում է Եմանի թագաւորի աղջիկներին. Ֆէրէյդունը փորձում է որդոց և իմանում է, որ փոքրն ամենից քաջն է և անուններ է դնում՝ Սալմ, Թուր և Իրաջ: Ֆէրէյդունը բաժանում է երկիրը որդոց մէջ այս ձևով. Սալմին տալիս է Ռումը՝ Թուրին՝ Թուրանը և Իրաջին՝ Իրանը: Հայրը բարեհաճ է դէպի Իրաջը. այդ հանգամանքը գրգռում է

*) Այդպիսի գուրզ մինչև օրս էլ կարելի է տեսնել Պարսկաստանում որպէսէր մեծաւորների տանը:

**) Մովպետները, մոգպետները:

եղբայրներին և նրանք վճռում են սպանել նրան, որ և կատարում է Թուրը. այստեղից սկսւում է այն կատաղի քէնը, որ երկար ժամանակ Իրանն ու Թուրանը իրար է բաղխեցնում։

## III. ԻՐՈՋԻ ՍՊԱՆՄԱՆ ՔԷՆԸ.

Սակայն պարզւում է, որ Իրոջի կանանցից մէկը յղի էր. նա ունենում է մի աղջիկ, որից ծնւում է Մոնուչէհրը. Ֆէրէյդուն սրան դրդռում է կռւի իր որդոց դէմ և նա ելնում է պատերազմի, որի ժամանակ երևան են գալիս փոհլևաններ կարէն, Սամ և մանաւանդ Գորշասպ, որ սպանում է Թուրանի փոհլևան Շիրուէին։ Մոնուչէհրը սպանում է Թուրին և Սալմին և գլուխները ուղարկում է Ֆէրէյդունին։

7. ՄԱՆՈՒՉԷՀՐ, 120 տարի։ Փոհլևան Սամն ունենում է մի որդի սպիտակ մազերով, որին անուանում են Զալէ Զոր (ծերունի Զալ). հայրը հրամայում է գըցել նրան Ղլբորզ*) սարի վրայ. Սիմորղ թռչունը տանում է նրան կերակուր իր ձագերին, բայց հրաման է ստանում անուցանել նրան. երբ Զալը մեծանում է, Սիմորղը նրան յանձնում է հօրը։ Մովբեդները դուշակում են, որ նա մեծ փոհլևան կը լինի։ Սամը տալիս է նրան Զաբոլէստանը և ինքը գնում է Մազանդրան։

Զալը գնում է Քաբոլ և ծանօթանում է Մէհրաբի հետ, որ Զոհակի ցեղից էր. նա ունէր մի աղջիկ Ռուդաբէ անունով. Զալը ծածուկ տեսակցում է նրա հետ և խոստանում է հաւատարիմ մնալ նրան, եթէ նոյն իսկ Սամը և Մոնուչէհր իրենց հաւանութիւնը չը

*) Ղլբորզ սարը Թեհրանի հիւսիսակողմն է (աշխարհագրութեան տարեգրքերում սովորաբար կոչւում է էլբուրս)։



տան։ Զալը նամակ է գրում Սամին. սա իմանում է մովբեդներից, որ Զալը Ռուդաբէից կունենայ Ռոստոմին։ Մոնուչէհրը դժգոհ է և Սամին հրամայում է ջնջել Մէհրաբի տոհմը։ Սամը Զալին նամակով ուղարկում է Մոնուչէհրի մօտ և ինքն ընդունում է Մոնուչէհրի կնոջը՝ խոհուն Սինդոխտին, որ եկել էր խընդրելու, որ խնայէ իրենց։ Զալը Մոնուչէհրի մօտ մեծ քաջագործութիւններ է կատարում, միւս կողմից մովբեդները դուշակում են Ռոստոմի մասին և Սամը նըպատաւոր նամակով ուղարկում է Զալին, որ ամուսնանում է Ռուդաբէի հետ և 3 շաբաթ ինջոյքներ են կատարում։ Սամը Զաբոլէստանի թագաւորութիւնը յանձնում է Զալին։

Ռուդաբէի ազատուելու ժամանակն է գալիս և նա աստիճ տառապում է ցաւերից. Զալը յիշում է, որ Սիմորղը տւել էր նրան իր փետուրը, որ դժուարին դէպքերում այրի և նրան կանչի. նա այդպէս էլ անում է և Սիմորղը գալիս նպաստում է երեխայի ծնունդին։ Յայտնում են այդ մասին Սամին, որ ուրախանում և նշանակում է նպաստի համար տասը ծծմայր։ Երբ նա փոքր ինչ մեծացաւ և ուտել սկսեց, նրան տալիս էին հինգ մարդու կերակուր։ Հազիւ պատանի դարձած նա սպանում է Սամի սպիտակ փղին, որ դուրս էր ընկել և ջարդում էր բոլոր [illegible] տներին։ Ապա հայրն ուղարկում է Ռոստոմին Սպոնդ սարը, որտեղ գնացել էր գօրքով Սամի հայրը Նարիմանն և չէր վերադարձել։ Ռոստոմ խորամանկութեամբ ներս է մտնում սարի վրայի ղեհակը, բոլորին կոտորում և մեծ աւարով վերադառնում է։

Մոնուչէհր զրում է վերահաս մահը, թագաւո-

բութիւնը յանձնում է Նովզոր որդուն և մեռնում է։

8. ՆՈՎԶԱՐ, 7 տարի։ Սա մի շահասէր և բռնակալ թագաւոր էր. ժողովուրդն ապստամբում է և միայն Սամի միջամտութիւնն է փրկում դրութիւնը։

Փոշոնգը, Թուրանի թագաւորը, լսելով Մոնուչէհրի մահը, մտադրւում է արշաւել Իրան և Թուրի սպանման վրէժն առնել և զօրքը յանձնում է որդուն Ղֆրասիաբին։ Այս արշաւանքին դէմ էր Ղֆրասիաբի խմաստուն եղբայրը՝ Ղուրիրէս։ Ղֆրասիաբը լսելով, որ Սամը մեռել է, արշաւում է Զաբոլէստան. Բուրմոնը՝ Թուրանի փոխկանը, սպանում է կարէնի եղբօրը՝ Կաւատին (Զոբադին)։ Կարէնը և Գոլսիվոզ զօրքերով իրար դէմ են ելնում և մեծ կոտորած է տեղի ունենում։

Երկրորդ և երրորդ կռւի ժամանակ իրանցիք թուլանում են. Ղֆրասիաբը տիրանում է Նովզորի կանանոցին։ Գերի է ընկնում և ինքը Նովզորը։ Կարէնն սպանում է Բուրմոնին, իսկ Զաբոլէստան գնացած զօրքը յաղթւում է, զօրավարներից մէկը (Խոզվորան) սպանւում է Զալի ձեռքով, միւսը՝ Շամասաս հաղիւ ճողոպրում է կարէնի ձեռքից. Ղֆրասիաբը զայրացած սպանում է Նովզորին.ապա երկու կոտոր է անում եղբօրը՝ Ղուրիրէսին, որ համոզում էր նրան թողնել դաժանութիւնը։

9. ԶՈՎ, 5 տարի. Զալը որպէս գահի արժանաւոր թեկնածու՝ կանգ է առնում Թոհմասպի որդի Զովի վրայ, որ և գահ է բարձրանում և հաշտւում է Ղֆրասիաբի հետ։ Հինգ տարի խաղաղութեամբ կառավարելուց յետոյ նա վախճանւում է 86 տարեկան հասակում։

10. ԳՇՐՇԱՍՊ, Զովի որդին, 9 տարի պատւով թագաւորելուց յետոյ մեռնում է. Ղֆրասիաբ, որին Փոշոնգը դաժանել էր սիրել և յաւում էր, որ գահը չէր տուել Ղուրիրէսին, արշաւում է Իրան։ Բոլորի հայհոյքն ուղղւում է դէպի Զալ, որ ասում է, որ հերթը Ռոստոմինն է. բայց նրա համար պէտք է գուրզ ճարել և ձի ընտրել։ Զաբոլէստանի և Քաբոլէստանի բոլոր երամակները բերում են նրա առաջ և նա ընտրում է մի մատակ իր մորուկի հետ, որ ըստ ձիապանի աստւածեան կանխորոշուած էր Ռոստոմի համար։ Այդ մորուկը դարձաւ Ռոստոմի հռչակաւոր Ռոխշը։



Զալը գնում է Ղֆրասիաբի դէմ։ Նա յայտնում է զօրքին, որ գահ պէտք է բարձրանայ Քէյ Զոբադ, որ Ղլբորզ սարի վրան էր և որին բերելու պէտք է գնայ Ռոստոմը։ Ռոստոմ գնում է Ղլբորզ, պատահում է Քէյ Զոբադին կերուխումի ժամանակ, որ նա սարքել էր գահակալութեան մասին տեսած երազի առթիւ։ Ռոստոմ առաջնորդում է Զոբադին և ճանապարհին ջարդում Զոլունի զօրքը, որին Ղֆրասիաբ ուղարկել էր Ռոստոմի դէմ և իրեն Զոլունին էլ սպանում է։

11 ՔԷՅ ԶՈՒԱԴ (100 տարի).—Կռիւը շարունակւում է. կարէնն սպանում է Շամասասին, Ռոստոմ փընտռում է Ղֆրասիաբին և չը նայած հօր զգուշացման, գնում է և մենամարտի ելնում նրա դէմ։ Ռոստոմ բռնում է Ղֆրասիաբի գօտուց, բայց գօտին կտրւում է և նա փախչում է ու սարսափով պատմում է հօրը՝ Փոշոնգին Ռոստոմի մասին և խորհուրդ է տալիս հաշտութիւն կապել։ Փոշոնգ հաշտութիւն է խնդրում. Ռոստոմ դժգոհ է, բայց արժանանում է մեծամեծ պատիւների, ինչպէս և Զալը, կարէնը և այլ փոխկանները։ Ք. Զոբադ գնում է Ֆարս՝ էստոխր, զգում է իր վախճանը, կանչում է չորս որդոց և խրատում։

12 ՔԷՅ ՔԱՈՒՍ (150 տարի)· Ք. Քաւուս, Քէյ Ղոբադի որդին, տարուած Մազոնդրանի երաժիշտների երգերից և պատմուածքներից, վճռում է գնալ տիրել Մազոնդրանին. այս բանը յուսահատեցնում է փահլաւաններին, որովհետև Մազոնդրանը դևերի հայրենիքըն էր. Զալը փորձում է համոզել թագաւորին յետ դառնալ իր մտադրութիւնից, բայց անյաջող. Քէյ Քաուս Մազոնդրան է մտնում և քէֆ է սկսում: Սպիտակ դևը, որ Մազոնդրանի տէրն էր, այդտեղի իր հպատակ թագաւորից տեղեկանում է Քէյ Քաւուսի գալու մասին և մի ամպ է բարձրացնում, որից քարեր և նետեր են տեղում. մութը պատում է և բոլորի աչքերը դադարում են տեսնելուց: Քէյ Քաւուս օգնութիւն է խնդրում Զալից, որ ուղարկում է Ռոստամին: Ռոստամ երկար ճանապարհ է գնում, սովածանում է, մի ցլու բռնում է, եփում ուտում և քնում է: Սկսւում է նրա եօթն արկածների շարքը (هفتخوان—եօթ կայան). 1) մի առիւծ գալիս յարձակւում է Ռախշի վրայ, բայց նա առանց Ռոստամին արթնացնելու սմբակահար է անում առիւծին և սպանում է: Ռոստամ արթնանում է, դըժգոհում, նորից քնում: 2) Ռոստամ մի վայրի ոչխարի օգնութեամբ մի աղբիւր է գտնում, ջուր է խմում և պառկում քնում. մի վիշապ գալիս շրջապատում է նըրան: 2) Ռախշը երեք անգամ արթնացնում է Ռոստամին, որ դժգոհ վեր է կենում և սպանում է վիշապին: 4) Ռոստամ ջուր է խմում մի աղբիւրից, որի մօտ դըրուած էին խորտիկներ, գաւաթ և գինի: Աղբիւրին մօտենում է մի վհուկ կին գեղեցկուհու կերպարանքով, Ռոստամ աղօթում է, նա նորից վհուկի կերպարանք է ընդունում և Ռոստամն սպանում է նրան: 5) Ռոստամ



կոտորում է Օվլադի զօրքերը և իրեն բռնում կապում է և հրամայում է ցոյց տալ Սպիտակ դևի և Ք. Քաւուսի տեղը: 6) Սպանում է Սպիտակ դևի հրամանատար Արժանգին: 7) Օվլադի օգնութեամբ գտնում է Սպիտակ դևին, որ մի ջրաղացի քար ձեռքին յարձակւում է Ռոստամի վրայ, բայց Ռոստամ սպանում է նրան: Նա հանում է դևի սիրտը, տանում քսում է Քաւուսի և միւսների աչքերին և բժշկում է:

Քաւուսը Փորհադի, ապա Ռոստամի միջոցով հարկ է պահանջում Մազոնդրանի թագաւորից. նա ոչ միայն հրաժարւում է, այլ և հրամայում է դահճին սպանել Ռոստամին. սակայն Ռոստամ ոտերից բռնելով ճեղքում է նրան և Քաւուսին ասում, որ կռիւ է հարկաւոր: Տեղի է ունենում կռիւը, որի ժամանակ Ռոստամ մի շարք նախճիրներից յետոյ սպանում է Մազոնդրանի թագաւորին և կռիւը վերջանում է:

Ռոստամի առաջարկով Քէյ Քաւուս Օվլադին նշանակում է Մազոնդրանի հարկատու թագաւոր և գնում է Իրան և Ռոստամին մեծապէս պարգևատրում է:

Քաւուս կռիւ է ունենում բերբերների, Համավորանի*), Շամի և Եգիպտոսի զօրքերի հետ և յաղթում. Քաւուս կին է ուզում Համավորանի թագաւորի աղջկան Սուդաբէին, բայց հայրը նրան խաբէութեամբ իր մօտ է հրաւիրում, կալանաւորում և ուղարկում է մի դղեակ. Սուդաբէն չի ուզում բաժանուել Քաւուսից և նոյնպէս գնում է դղեակ:

Աֆրասիաբ արշաւում է Իրան. Ռոստամին խնդրում են օգնել և նա ճանապարհ է ընկնում: Ռոստամ ջրի ճանապարհով մտնում է Համավորան և թա-

*) Համավորան—Եմեն:

գաւառն օգնութիւն է խնդրում Եգիպտոսից և բերբերներից։ Ռոստոմ ազատում է Քէյ Քաուսին, բռնում է Շամի (Սիրիայի) և բերբերների թագաւորներին, Եգիպտոսի թագաւորին երկու կէս է անում։ Համավոբանի թագաւորն աղերսում է խնայել։

Քաուս զօրք է հաւաքում և առաջարկում է Ղիբրասիաբին դուրս գնալ Իրանից, բայց նա հրաժարւում է. Ռոստոմ դուրս է գալիս կռուի և Ղիբրասիաբ փախչում է։

Էրլիսը փորձում է Քաուսին, նրան երկինք բարձրացնելով և իջեցնելով Ամոլում. փոխհանները գանում են շահին և Գուդարզ պախարակում է Քաուսին, որ ղղում է։

ԵՕԹ ՓԱՀԼԵՒԱՆՆԵՐԻ ԿՌԻՒԸ.— Ռոստամի մօտ խնջոյք կար. ներկայ էին փոխհաններ Թուս, Գուդարզ, Բոհրամ, Գիվ, Գորգին, Զանգէ Շաւարան, Գոստահմ, Բորզին և Գորազէ։ Գիվն առաջարկում է որսի գնալ Ղիբրասիաբի որսատեղը. գնում են և քէֆ անում. Ղիբրասիաբն իմանում է և 30 հազար զօրքով գալիս է նրանց վրայ։ Գորազէն առաջարկում է հեռանալ, Ռոստոմ ծիծաղում է, ընկերներին պատուէրներ է տալիս և սկսում են կռուել Ղիբրասիաբի զօրքը։ Ռոստոմ առաջարկում է Ղիբրասիաբին բամբակ մանել։ Ղիբրասիաբ յարձակւում է Ռոստոմի վրայ, բայց զօրքի կէսը կորցնելով, կորագլուխ նահանջում է։ Փիլասմը, Թուրանի մեծ փոխհաններից մէկը, կռւում է Իրանի չորս փոխհանների դէմ, բայց երբ երևում է Ռոստոմը, փախչում է։ Ղլբուսն էլ յարձակւում է Ռոստոմի եղբօր՝ Զուարէի վրայ, կարծելով որ Ռոստոմն է և պատրաստւում է գլուխը կարել, բայց Ռոս-



տոմ նկատում է և նրա գլուխն է չախչախում։ Ղիբրասիաբը փախուստի է դիմում. Ռոստոմ յետևից հասնում է և պարանը ձգում է, որ բռնի, բայց սաղաւարտն է միայն ընկնում ձեռքը։ Մեծ աւարով վերադառնում են հայրենիք։

ՌՈՍՏԱՄ ԵՒ ԶՈՀՐԱԲ*).— Այս էպիզոդը Շահնամէի ամենաընտիր և սրտառուչ մասն է և կապուած է Քէյ Քաուսի շրջանի հետ դարձեալ Իրջի և Թուրի սպանման քէնով։

Ռոստոմ որսի է գնում Թուրանի կողմերը, մի ցիւռ խորովել ուտելուց յետոյ նա պառկում քնում է. վեց եօթ հոգի անցնում են, տեսնում Ռոխշին. պարանով բռնում են, նա երեքին սմբակներով սպանում է, բայց մեւսները տանում են ձիուն։ (Ռոխշին տանում են մատակների մօտ, նա 40 մատակ է սպանում և միայն մէկը յաղնում է նրանից)։ Ռոստոմ արթնանում է և տեսնում Ռոխշը չը կայ և թամքը շալակած գընում է Սամանգան**), որտեղ լաւ ընդունելութիւն է գտնում և խոստում է առնում, որ կը գտնեն Ռոխշին։ Ռոստոմին լաւ կերակրում են և նա քնում է։ Թագաւորի դուստրը Թահմինէն գալիս է նրա մօտ և գանգատւում իր բախտից. հերոսների մէջ նա իրեն հասարակ մէկին չի գտել, լսել է Ռոստոմի անունը և այժմ երջանիկ է նրան նուիրելու իր անձը։ Ռոստոմ մովբեդ է կանչում և Թահմինէին կին է վերցնում. նա տալիս է կնոջը իր բազուկից վարդարանի մի հատիկ, պայմանով, որ եթէ աղջիկ ունենայ, նրան նուիրի,

*) Պարսկերէն—Սոհրաբ։

**) Քաղաք Ղհվազի շրջանում։

իսկ եթէ տղայ, կապի նրա բաղուկին և իր մօտ ուղարկի։ Ծնւում է Զոհրաբը, որ աչքի է ընկնում իր անսահման ուժով. նա իմանում է, որ Ռոստոմի որդին է, վճռում է գնալ Ռէյ Քաուսին տապալել, գահը Ռոստոմին տալ, իր մօրն էլ Թագուհի կարգել։ Սպա լսում է, որ Ռոխշի ձագը դոյութիւն ունի և ձեռք է բերում։

Ղֆրասիաբ Հումանին և Բարմոնին գօրքով ուղարկում է Իրան, հրամայում է վերցնել և Զոհրաբին, որ կամ կը սպանի Ռոստոմին, կամ ինքը կը սպանուի, երկու դէպքում էլ ինքը չարիքից կազատուի։ Զոհրաբ հասնում է սպիտակ ամրոցը, որի պահն էր վոհլևան Հոջիրը. նրանք մենամարտում են. Զոհրաբ նիզակով հարուածում է նրան, բայց չսպանում և գերում է։ Զոհրաբի հետ մենամարտի է դուրս գալիս Բուժդոհում վոհլևանի աղջիկը՝ Գուրդ Աֆրիդ. նրա սաղաւարտն ընկնում է Զոհրաբի ձեռքը, մազերը բացւում են և իմացւում է, որ կինն է և Զոհրաբը խնայում է նրան։ Բուժդոհումը գրում է Քաուսին, որ Թուրանից եկել է մի 14 տարեկան վոհլևան, հարուածել և գերել է Հոջիրին, մենք էլ շուտով կը թողնենք դղեակը։ Միայն Ռոստոմը գուցէ կարողանայ յաղթել նրան։ Զոհրաբ վերցնում է Սպիտակ բերդը, բայց բոլորը փախել էին և Գուրդ Աֆրիդին այնտեղ չի գտնում։ Քաուսի մօտ խորհրդակցութիւն է տեղի ունենում և որոշում են Ռոստոմին բերել տալ Զաբուլիստանից։ Նամակով ուղարկւում է Ռոստոմի փեսան – Գիվը։ Ռոստոմ զարմացած է. Թուրանում կայ իր տղան, բայց նա մանուկ է. իսկ ուրիշ ոմն կարող է լինել այդպէս ահարկու։ Գիվը շատախօսում է, բայց Ռոստոմ երեք օր կոնծում է և նոր ճանապարհւում. Ռէյ Քաուսն ընդունում է նրան զայրացած և հրամայում է Թուսին Ռոստոմին և Գիվին կախաղան բարձրացնել. բայց Ռոստոմ հրում է և Թուսը վայր է ընկնում, իսկ ինքը հեռանում է. յետոյ Ռէյ Քաուս ներողութիւն է խնդրում։



Ռէյ Քաուս և Ռոստոմ գօրքն առաջնորդում են դէպի ամրոցը. Զոհրաբը Հոջիրից հարցնում է Իրանի հերոսների անունները. նա թւում է՝ Ռէյ Քաուս, Թուս, Գուդարզ, Գիվ, Ֆարիբորզ, Գորաղէ, բայց Ռոստոմի համար ասում է՝ նա չինացի է, վախենալով, որ մի գուցէ Ռոստոմն սպանուի։

Զոհրաբ գինւում և գնում է Իրանի բանակը, կանչում է Ռէյ Քաուսին, այպանում է և իրեն հակառակորդ հարցնում։ Ոչ ոք չի ելնում. նա նիզակով խփում է շահի վրանին և 70 մեխ դուրս են թափւում։ Ռոստոմ դժկամակութեամբ է գնում այդ «Ղնրլմանի կռիւը»։ Ռոստոմ գովում է Զոհրաբին և վերջինս հարցնում է, արդեօք նա Ռոստոմը չի՞։ Նա պատասխանում է, որ ինքը Ռոստոմը չի։

Առաջին օրը մենամարտում են ամէն տեսակ զէնքերով և երկուսն էլ խոնջացած բաժանւում են և իւրաքանչիւրը պատմում է իւրայիններին իր տպաւորութիւնները. ընկճուած է մանաւանդ Ռոստոմը։ Հետևեալ օրը Զոհրաբը Հումանին ասում է՝ երևի նա իմ հայրն է, չը պէտք է կռուել։ Հումանն ասում է՝ ոչ, նման չի հօրդ։ Երբ կրկին հանդիպում են, Զոհրաբ համոզում է չը մենամարտել, Ռոստոմ ուշք չի դարձնում։ Ռոստոմ և Զոհրաբ գոտեմարտում են և Զոհրաբ խփում է Ռոստոմին գետին և ուզում է դաշոյնով ըսպանել։ Ռոստոմ խնդրում է կրկին գոտեմարտել և

Զոհրաբ համաձայնում է։ Ռոստոմ գնում աղօթում է, որ իր երբեմնի ուժը, որից ոտները քարերի հետ խրւում էին գետին, յետ տրուի իրեն։ Ուժը յետ ստանալով գնում է բանակ և այնտեղից Զոհրաբի մօտ։ Նա խփում է Զոհրաբին գետին, հանում է սուրը և խրում կուրծքը։ Զոհրաբ ասում է, որ իր հայրը, Ռոստոմը, վրէժ կը լուծէ և ցոյց է տալիս նշանը։ Ռոստոմ զարհուրում է. նա հող է ածում գլխին և յայտարարում է, որ իր զաւակին սպանել է և այլևս չի կռուելու։ Փընտռում են մեղաւորին, որ Ռոստոմին ծածկել է Զոհրաբից. Հումանն ասում է, որ մեղաւորը Հօջիրն է. Ռոստոմ նրան վերցնում խփում է գետին և ուզում է մորթել, չեն թողնում։ Ապա Ռոստոմ Գուդարզին ուղարկում է Քէյ Քաուսի մօտ և նուշդարու (բալասան) է խնդրում, նա չի տալիս։ Ստացւում է Զոհրաբի մահուան լուրը, Ռոստոմ ողբում է և յուղարկաւորութիւնն ուղղում դէպի Զաբուլիստան, որտեղ նրա սգին միանում են Զալն ու Ռուդաբէն։ Դոխմէ*) են պատրաստում սմբակի ձևով և ամբողջ Իրանը ողբում է հերոսի մահը։ Մայրը, Թահմինէն, առնում է Զոհրաբի մահուան լուրը և սարսափելի կական է բարձրացնում և մի տարի տառապելուց յետոյ մեռնում է։

ՍԻԱՒՈՒՇ.— Սա երկրորդ սրտառուչ էպիզոդն է, որ ոչ միայն ուժեղացնում է Իրաջի քէնը, այլ և առաջացնում է նոր—Սիաւուշի քէն։ Սիաւուշի մայրը մի աղջիկ էր, որին հայրը դուրս էր արել տանից և գտել էին Թուսը, Գիվն ու Գուդարզը և որ վիճակւել

*) Բարձր հրապարակ դիակները դնելու թռչուններին կուր և օդի մէջ քայքայւելու համար.



էր Քէյ Քաուսին։ Նրանից ծնւեց Սիաւուշը, որին դաստիարակեց Ռոստոմը։ Ռոստոմի մօտից վերադարձից ութ տարի յետոյ հայրը նրան նշանակում է Քոհէստանի կառավարիչ, «որ այժմ կոչւում է Մաւէրոննահր»*)։

Սիաւուշի վրայ սիրահարւում է խորթ մայրը —Սուդաբէն. նա իր աղջկան նրան տալու պատրուակով մի քանի անգամ կանանոց է հրաւիրում նրան շահի գիտութեամբ և առաջարկում է սիրել իրեն։ Սիաւուշ չի համաձայնւում և Սուդաբէն աղաղակ է բարձրացնում և ասում է, որ Սիաւուշն ասել է. աղջկանդ չեմ ուզում, քեզ եմ ուզում։ Թագաւորը քննում է և հաստատում երկսին էլ. Սուդաբէից գինու և գոլաբի**) հոտ է գալիս։ Սուդաբէն միջոցի է դիմում ոչնչացնելու Սիաւուշին։ Նա մի վհուկ յղի կնոջ երկու երեխաներին դեղերով վիժեցնում է և դնելով սկուտղի վրայ, որպէս իր երեխաներին, սկսում է աղաղակել. Քաուսը աստղագէտներին է հարցնում, նրանք ասում են, որ երեխաները վհուկ կնոջն են. Սուդաբէն և վհուկ կինը չեն խոստովանում և վճռում են, որ Սիաւուշը կրակի միջով անցնի։ Հարիւր ուղտի բեռ փայտից երկու հսկայական խարոյկ են շինում և սև նաւթը վրան ածելով վառում են։ Սիաւուշ սև ձիու վրայ անվտանգ անցնում է բոցերի միջից և հայրը խնջոյք է կազմում։

Ափրասիաբ գալիս է Իրան. Սիաւուշ յանձն է առնում գլխաւորել զօրքը, կանչում է Ռոստոմին և 12 հազար ընտիր զօրքի գլուխն անցած դիմում է Բալխ,

*) Այսինքն այն երկիրը, որ գետի (Օքսուսի) յետևն է ընկնում, այն է Տրանսօքսանիա։

**) Վարդաջրի։

որտեղ երեք կռիւ է տեղի ունենում և թուրքերը նահանջում են, Ղիւրասխաբ դուրս է անում իր եղբօրը Գորսխվոզին, որ թուրանական բանակի առաջնորդն էր։

Ղիւրասխաբ սարսափելի երազ է տեսնում և մոգերն ասում են, որ այս կռիւը կորստաբեր կը լինի. որոշում է հաշտուել և Գորսխվոզին ուղարկում են Սիաւուշի և Ռոստոմի մօտ։ Պայման են դնում, որ 100 հոգի Ղիւրասխաբի ազգականներից պատանդ ուղարկեն և Իրանը դատարկեն, Ղիւրասխաբ համաձայն է։ Ռոստոմ պատգամը տանում է Քաուսին, սա զայրանում է և Թուսին է նշանակում հրամանատար։ Ռոստոմ բարկանում և Սիստան (Զաբոլէստան) է գնում։

Սիաւուշն այդ լուրն առանալով տխրում է և խորհրդակցելով Բահրամի և Ջոնգէ Շաւարանի հետ, որոշում է պատանդները վերադարձնել Ղիւրասխաբին, ինքն էլ գնալ նրա մօտ։ Ղիւրասխաբ ուրախութեամբ համաձայնում է և Փիրան զօրապետին ուղարկում է Սիաւուշին ընդառաջ։ Փառաւոր ընդունելութիւն են ցոյց տալիս և Փիրանն իր ամբողջ ունեցուածքը դնում է նրա տրամադրութեան տակ։ Ուրախ գնում են Գոնգ — Ղիւրասխաբի աթոռանիստը։

Ղիւրասխաբ կազմակերպում է մրցութիւններ և Սիաւուշ մեծ հմտութիւն է ցոյց տալիս չոգան խփելու մէջ. նա այնպէս է խփում գնդակին, որ գնդակն անհետանում է։ Նա իրեն ընկեր է վերցնում եօթ իրանցիների և խաղը տանում է։ Աղեղ ձգելում նա նոյնպէս առաջինն է. Ղիւրասխաբ, որ չոգած հազիւ է ձգում աղեղը, ասում է, որ Սիաւուշն արժանի է Ռոստոմին։ Նոյնը նշան խփելում։ Ձիարշաւ են կազմում և նուէրներ տալիս Սիաւուշին։ Որսի մէջ էլ Սիաւուշը



մրցակից չունէր։ Այսպէս ուրախ անցնում է մի տարի։

Փիրանը Սիաւուշին ամուսնացնում է. նրան տալիս է իր աղջկան — Ջորիրէին և Ղիւրասխաբի աղջկան՝ Ֆորոնգիզին։ Ղիւրասխաբ նրան Զինական Ծովի կողմը տեղ է տալիս և նա շինում է հրաշակերտ Գոնգ դղեակը։ Սակայն Սիաւուշ ասպազէտներից տեղեկանում է, որ այդ քաղաքը կորստաբեր է և Փիրանին ասում է, որ Ղիւրասխաբը կը սպանի իրեն — Սիաւուշին։ Նա շինում է և մի այլ քաղաք՝ Սիաւուշգորդ*)։

Ղիւրասխաբ Փիրանին ուղարկում է Զինաստան և Հնդկաստան հարկ հաւաքելու. վերադարձին նա այցելում է Սիաւուշգորդ և շատ գոհ է մնում քաղաքից և Սիաւուշի, Ֆորոնգիզի և Ջորիրէի ընդունելութիւնից։ Շուտով Սիաւուշ մի արու զաւակ է ունենում Ջորիրէից, որին անուանում են Ֆորուդ։

Գորսխվոզ նախանձում է Սիաւուշին և սկսում է որոգայթներ լարել նրա դէմ և ամբաստանում է Ղիւրասխաբի մօտ, միաժամանակ Սիաւուշին հաւատացնում է, որ Ղիւրասխաբ զայրացած է նրա վրայ։ Գորսխվոզ ասում է Ղիւրասխաբին, որ Սիաւուշը բանակցութեան մէջ է իրանցիների հետ և իրեն էլ տանից դուրս արեց։ Ղիւրասխաբ զայրացած զօրքով գալիս է Սիաւուշի վրայ, որ բացատրում է Ֆորոնգիզին, որ այդ հինգ ամսական մանուկը, որով նա յղի է, կը ծնուի, անունը կը դնեն Բէյ Ֆուրով. Գիվը կը գայ նրան ազատելու, կառաջնորդէ Իրան և նա Իրանի փառքը կը լինի. իսկ իրեն Ղիւրասխաբը կը սպանի։ Ապա նա կոտորում է իր ձիերին, ողջ թողնելով սեա-

*) Սիաւուշկերտ։

ւին (շոբրոնդ—«գիշերագոյն»), որ Քէյ Խոսրովին իրան պէտք է տանէր։

Սիաւուշ հազար հոգու հետ փախչում է, բայց ճանապարհին հանդիպում է Ղիբասխաբին։ Ընկերներին կոտորում են, իրեն բանտարկում. նոյն վիճակն է ունենում Ֆարոնդիզը, որ ողբալով գալիս է հօր մօտ։ Սիաւուշին պաշտպանում է Փիլասմը, որին Սիաւուշ խնդրում է յայտնել ամէն բանի մասին Փիրանին։ Իսկ Գորուչին Սիաւուշին քարշ տալով տանում է դաշտ և մի թռչտ դնում է գլխի տակը և վիրը կտրում։ Ղիբասիաբ հրամայում է քարշ տալ և ձեռել Ֆարոնդիզին, մինչև որ նա երեխային վիժէ։ Փիրանը տեղեկանում է, գալիս է և հազիւ կարողանում է ազատել Ֆարոնդիզին և ուղարկել Խոթան*)։

## IV. ՍԻԱՒՈՒՇԻ ՔԷՆԸ.

*Քէյ Խոսրովի ծնունդը.* — Ֆարանդիզն ունենում է մի արու զաւակ, որին անուանում են Քէյ Խոսրով։ Փիրանը գնում է Ղիբասխաբի մօտ, որ վրճռում է մանուկին չը սպանել, այլ տալ հովիւներին։ Նրանց մօտ մեծ Քէյ Խոսրով տաս տարի և առիւծների դէմ էր գնում։ Փիրանն առնում է նրան իր մօտ և տանում է ներկայացնում Ղիբասխաբին։ Քէյ Խոսրով խնդիր է ձեռնում և թագաւորը պատանուն յանձնում է մօրը։

Քէյ Քաուս լսում է Սիաւուշի ողբերգութիւնը և ուշաթափւում է։ Գալիս է Ռոստամ և ուխտում է Թուրանն աւերել. հաւաքւում է 100 հազար զօրք, որ

*) Չինական Թուրքեստանում, մուսկուսի հայրենիքը։



Ռոստամի որդի Ֆարամորզի առաջնորդութեամբ դիմում է դէպի Թուրան։ Սորխէն, Ղիբասխաբի որդին, առաջնորդում է Թուրանի բանակը. բայց նա հանդիպում է Ֆարամորզին, որ բռնում է նրան և ողջամբ բերում Ռոստամի մօտ, որ յանձնում է եղբօրը՝ Զուարէին և նա սպանում է նրան։

Ռոստամ սպանում է Փիլսամին, որ խոստացել էր սպանել Ռոստամին և նեղն էր գցել Գիվին ու Գուդարզին և դիակը նետում է Թուրանի զօրքի կենտրոնը։ Ղիբասխաբ կրկին փախչում է Ռոստամի ձեռքից և Քէյ Խոսրովին ուղարկում է Խոթան։

Ռոստամ նստում է Ղիբասխաբի գահը և երկիրը բաժանում է փոխլեաններին։ Բայց մոգերը խորհուրդ են տալիս վերադառնալ Իրան և նրանք վերադառնում են մեծ աւարով։ Ղիբասխաբ վերադառնում է իր աւերուած տէրութիւնը։

Գուդարզ երազ է տեսնում, որ Քէյ Խոսրովին կարող է փրկել նրա որդին—Գիվը և վերջինս ճանապարհ է ընկնում Թուրան։ Պատահաբար նա հարցնում էր Ք. Խոսրովի մասին և երբ չէին խմանում, սպանում էր։ Եօթ տարի այսպէս թափառելուց յետոյ գտնում է Ք. Խոսրովին և գնում են Սիաւուշգարդ և գաղտնիքը յայտնում են Ֆարոնդիզին, որոշում են երեքով գնալ Իրան և Ֆարոնդիզ բացատրում է, թէ ինչպէս պէտք է բռնել և թամքել Շոբրոնդ Բէհզադին։ Զիերը թամքում են, զանձերն առնում են և գնում։ Փիրանն ուղարկում է Գէլբադին և Նաստիհոնին 300 հեծեալնեով նրանց յետևից, բայց զոյգ փոխլեանները փախչում են Գիվից, որ կոտորում է հեծեալներին։ Փիրանը գալիս է 3000 հոգով, անցնում է եղեգատը և յար-

ձակւում Գիվի վրայ, որ բռնում է նրան և միայն Ֆոռոնգիզի աղերսանքին զիջում ու ազատում է։ Ղֆրասիաբը զօրքով գալիս է փախչողների յետևից, բայց նրանք արդէն ձիով անցնում են Ջէյհունը և Հուժանը խորհուրդ չէ տալիս Իրան մտնել։

Գիվը Ք. Խոսրովի և Ֆոռոնգիզի հետ հասնում են Իրան և ցնծութեամբ ընդունւում. Քէյ Խոսրով թագաւորում է յայտարարւում։ Թուսը, որ Նովզոռի որդին էր և որոշ յաւակնութիւններ ունէր, գժտւում է Գիվի և Գուդոռզի հետ և հրաժարւում է մասնակցել հանդէսին, պատճառաբանելով, որ գահին արժանի լինելու համար հարկաւոր է շնորհք, որ Ֆոռիբորզը, Քէյ Քաուսի որդին աւելի ունի, քան Քէյ Խոսրովը։ Վէճը վերաւորական կերպարանք է ընդունում Թուսի և Գուդոռզի մէջ շահի մօտ, որ գտնում է, որ Ֆոռիբորզ և Ք. Խոսրով պէտք է մրցեն Բահմոն դղեակը գրաւելում, որ կռապաշտների որջն էր։ Ֆոռիբորզը Թուսի հետ առաջինն են փորձում, բայց նրանք տապից նեղւում են և յետ են նահանջում։ Ք. Խոսրով գնում է Գուդոռզի և Գիվի հետ, Աստուծոյ անունով մի նամակ է գրում, մթնում է, կարկուտ է գալիս և գևերը դուրս են գալիս փախչում, որոնց կոտորում են և ամրոցին ալրում։ Քէյ Խոսրով յաղթական վերադառնում է և ցնծութեամբ ընդունւում նոյն իսկ Ֆոռիբորզից ու Թուսից։ Քէյ Քաուս նստեցնում է Ք. Խոսրովին գահ և թագաւոր է հրատարակում։

13. ՔԷՅ ԽՈՍՐՈՎ, 60 տարի. — Սա Իրանի մեծ և միևնոյն ժամանակ՝ տիպիկ քինախնդիր թագաւորը դարձաւ։ Քէյ Խոսրովի թագաւորելու համբաւը լսելով գալիս են Զալ և Ռոստամ և շուքով ընդունւում։ Քէյ



Քաուս Քէյ Խոսրովի հետ պայման է կապում, որ գըրած էր «պահլաւերէն», որին վկայ են լինում Զալն ու Ռոստոմը և որի հիմքով Ք. Խոսրով պէտք է անհաշտ թշնամի լինի Թուրանին և վրէժ հանի։ Քէյ Խոսրով ազօթում է և ասում է, որ Իրանում բոլորը վշտացած են ղֆրասիաբից և առաջինը ես. պատրաստ էք նրա դէմ գնալու. բոլորն ուրախութեամբ ընդունում են։ Ցուցակագրւում են փոխլանները ու մովբդները։ Քէյ Խոսրով ընծաներ է խոստանում նրանց, որոնք կը բերեն Թուրանի փոլաշան և Թուժաւ (ղֆրասիաբի փեսան) հերոսների գլուխները և պատգամ կը տանեն ղֆրասիաբին ու պատասխան կը բերեն։ Սրձագանք են տալիս Գիվ, որդին՝ Բիժան և Գորգին։ Ք. Խոսրով Թուսին պատուիրում է առաջնորդել զօրքը ոչ Քելաթի*) ճանապարհով, որտեղ գտնւում է նրա եղբայրը (Զորիրէի որդի) Ֆորուդը։ Բայց Թուսը չը նայած Գուդոռզի նախազգուշացումներին, ընտրում է Քելաթի ճանապարհը։

Ֆորուդը տեղեկանում է Իրանի զօրքի գալու մասին և մօր խորհրդով պատրաստւում է սիրով ընդունել։ Թոխարից մէկ մէկ հարցնում է, թէ ովքե՞ր են Իրանի փոխլանները։ Գալիս է Գուդոռզի որդի Բահրամը և իմանում է, որ Ֆորուդ վրէժի կողմնակից է և պատրաստ է ճակատոյթ տալ փոխլաններին։ Բահրամը յայտնում է այդ մասին Թուսին, որ հարցնում է— ձի սրախողխող կանի այդ թուրքին։ Մէկը մեսի յետևից գնում և սպանում են Թուսի փեսայ Ռիվնիզը և որդին Զոլոտսպ. տպա գնում է ինքը Թուսը. Ֆո-

*) Ղֆղանէստանում, այլև Քորասանում։

բուդը դիտամբ սպանում է նրա ձիուն և Թուսը յետ է դառնում։ Գիվը վրդովւում է և ինքն է գնում. սրա էլ ձին սպանւում է. այն ժամանակ գնում է Գիվի որդին Բիժոնը, որ նոյնպէս կորցնում է ձին, բայց Ֆորուդին հալածում է քաղաք։ Ապա Ռոհամի հետ դարանում նստած, երբ Ֆորուդը նորից դուրս է գալիս քաղաքից, վիրաւորում են և նա մանում է բերդն ու մեռնում։ Զօրիբէն ոչնչացնելով ուսնեցուածքը, որովայնը ճեղքում է և մեռնում Ֆորուդի վրայ։ Ներս են մանում իրանցիք. Թուսը ղղջացել է, պատւաւոր յուղարկաւորութիւն են պատրաստում Ֆորուդի և Զոբոսպի և Ռիվինիզի համար։

Փոլաշանը գալիս է լրտեսելու Իրանի բանակը, բայց Բիժոն մենամարտի է դուրս գալիս նրա դէմ, սպանում է և ղուխը բերում բանակ։

Ղիբրասիաբ յանձնում է Փերանին նոր զօրք հաւաքել. իրանցիք Գիվի հնարագիտութեամբ հաղիւ են կարողանում անցնել մի շաբաթ շարունակ տեղացող ձիւնի միջից։

Թուժաւ գտնւում էր Գէրովդորդում. այնտեղ են գնում Գիվ և Բիժոն. վերջինս մենամարտում է Թուժաւի հետ և հարուածում է նրան, բայց կորցնում է։ Քաղաքն առնում են։

Փերանը գիշերը 30 հազար զօրքով աննկատելի կերպով գալիս է Իրանի բանակը, որտեղ միայն Գիվն էր արթուն և սկսում է կոտորել. Գուդարզը յայտնում է այդ մասին Բէյ Խոսրովին, Թուս յետ է կանչւում և անային բանտարկութեան է ենթարկւում և հրամանատարութիւնը յանձնւում է Ֆերիբորզին։ Սա մի ամսով պինդ պահում է խնդրում և ստանում



Փերանից։

Ժամանակամիջոցը լրանալուց յետոյ վերակրւում է պատերազմը. Թուրանցիք գրոհ են տալիս Իրանցիների կենտրոնի վրայ և Բէյ Քաուսի որդի Ռիվնիզը զոհ է գնում, կռիւ է սկսւում նրա սաղաւարտի շուրջը, որ Բոհրամը նիզակի ծայրով վերցնում է։ Գուդարզեանների 78 հոգուց մնում են միայն 8 հոգի. Իրանցիք ընկճուած են։

Բոհրամը գիշերը գնում է իր մարակը որոնելու, որ Ռիվնիզի սաղաւարտը վերցնելիս ցած էր գցել։ Թուրանցիք յարձակւում են նրա վրայ և նա մեծ նախճիրներ կատարելուց յետոյ սպանւում է Թուժաւի ձեռքով։ Գիվը և Բիժոնը գնում են դիակը փնտռելու. Բոհրամն ուշքի է գալիս և պատմում է անցքը. Գիվը հանդիպում է Թուժաւին, բռնում բերում է Բոհրամի դիակի մօտ և սպանում է։ Բոհրամի համար վառւում դամբ են պատրաստում։

Կռւող կողմերը վերադառնում են և Փերանն ընդունւում է Ղիբրասիաբի կողմից մեծ պատիւներով։

## ՔԱՄՈՒՍ ՔՈՇԱՆԻ ՄԻՋՆԱԴԷՊԸ.

Բէյ Խոսրով սաստիկ անարգում է Թուսին, բայց գալիս է Ռոստամ և խնդրում է ներել նրան։ Բէյ Խոսրով ներում է և ուղարկում է Թուսին Թուրան։ Փերան կեղծաւորում է իրանցիների հետ, թէպէտ իր ծառայութիւնները Սիաւուշին և պատրաստակամութիւն յայտնելով գալ Իրան. միաժամանակ յայտնում է Թիւն յայտնելով գալ Իրան. միաժամանակ յայտնում է Ղիբրասիաբին, որ իրանցիներին խաբել է և զօրք է ուղում. այդ հասկանում է Գուդարզ և ասում Թուսին։

Զօրքերը կարգի են գնում և սկսւում է կռիւը։

Ղրժոնդը յարձակւում է Թուսե վրայ, բայց Թուսը նրան սպանում է։ Մենամարտում են Թուսն ու Հումանն առանց հետևանքի։

Երկրորդ կռւին հերոսները զոյգ զոյգ կռւում են, յաջողութիւնը Թուրանի կողմն է։

Թուրանից մի կախարդ ձիւն է տեղում իրանցիների վրայ և թէպէտ նրան սպանում են, բայց իրանցիք նեղւում են և նահանջում դէպի Համավոն սարը։ Թուրանցիք գալիս ըղջապատում են, որպէսզի սովով ստիպեն կռւել։ Նորից կռիւ է տեղի ունենում, որից յետոյ նամակ են գրում Քէյ Խոսրովին։

Քէյ Խոսրով կանչում է Ռոստոմին և Ֆորիբորզին հրամանատար է նշանակում. Ֆորիբորզը խընդրում է Ք. Խոսրովի մօր Ֆորոնգիզի ձեռքը և Ռոստոմ յաջողեցնում է ու դուրս են գալիս դէպի ռազմադաշտ։ Այստեղ Թուսը երազին տեսնում է Սիաւուշին և որոշում են յարձակւել, բայց ղիֆրասիաբ Թուրանցիներին օգնութեան է ուղարկում Խազանին և Համուսին. իրանցիք յուսահատ են, միայն Ռոստոմ կարող է փրկել դրութիւնը։ Ուզում են վերջին յուսահատ յարձակումը գործել, երբ Իրանի կողմից փոշի է բարձրանում, զօրքով գալիս է Ֆորիբորզը։ Թուրանի բանակում որոշում են երեք օրից յետոյ յարձակում գործել։ Հորհրդակցութեան ժամանակ Համուսն ասում է, որ եթէ Ռոստոմը գայ էլ, չը պէտք է վախենալ։ Համուս կռւում է Գիվի և Թուսի հետ և սպանում է Թուսի ձին։

Ռոստոմ գալիս է և ընդունւում մեծ ցնծու-

*) Մոնղոլ կամ Թուրք իշխանաւոր, այլ և Բոդդիսան։



թեամբ ու մխիթարում է յուսահատ փոխլևաններին. զօրքերը կարգի են բերում, բայց Ռոստոմ հրաժարւում է այդ օրը կռւելուց Ռոխշի յոգնածութեան պատճառով։ Նա ասում է, որ այդքան զօրք նա իր օրում չի տեսել։

Թշնամի բանակից առաջ է գալիս մեծ փոխլեան Ղշկրուսը և մենամարտում Ռոհամի հետ։ Սա մի հարուած ստանալով փախչում է. ուզում է գնալ Թուրանի կողմը, Ռոստոմ չի թողնում և ինքը հետիոտն է դուրս գալիս, սկզբում սպանում է Ղշկրուսի ձիուն, ապա և իրեն, Ղշկրուսին։ Երբ տէգը նրա կրծքից հանում են և ցոյց են տալիս Խազանին, նա զարմանում և հարցնում է. ո՞վ է այդ հերոսը։

Հետևեալ օրը Թուրանի բանակից Համուս իրեն հակառակորդ է փնտռում։ Դուրս է գալիս Զաբուլէստանցի Ղլվան, Ռոստոմի ձեռնասունը, բայց սպանւում է և Համուսը նրան տրորում է ձիու սմբակների տակ։ Ռոստոմ նետւում է ռազմադաշտ, Համուս ընդառաջում է նրան. երկուստեք յոխորտանքից յետոյ Համուս խփում է Ռախշի պարանոցին, բայց անվնաս. Ռոստոմ պարանով բռնում է նրան, կապում և տանում բանակը։ Այնտեղ նրան սպանում են։ Թուրանի բանակում ողբում են Համուսին։

Այնուհետև Ռոստոմ սպառնում է Շոնգոլին և հրաժարւում է յայտնել անունը Հումանին, որ եկել էր Խազանի կողմից նրա մօտ և ասում է, որ վրէժ ունի հանելու Սիաւուշին սպանողներից։ Հուման գնում և ասում է. այդ փոխլևանը երևի Ռոստոմն է։ Փիրանը գնում է Ռոստոմի մօտ և սա յայտնում է իր ով լինելը և ասում է, որ կը հաշտուի, յանցապարտներին

պատժելու պայմանով։ Որոշում են կռուել։

Ռոստամի բանակում վճռում են վաղը կռուել, իսկ այսօր խմել։

Սկսւում է կռիւը. Շոնգոլ, որ խոստացել էր Խազանին սպանել Ռոստամին, փնտռում է նրան և սագզի*) է անուանում։ Ռոստամ նիզակով ցած է իջեցնում նրան ձիուց, բայց Թուրանցիք շրջապատում են Ռոստամին և Շոնգոլին փախցնում են։ Դրա փոխարէն Ռոստամ սպանում է Սաւէին, որ Քամուսի վրէժն էր պահանջում և Գոհար Քոհանին։

Երևում է սպիտակ փղի վրայ նստած Խազանը և Ռոստամին վիրաւորական խօսքեր է ասում։ Ռոխշի յոգնած լինելու պատճառով Ռոստամ հետիոտն է կռւում. բռնում, կապում և յանձնում է իւրայիններին Ֆուրթուսին և Ղորչէին և սպանում է Քալուին։ Խազանը նետ է արձակում Ռոստամի վրայ, սա պարանով ցած է գլորում նրան փղի վրայից և քաշ տալով տանում է մինչև Շոհդ գետը։

Թուրանցիք փախչում են, իսկ Ռոստամ խընջոյքից յետոյ դիմում է Թուրան։ Ֆորիբորզ Ռոստամի նամակով, ընծաներով և Խազանին հետն առած գնում է Քէյ Խոսրովի մօտ, որ Խազանին պահում է առանձին տեղում, իսկ Ֆորիբորզին պատասխան նամակով և շնորհակալութիւններով յետ է ուղարկում։

Աֆրասիաբ տեղեկանում է զօրքի ջարդուելու մասին և որոշում է կռիւը շարունակել։ Իրանի բանա-

*) Ռոստամի վիրաւորական անունը. այս բառն առաջացել է սակերի անունից, որոնցից ծագում էր Ռոստամը։ Մ. Խորենացին Ռոստամին Սագճիկ է անուանում, առանց իմանալու, որ այդ սագզի բառն է և վիրաւորական է Ռոստամի համար։



կը շարժւում է դէպի Սողդ*), որտեղ որս են անում և մի շաբաթ կերուխումով են անցկացնում։ Այդ տեղից անցնում են մարդակերների քաղաքը, որտեղ Ռոստամ սպանում է Քաֆուր մարդակերին։ Գիվը գալիս է Թուրանից մեծ աւարով, որի մի մասն ուղարկում են շահին, իսկ միւսը բաժանում զօրքին։

Աֆրասիաբ օգնութեան է կանչում Փուլադվոնդ դևին և խոստումներ է անում, եթէ նա սպանի Ռոստամին։ Նա Թուսին վայր է գլորում, Գիվին պարանով բռնում է, բայց բաց է թողնում, Ռոհամին և Բիժոնին էլ ցած է գլորում։ Ռոստամ վախենում է, տեսնելով փահլևանների դրութիւնը։ Կռւում են, յետոյ գօտեմարտում են։ Ռոստամ նրան բարձրացնում է և գետին նետում և կարծելով, որ նա սպանուած է, գընում է բանակը։ Փուլադվոնդը զօրքն առնում փախչում է։

Աֆրասիաբ զօրքը թողնում և փախչում է. զօրքն էլ հետևում է առաջնորդին։

Ռոստամ վերադառնում է Իրան և խանդավառութեամբ ընդունւում Ք. Խոսրովի կողմից։ Եօթն օր քէֆ են անում. Ռոստամ մի ամիս շահի մօտ մնալով ընծաներով մեկնում է Զաբոլէստան։

ՌՈՍՏԱՄԻ ԿՌԻՒԸ ԱՔՎԱՆ ԴԵՒԻ ՀԵՏ.—Ռոստամին յայտնում են Աքվան դևի մասին, որ լոյս էր ընկել հօտերի մէջ։ Ռոստամ գնում է. երկու անգամ պարանը գցում է, որ բռնի, նա անհետանում է։ Ռոստամ քնում է և երբ արթնանում է, տեսնում է իրեն դևի ձեռքում։ Դևը նրան նետում է ծովը։ Ռոստամ

*) Սամարղանդի շրջանում։

դուրս է գալիս ծովից և թաքը շալակած գնում է տեսնում Ռախլին ղիբասիաբի երամակում և պարա-նով բռնում է։ Ղիբասիաբ իմանալով այդ մասին, վը-ղերով գալիս է կռիւ, յաղթւում է և փղերն անցնում են Ռոստոմի ձեռքը։ Դրանից յետոյ Ռոստոմ հանդի-պում է ղբվան դևին, սպանում է և աւարով դառնում է Իրան, այնտեղից էլ Սիստան։

ԲԻԺԱՆ ԵՒ ՄԱՆԻԺԷ.—Էրմանցիները գալիս են Քէյ Խոսրովի մօտ և օգնութիւն են խնդրում վայ-րի խոզերի դէմ. Քէյ Խոսրովի առաջարկով Բիժոնը գնում է խոզերի դէմ, Գորգինին էլ ուղարկում է շահը։

Խոզերի հետ կռուելիս Բիժոնը խնդրում է Գորգինին օգնել, բայց նա հրաժարւում է, որովհետև վարձատրութիւն ստանալու է Բիժոնը։ Բիժոնը կո-տորում է խոզերին և առաւիները հաւաքում։

Գորգինը խորհուրդ է տալիս Բիժոնին գնալ ղիբասիաբի աղջկայ—Մանիժէի հանդէսը, որ երկու օրուայ ճանապարհ հեռու էր։ Գնում են մէկ օրում. Բի-ժոնը մուտք է գործում Մանիժէի մօտ և նրանք սիրա-հարւում են, գրկախառնւում և խնջոյք են կազմում։ Մանիժէն Բիժոնին դեղեր է խմցնում և տանում է ղի-բասիաբի պալատը, որտեղ նա հասկանում է, որ խար-ուած է Գորգինից։ Գաղտնիքն իմացւում է և ղիբա-սիաբ հրամայում է Գոբսիվոզին քաշ տալ նրան իր մօտ։

Գոբսիվոզ խաբեբայութեամբ կապում է Բի-ժոնին և տանում ղիբասիաբի մօտ, որ զայրանում է նրա վրայ, իսկ Բիժոն համարձակ ասում է. թող հա-զար թուրանցիները դուրս գան իմ դէմ, կռուենք։ Կա-պում են, տանում բանտարկում։ Բիժոնը ողբում է իր



բաղդը և սպառնում է Գորգինին Գիվով։

Փիրանը տեսնում է կախաղանը և նա համո-զում է ղիբասիաբին բանտարկել Բիժոնին, սպանելը վտանգաւոր համարելով վրէժի տեսակէտից։ Գոբսի-վոզը շղթայակապ տանում գցում է նրան մի խոր վիհ, որի բերանը ծածկում են ղբվան դևի բերած քարով։ Մանիժէին էլ պատւազուրկ բերում սպասուհի են կար-գում հորի մուտքի մօտ։

Գորգինը տեսնելով Բիժոնի անհետանալը, նրա ձիուն բռնում տանում է Իրան և ստում է, իբր թէ Բիժոնը պարանով մի ցիւռ բռնելիս անհետացել է։ Գիվն ուզում է նրան սպանել, բայց տանում է շահի մօտ։

Շահը նայում է կախարդական բաժակի մէջ և տեսնում է Բիժոնին Թուրանում մի հորի մէջ բան-տարկուած, մի արքայազն աղջիկ էլ պահապան։ Գի-վին ասում է, որ նրան կարող է փրկել միայն Ռոս-տոմը։

Գիվն անձամբ շահից նամակ է տանում Ռոս-տոմին, որ երեք օր կերուխումից յետոյ ճանապարհ է ընկնում. գալով թագաւորի մօտ, հազիւ կարողանում է ներսից տանել Գորգինի համար։

Վերցնում են հազար հոգի հեծեալ և եօթն փոխլևան (որոնց մէջ և Գորգինին) վաճառականի հա-գուստով և շատ ապրանք։ Փիրանի միջոցով առևտրի ապահովութիւն են տանում և ամէն կողմից գալիս են նրանցից ապրանք գնելու։ Գալիս է և Մանիժէն, պատմում Բիժոնի դրութիւնը և հարցնում Գիվի, Գոր-գրզի և Ռոստոմի մասին։ Ռոստոմ բարկանում է, ա-սելով, որ նրանց չի ճանաչում. ապա հրաժարում է մի

հաւ խորովել, մէջը դնում է մատանին, որ Բիժոնը ճանաչում է և կրկին Մոնիժէլին ուղարկում է Ռոստոմի մօտ. սա պատուիրում է պիշերը մեծ կրակ անել։ Պայմանաւորուած կրակի ուղղութեամբ գալով, Ռոստոմ դէն է գլորում հորի բերնի քարը, որ եօթ փոխլւանները դժուարանում են գլորել և Բիժոնին հանում է հորից երկարած մազերով և Մոնիժէլի հետ ուղարկում, իսկ ինքը եօթ փոխլւաններով գնում է ղֆրասիաբի արքունիքը, պահակներին կոտորում և ձայն տալիս ղֆրասիաբին, որ ինքը եկել և Բիժոնին ազատել է։ ղֆրասիաբը վախչում է և Ռոստոմ մեծ աւարով և Մոնիժէլին հետն առած դառնում է Իրան։ ղֆրասիաբ փորձում է Ռոստոմին բռնել, բայց կատաղի կռւից յետոյ պարտւում և փախչում է։ Ռոստոմ յաղթական մուտք է գործում Իրան և պատուով ընդունւում Թէյ Խոսրովի կողմից. ուրախ հանդէս են սարքում և նուէրներ տալիս Ռոստոմին, Բիժոնին և Մոնիժէլին։

## ՏԱՍՆԵՐԿՈՒ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Թուրանը և Իրանը նոր պատրաստութիւններ են տեսնում։ Իրանի զօրքի հրամանատարներ են նշանակւում Ռոստոմ, Լոհրասպ, Ղշքէշ և Գուդարզ։ Գիվի և Փիլրանի բանակցութիւնները հետևանք չեն տալիս և զօրքերը շարժւում են. սակայն ոչ մի կողմը չի ուզում սկսել վճռական կռիւը և երեք օր սպասողական դրութեան մէջ են անցկացնում։

Հումանը հակառակ Փիլրանի նախազգուշացումներին մօտենում է Իրանի բանակին և հետզհետէ առաջարկում է կռւել Ռոհամին, Ֆորիբորզին, նոյնիսկ



Գուդարզին, բոլորը մերժում են։ Գուդարզ արգելում է որևէ մէկին կռւել։ Հուման պահակներից չորսին սպանում է և հեռանում։ Բիժոնը հօրից, ապա պապից թոյլտւութիւն է խնդրում և յաջողում է ստանալ Հումանի հետ մենամարտելու։ Հօրից ստանում է Սիաւուշի զրահը և գնում է կանչում Հումանին կռւի դաշտ։ Բիժոնը ցած է առնում Հումանին ձիու վրայից և գերլռւթը կարում։ Ապա Թուրանի բանակի մօտիկութեան պատճառով հագնում է Հումանի զրահը և անվտանգ հասնում իր բանակը։ Գուդարզ առատ վարձատրում է Թոռին։

Փիլրանը յանձնում է Նոստրհոնին վրէժ առնել. նա գալիս է 10 հազար զօրքով և հանդիպում է Բիժոնին, որ հազար հոգի ունէր հետը։ Բիժոն Նոստրհոնին սպանում է և զօրքը ցրւում։

Գուդարզ զօրք է խնդրում Թէյ Խոսրովից, որ խոստանում է ուղարկել։ Սկսւում են բանակցութիւններ Փիլրանի և Գուդարզի մէջ. վերջինս մեղադրում է Փիլրանին կեղծաւորութեան մէջ և ընդհատւում են բանակցութիւնները։ Փիլրան օգնութիւն է խնդրում ղֆրասիաբից և խորհուրդ է տալիս անձամբ գալ ռազմադաշտ, ի նկատի ունենալով, որ նոյնն ուզում է անել Թէյ Խոսրով։ ղֆրասիաբ պատրաստ է։

Սկսւում է նոր կռիւ. երկու կողմից մի քանի փոխլւաններ կռւի են դուրս գալիս, բայց անհետևանք։ Փիլրանն առաջարկում է Գուդարզին մենամարտել, իսկ զօրքը ազատ մնայ։ Գուդարզ ասելացնում է դրա վրայ տասնմէկ զոյգ հերոսների մենամարտը, որ պէտք է տեղի ունենար միաբոդ դաշտում. դիտելու համար տեղ է որոշւում երկու կողմերի բլուրները։ Ստացւում են

հետևեալ զոյգերը, կազմուած իրանցիներից և թուրանցիներից։ Ֆորիբորզ—Քէլբադ, Գիվ— Գորուչի, Գորաշէ—Սիամոք, Ֆըրուհէլ—Զոնգոլէ, Ռոհամ—Բարման, Բիժոն—Ռուչին, Հոջիր— Սէփոհրամ, Գորգին—Ղնդոբիման, Բորթէ— Քոհրամ, Զոնգէ Շաւարան—Ախվաստ և Գուդարզ—Փիրան։Իրանի բոլոր հերոսները սպանում են հակառակորդներին, բացի Գիվից, որ Գորուչին ողջամբ է բռնում բերում բանակը. Գուդարզը Փիրանին սպանելուց յետոյ խմում է նրա արիւնից որպէս յաղթում Սիաւուշի և իր 70 արենակիցների վրէժի։

Տեղեկութիւն է ստացւում, որ Խոսրովը գալիս է զօրքերով։

Լոհակ և Ֆորիդվարդ եղբայրները, որոնց յանձնել էր Փիրան զօրքի առաջնորդութիւնը իր ըսպանուելու դէպքում, հարցնում են զօրքի տրամադրութիւնը և իմանում են, որ հաշտութիւն են ցանկանում։ Երկու եղբայրները առաջ ընկած գնում են. Գուդարզը հարցնում է—ձվ կերթայ նրանց յետևից. պատրաստակամութիւն է յայտնում Գոստահմը, որ մեհնամարտներին չէր մասնակցել և ուզում էր անուն վաստակի։

Բիժոնն իմանալով, որ Գոստահմը մենակ է գնացել վրդովւում է և չը նայած Գիվի արտունչներին, գնում է օգնութեան Գոստահմին։ Իսկ Գոստահմը հասնում է Ֆորիդվարդին և Լոհակին, սպանում է նրանց և ինքն էլ ծանր վիրաւորուած պառկում է մի ալբիւրի մօտ։

Բիժոնը գալիս գտնում է Գոստահմին, կըտրում է թուրք փոխլանների գլուխները, կապում ձիու վրայ, Գոստահմին էլ դնում է մի թուրքի գիրկ և



գնում է։

Ք. Խոսրով դուրս է գալիս զօրքը դիտելու, գիվը բերում է Գորուչին, որ սպանել էր Սիաւուշին։ Նրան ոչխարի պէս մորթում են և ջուրն են նետում։ Քէյ Խոսրով տխուր խորհրդածութիւններ է անում փիրանի մահուան առթիւ, նրա համար փառաւոր դամբէ են պատրաստում։ Գալիս է Բիժոնը Գոստահմի հետ, որի վէրքերը բժշկում են և պատրաստութիւն են տեսնում արշաւելու Թոնգ։

## ՔԷՅ ԽՈՍՐՈՎԻ ԵՒ ՈՖՐԱՍԻԱԲԻ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ք. Խոսրով որոշում է զօրքի հրամանատարութիւնը. նոյնն անում է և Ղֆրասիաբ։ Երկու կողմից էլ մոգերն ու աստղագէտները գուշակութիւններ են անում...

Ղֆրասիաբի որդին Փաշոնգը, որ Շիդէ էր կոչւում, ուզում է կռուել Ք. Խոսրովի հետ, եթէ նա համաձայնի։ Ղֆրասիաբ Շիդէին նամակով ուղարկում է Ք. Խոսրովի մօտ յայտնելու, որ լաւ է հաշտուենք, իսկ եթէ չես ուզենայ, մենամարտենք երկուսով։ Ք. Խոսրով մերժում է հաշտութիւնը, մերժում է պալատականների խորհրդով նաև Ղֆրասիաբի հետ մենամարտելը և համաձայնւում է մենամարտել Շիդէի հետ։ Ղֆրասիաբ տխուր է, նա երազ էր տեսել և ծածկում էր բոլորից։

Առաւօտեան կանուխ սկսւում է մենամարտը, Ք. Խոսրովը խփում է Շէդէին գետին և սպանում է, ողբում և փառաւոր դամբէ է պատրաստում. Ղֆրասիաբը սգում է որդու մահը։

Տեղի է ունենում ընդհանուր կռիւ. կարէնը որպէս զօրքերի հրամանատար յաղթում է Ջէհնին,

Ղֆրասիաբի երկրորդ որդուն և Թուրանի հրամանատարին։ Ք. Խոսրով սպանում է Ուստուքիլային և Իլային. Բուրղուիլան փախչում է։ Ղֆրասիաբը նահանջում է և չետ է անցնում Ջէյհունը։ Ք. Խոսրով նամակ է գրում Բաուսին յաղթութեան մասին և հետապնդում է Ղֆրասիաբին, որ փախչում է Գոնպ ամրոցը։

Ղֆրասիաբ նոր զօրք է կազմում, հրամանատարներ է որոշում, որոնց գլխաւորն էր Ջէհնը։ Բէյ Խոսրով աղօթում է, հոգի է բարձրանում և փոշին խըւում է թուրքերի երեսին։ Ղֆրասիաբ փախչում է Գոնպ ամրոցը։ Այդտեղից նրան խորհուրդ են տալիս գնալ Գոնգէբէհէշտ։ Ամէն կողմից տեղեկութիւն է գալիս Իրանի զօրքերի յաղթութիւնների մասին։ Ղֆրասիաբ զինադադարութեան է տալիս Իրան և Ֆողֆուրին*) օգնութեան է կանչում։

Ջէհնը գալիս է Ղֆրասիաբի պատգամով Բէյ Խոսրովի մօտ, որ յուզուած ընդունում է նրան և նըստեցնում է ոսկէ գահի վրայ։ Ղֆրասիաբն առաջարկում է հաշտութիւն կապել, իսկ Ք. Խոսրով գանելով, որ նա կեղծում է, մերժում է։

Պաշարում են ամրոցը և մի բացուած ճեղքից Ռոստամ ներս է մանում, տապալում է Գոբսիլոզին և Ջէհնին և մեծ սրածութիւն է առաջ բերում։ Ղֆրասիաբ գաղտնի անցքով 200 ձիաւորներով անցնում է անապատ և նրան չեն կարողանում գանել։ Ք. Խոսրով խնայում է Ղֆրասիաբի հարեմը և առհասարակ բոլորին։

Ղֆրասիաբը մեծացած Չինաստանի Ֆողֆուրի հետ վերադառնում է. Բէյ Խոսրով քաղաքում թողնելով պահապան զօրքեր, առաջ է գնում. նա սատանում է

*) Չինաստանի կայսր։



Ղֆրասիաբի նամակը, որ առաջարկում է նրան առանձնանալ և միհամարտել, պայմանով, որ յաղթողը խնայի յաղթուածի զօրքին։ Ք. Խոսրով հարցնում է Ռոստամի կարծիքը. նա խորհուրդ չի տալիս ընդունել այդ առաջարկը և իւր կողմից առաջարկում է նրան կռւել Թահմթանի*) կամ Գիվի հետ։

Սկսւում է կռիւը. քամի է բարձրանում և խփում թուրանցիների երեսին. Ղֆրասիաբ փախչում է. Չինաստանի խազանը տեսնելով, որ Ղֆրասիաբի հաշիւը վերջացել է, պատգամաւոր է ուղարկում Բէյ Խոսրովի մօտ, որ պատուիրում է նրան Ղֆրասիաբին չընդունել իր երկիրը։

Ղֆրասիաբ փախչում է մինչև Զարեհ լիճը. Ք. Խոսրով հրամայում է հետևել նրան և աւար ու գերի ներ է ուղարկում Ք. Բաուսին Գիվի ձեռքով, որոնց մէջ էին Գոլսիլոզ և Ջէհնն։

Ք. Խոսրով պատգամ է ուղարկում Ֆողֆուրին և Մոքրանի շահին, որ պատրաստութիւններ տեսնեն իրեն ընդունելու և ճանապարհ տան զօրքին անցնելու։ Ֆողֆուրն ուրախութեամբ ընդունում է և Բէյ Խոսրով երեք ամիս մնում է նրա երկրում. Ռոստամին թողնում է այնտեղ և անցնում է Մոքրան, որտեղից Ք. Խոսրովի պատգամաւորը չետ է ուղարկւում և պատրաստւում են կռւի։ Ք. Խոսրով յաղթում և պատժում է նրանց, մի տարի մնում են այնտեղ. գարնանը Ղէշին թողնում է այնտեղ և ինքը Զարեհ ծովով մեծ դժուարութեամբ անցնում է Գոնգ, որտեղ գտնւում էր Ղֆրասիաբը. ծովի երեսին մնում են եօթն ամիս և

*) «Հսկայամարմին», Ռոստամի մակդիրներից է։

տեսնում են ամէն տեսակ հրէշներ և հրաշալիքներ, հասնում են Գոնգ և հիանում այստեղի փարթամ բուսականութեամբ, բայց Ղֆրասիաբ արդէն անհետացել էր, վերադառնում են և մի տարի Սիաւուշգորդում մնալուց յետոյ Ք. Խոսրով դառնում է Իրան. Նա Բուխարայով, Թալգանով, Մորվրուդով, Նէշաբուրով, Դամղանով, Ռէյով և Բողդադով անցնում է Ֆարս պալի մօտ։ Ռոստոմ և միւսները նոյնպէս հայրենիք են վերադառնում։

Ղֆրասիաբ երկար թափառելուց յետոյ բնակութիւն է հաստատում Բորդոյի*) մօտ մի այրում։ Համ ճգնաւորը նրան ճանաչում է, մենամարտում են, Համը նրան գետին է գլորում, կապում և տանում է. ճանապարհին Ղֆրասիաբ խնդրում է կապերը թուլացնել և անհետանում է։ Գիվն իմանում և պատմում է զոյգ թագաւորներին, որոնք գալիս են Համի մօտ. վերջինս առաջարկում է բերել Գորսիվազին, որի հեծեծանքը լսելով Ղֆրասիաբ դուրս է գալիս ափ և սըգում է եղբօր տառապանքը։ Համը պարանով նորից բռնում է Ղֆրասիաբին և յանձնում է Ք. Խոսրովին ու անհետանում։ Ք. Խոսրով կտրում է Ղֆրասիաբի վիզը և Գորսիվազին մէջքից երկու կտոր է անում։ Ղֆրասիաբին պատւով թաղում են և Թուսը լաց է լինում վրան։ Վերադառնում են և քառասուն օր ուրախութիւն են անում, որից յետոյ մահանում է Քէյ Քաւուս։

## ՔԷՅ ԽՈՍՐՈՎ ԱԶԱՏՈՒՄ Է ԶԷՀՆԻՆ ԵՒ ԹՈՒՐԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՏԱԼԻՍ Է ՆՐԱՆ.

Զէհնին հանում են բանտից և Քէյ Խոսրով

*) Յիշւում է Ալէքսանդր Մակեդոնացու (Էսկոնդարի) պատմութեան մէջ։



տալիս է նրան Թուրանի թագաւորութիւնը, պայմանով, որ վատութիւն չանի. Գոստոհամին, որ մնացել էր Թուրանի կառավարիչ, պատւով յետ է կանչում։

Ք. Խոսրով վաթսուն տարի թագաւորելուց յետոյ զգում է աշխարհի ունայնութիւնը. Նա ընդունում էր աւազանում, լսում նրա տրտունջներն այդ առթիւ, ապա հրամայում ոչ ոքի չընդունել, փակւում էր և աղօթում։ Փահլևաններն ուղարկում են Գիվին Զալի մօտ յայտնելու շահի տարօրինակութիւնների մասին։ Քէյ Խոսրով երազին տեսնում է Սիաւուշին, որ պատւիրում է թագաւորութիւնը յանձնել Լոհրասպին և՛ իր մօտ գալ։ Զալը և Ռոստոմը գալիս են և փահլևանների հետ ներկայանում են Ք. Խոսրովին։ Զալը նախատում է շահին, որ նա դևերի հետ գործ ունի, բայց Ք. Խոսրով նեղանում է, որովհետև նա Աստծուն հետևող էր. Զալը ներողութիւն է խնդրում։

Ապա Ք. Խոսրովը կտակ է անում. Նա Ռոստոմին տալիս է ընդհանուր հրամանատարութիւնը և Զաբուլեստանը, Գիվին Ղոմ*) ու Իսպահանը, Թուսին Քաւէի դրօշակը, ոսկէ կօշիկ և Խորասանը։ Լոհրասպին տալիս է թագաւորութիւնը։ Զալը դժգոհ է և բողոքում է. Ք. Խոսրով ասում է, որ նա ծագում է Հուշանգից և ինքը հօր պատուէրն է կատարում։ Բոլորը համաձայն են։ Իր չորս կանանց յանձնում է Լոհրասպին և գնում է. փահլևանները 100 հազար զօրքով հետևում են նրան։ Սարը հասնելուն պէս նա ասում է, որ ձիւն կը գայ և անհետանում է. Զալը, Ռոստոմը և Գուդարզ վերադառնում են. սկսւում է սարսափելի ձիւն և փահլևաններից շատերը, ինչպէս Թուս, Գիվ, Ֆորիբորզ, Բիժոն, ձիւնի մէջ մեռնում են։ Լոհրասպը թագաւորում է։

*) Սովոր. տառադարձութեամբ Կում կամ Ղում, Թէհրանին մօտ։

14. ԼՈՀՐԱՍՊ, 120 տարի։ Լոհրասպ յայտարարում է նոյն սկզբունքները, ինչ որ Քէյ Խոսրով մահուանից առաջ և Չինաստանից ու Հնդկաստանից վարպետներ է բերում և Բալխ քաղաքը նորոգում է և Բուդին կը-րակարանն է շինում։

Լոհրասպի մեծ որդին Գուշթասպը դժգոհ իր հօրից, որ իրեն թագաւորութիւն չի տալիս, գնում է Հնդկաստան։ Հայրը միւս որդուն Զարիրին և ուրիշ-ներին ուղարկում է, Զարիր գտնում է նրան ու բե-րում. բայց հայրը ուշադրութիւն չէ դարձնում նրա պահանջներին և Գուշթասպ գնում է Յունաստան (Ռում) և ուղարկուած մարդիկ չեն կարողանում գտնել նրան։

Միւս ամ անց է կացնում նրան Հիշույը, որ հարցնում և իմանում է նրա գաղտնիքը. դրամը պըրծ-նելուց յետոյ Գուշթասպ գործի է մտնում մի գործըն մօտ, բայց որովհետև անչափ ուժեղ էր, մուրճով խը-փում է սալը կոտրում և սուված ճնշով հեռանում է։ Ապա մի դեհգանի տուն է գնում և գաղտնիքը նրան յայտնում։

Կայսրը մի աղջիկ ունէր Քոթայուն անունով. Նա ամուսնու ընտրութիւն է անում, ընտրութիւնն ընկնում է Գուշթասպի վրայ, որ աղքատ էր և որոշ-դութեամբ էր պարապում, որից մաս էր հանում Հի-շույին։ Կայսրը դժգոհ էր, նոյն խակ ուզում էր աղջը-կան սպանել։ Նրանք ապրում էին դեհգանի տանը ա-ռանձին բնակարանում։

Մերին անունով մէկն ուզում է կայսեր երկ-րորդ աղջկան առնել, թագաւորը առաջարկում է սպա-նել անհեռի գայլին. Մերինը Հիշույի միջոցով Գուշ-թասպին է առաջարկում սպանել գայլին և տալիս է նը-



րան Սոլմի ղէնքերը և ձի։ Նա սպանում է գայլին, որ եղջիւրով (sic) ձիու փորը պատռում է և կորում է նրա առաջները։ Մերինը պարգևներ է տալիս և գնում է կայսեր աղջկան առնում է։ Գուշթասպը կնոջն այդ մա-սին չի ասում։

Ղհրոն անունով մէկը ուզում է առնել կայսեր երրորդ աղջկան և առաջարկութիւն է ստանում սպա-նել երևան եկած սարսափելի վիշապին։ Նա Մերինից իմանում է նրա գաղտնիքը և խնդրում է Գուշթասպին. սա սպանում է վիշապին և առաջները կորում։ Ղհ-րոնը նոյնպէս հիացմունք է պատճառում բոլորին։

Մի օր Գուշթասպն իմանում է, որ Մերինն ու Ղհրոնը չովգան են խաղում. նա գնում է մարզադաշտ, աչ ու ձախ հարուածում է գնդակին և բոլորին զար-մանք պատճառում. կայսրը հարցնում է նրա ով լինելը և իմացւում է, որ գայլին և վիշապին սպանո-ղը նա է։

Կայսրը հարկ է պահանջում Խազարների թա-գաւոր Էլիասից, բայց սա գերազանցում է պատերազ-մել. Մերինը առաջարկ է ստանում մենամարտել Էլիա-սի հետ. Գուշթասպ մենամարտում է, հարուածում է և քարշ տալիս տանում կայսեր մօտ։

Կայսրը հարկ է պահանջում Իրանից և այդ նպատակով մի ծերունի է ուղարկում այնտեղ։ Նա ա-սում է, որ Ռումում մի անուանի փոհլևան է լոյս ըն-կել, որին փեսայացրել է կայսրը և որ շատ նման է Զարիրին։ Լոհրասպ հասկանում է, որ նա Գուշթասպը պէտք է լինի և ուղարկում է Զարիրին, որ Գուշթաս-պին և Քոթայունին Իրան է բերում։

15. ԳՈՇԹԱՍՊ 120 տարի.— Լոհրասպը գնում է

Բոլխ ուխտի և թագաւորում է Գուշթասպը: Սա Քաթայունից ունէր երկու որդի փոհլևան Ըսֆանդիար և Փշութոն:

Գուշթասպի թագաւորութեան ժամանակ Զարդոհոշտ (Զրադաշտ) երևան է գալիս և Գուշթասպ ընդունում է նրա վարդապետութիւնը:

## ԿՐՕՆԱԿԱԱՆ ՔԷՆ

Գուշթասպ Զրադաշտի խորհրդով մերժում է հարկ տալ Թուրանի թագաւոր Արջասպին: Նառէ դևը (արու դևը) գնում է Արջասպի մօտ և ասում է, որ այս բոլորը Զրադաշտն է անում. նա Աստուծոյ գրած Զոնդոաստան (Զոնդ օ Ըւաստան) բերել և մոլորեցրել է Գուշթասպին. եթէ նա չը համոզուի նոր կրօնը թողնել, 100 հազար զօրք կը բերեմ երկիրը կաւերենք: Արջասպը այդ ուղղութեամբ մի սպառնական նամակ է գրում Գուշթասպին:

Նամակին պատասխանում են Զարիր, Ըսֆոնդիար և Ջամասպ (որ թագաւորի դստուրն էր—ուղեցոյցը) սպառնագին և հայհոյական խօսքերով:

Արջասպ զօրք է հաւաքում և երկու եղբայրների՝ Քոհրամի և Ընդիրմանի առաջնորդութեամբ ուղարկում է Իրան: Գուշթասպ նոյնպէս զօրք է հաւաքում:

Գուշթասպ առաջարկում է Ջամասպին գուշակել պատերազմի ելքը. նա տհաճութեամբ յանձն է առնում և գուշակում է, որ Զարիրը, շահի որդիները և ուրիշները կընկնեն պատերազմում. բայց Ըսֆոնդիար յաղթող կը հանդիսանայ:

Եւ իրաւ, մեծ քաջագործութիւններից յետոյ



սպանւում են շահի որդիները Ըրդաշիրը, Շիրօն, Շիդասպը և Ջամասպի որդի Գորամը: Ի վերջոյ սպանւում է թունաւորուած նետով և ինքը՝ Զարիր (Բիդարոֆշի ձեռքով): Գուշթասպ ոգևորում է Ըսֆոնդիարին գահը խոստանալով նրան և Ըսֆոնդիար սարսափելի վրէժ է հանում, կոտորելով աջ ու ձախ և սպանում է Բիդարոֆշին: Արջասպ փախչում է ռազմադաշտից. համարում են ընկածներին. իրանցիները 30 հազար հոգի էին, թուրանցիները 100 հազար: Գուշթասպ 10 հազար հեծեալ է տալիս Զարիրի որդուն Նաստուրին գնալու Թուրան վրէժ հանելու և դառնում է Իրան: Բոլոր հարևան պետութիւնները հարկ են վճարում:

Գուշթասպ յանձնում է Ըսֆոնդիարին քարոզել զրադաշտականութիւնը Ռումում, Հնդկաստանում և Եմենում, որ և նա կատարում է մեծ յաջողութեամբ:

Գուրազմը, որ թագաւորի ազգականներից էր, ատում է Ըսֆոնդիարին և նրան ամբաստանում է թագաւորի առաջ: Թագաւորը կանչում է նրան, կապում և ուղարկում Գոմբոդի դղեակը և պահապաններ կարգում վրան:

Գուշթասպ հիւր է գնում Ռոստոմի մօտ Զաբոլըստան և երկու տարի մնում է այնտեղ: Արջասպ լսելով, որ Բոլխը թափուր է մնացել, զօրք է հաւաքում Խոլխում և Բոլխ է ուղարկում որդու Քոհրամի առաջնորդութեամբ: Լոհրասպը դուրս է գալիս կռուի, բայց նրան սպանում են. նոյն բաղդին է արժանանում և մեծ Ազարի (կրակի) հիրբեդը*) և 80 մոգեր. կրակը

*) Հրպետ, ատրուշանի պետը

հանգցնում են, կանանց և աղջիկներին գերի են տանում։

Գոշթասպը տեղեկանում է այդ մասին իր կանանցից մէկի միջոցով, որը Թուրք կնոջ հագուստով եկել էր Սիստան. Նա վերադառնում է Բոլխ, բայց Արջասպ աւելի մեծ զօրքեր է բերում. Քոհրամն ընկնում է Թուրանի կողմից, բայց Իրանից կոտորւում են Թագաւորի որդիքը։

Գոշթասպը փախչում է մի սար և խորհուրդ է հարցնում Ջամասպից. Նա խորհրդատրում է շուտափոյթ արձակել Էսֆոնդիարին և ինքն է յանձն առնում անել այդ. Նա Թուրքի զգեստով գալիս է Գումբոդ դղեակը և յարգանքի նշաններ է անում Էսֆոնդիարին, բայց վերջինս ասում է, որ կալանաւորը արժանի չէ յարգանքի։ Ջամասպ ճգնում է Լոհրասպի սպանումով, քոյրերի առևանգումով և եղբայրների մահով մեղմացնել Էսֆոնդիարի սիրտը։ Դարբինները գալիս են, որ շղթաները ջարդեն, չեն կարողանում. Նա ինքն է խորտակում և ասում, որ սրանք չէին ինձ բանտում պահողը, այլ հօրս պատուէրը։

Էսֆոնդիար Ջամասպի հետ գնում է Գոշթասպի մօտ. ճանապարհին տեսնում է վիրաւոր եղբօրը՝ Ֆարշիդվարդին, որ մեղադրում է հօրը և Գորազմին. տեսնում են հազարաւոր դիակներ, որոնք ծածկել էին պատերազմի դաշտը, որոնց մէջ և Գորազմին և նա տխուր խորհրդածութիւններով հեռանում է։

Գոշթասպի մօտ գնալով Էսֆոնդիար յարգանքի նշաններ է անում. Գոշթասպ ասում է մեղքը Գորազմինն է, իսկ Էսֆոնդիար յայտնում է, որ ինքը լացել է նրա վրան։ Էսֆոնդիար անմիջապէս միաց-



նում է զօրքերը և Արջասպն այդ իմանալով ուզում է փախչել, որովհետև «դիվզադի» (դևորդու) հետ չի կարելի կռւել. բայց Գորգսար անունով մէկը խոստանում է սպանել Էսֆոնդիարին և սպասում են վաղուան։

Էսֆոնդիար առաջնորդում է բանակը Գոշթասպի և Նասթուրի հետ. Նա սպանում է 160 հոգի Լոհրասպի փոխարէն և 165 հոգի եղբայրների փոխարէն։ Արջասպ ուղարկում է նրա դէմ Գորգսարին, որին նա հարուածում և կապում է։ Արջասպ փախչում է, իսկ Թուրանի բանակը ներողութիւն է խնդրում և Թողութիւն ստանում։

Գոշթասպ կրկին ուղարկում է Էսֆոնդիարին Արջասպի դէմ. Էսֆոնդիարն ասում է. Լոհրասպի վրէժը լուծեցի յոյս ունենալով գահն ստանալ. Գոշթասպ ասում է քոյրերդ գերութեան մէջ են, նրանց ազատիր և գահն ստացիր. Նա համաձայն է. Գորգսարին հետն առած գնում է։

## ԷՍՖՈՆԴԻԱՐԻ ԵՕԹ ԱՐԿԱԾՆԵՐԸ (ԿԱՅԱՆՆԵՐԸ).

Էսֆոնդիար խոստանում է Գորգսարին ճըշմարտախօս լինելու դէպքում նրան տալ Թուրանի Թագաւորութիւնը. Նա համաձայն է։ Էսֆոնդիար հարցնում է ո՞րն է Ռույին դղեակը (որտեղ նրա քոյրերն էին բանտարկուած) տանող ճանապարհը. Գորգսարը պատասխանում է երեք ճանապարհ կայ, երեք ամիս, երկու ամիս և մի շաբաթ տևողութեամբ. վերջինը լի է առիւծներով, գայլերով, վհուկներով։ Էսֆոնդիար ընտրում է վերջին ճանապարհը։

ԿԱՅԱՆ 1. Ճանապարհին նախ և առաջ հանդիպում են երկու վայրագ գայլերի, որոնք փղի էին

նմանում. Էսֆոնդեարը ճեղքում է նրանց դլուխները։

ԿԱՅԱՆ 2. Գալիս են արու և էգ առիւծները. երկսին էլ սպանում է և Գորգսարին երեք բաժակ պինի խմցնելուց յետոյ իմանում է, որ այժմ հերթը վիշապինն է. անդուկներ է շինել տալիս, ինքը նստում է մէջը, ձիերին էլ յարմարեցնում և դնում է։

ԿԱՅԱՆ 3. Վիշապը ձգում է անդուկները դէպի իրեն. Էսֆոնդիարը դուրս է դալիս և գլուխը ջախջախում, բայց թոյնից արբած ընկնում է։ Յետոյ քաթափւում է և իմանում, որ այժմ վհուկին պէտք է տեսնի։

ԿԱՅԱՆ 4. Մի ապրիլի մօտ եղած ժամանակ դալիս է մի դիպատեսիլ թրքուհի, դինի է տալիս, նա վհուկ է դառնում, շղթան ձգում է վիզը, առիւծի է փոխւում և Էսֆոնդիար սպանում է նրան։

ԿԱՅԱՆ 5. Գալիս է Սիմորդը և ուզում է սայլն արկղով որսալ, բայց այնտեղ կապած սրերը կտրատում են թևերը. Գորգսարը սարսափով է նկատում դալիք ձիւնի արհաւիրքները։

ԿԱՅԱՆ 6. Երեք օր երեք դիշեր առատ ձիւն է տեղում. Էսֆոնդիար ազօթում է, մեղմ հողմը ցրում է ամպերը և ձիւնը դադարում է։

ԿԱՅԱՆ 7. Առաջները մի ծով է բացւում, շառւիղը խեղդւում են. նա բարկանում է Գորգսարի վրայ և նա անիծում է Էսֆոնդիարին։ Էսֆոնդիար նրա գլուխը ճեղքում է սրով։ Հասնում են Ռուբին ամրոցը։

Էսֆոնդիար վաճառականի հագուստով գնում է Արջասպի մօտ, նուէրներ է տալիս և իրաւունք ստանում առուտուր անելու։ Գաղմում է, որ եկել են



երկար ճանապարհով և շատ նեղութիւն են կրել։ Լուր կայ, որ Էսֆոնդիար Հոֆախանով (եօթ կայանով) գալիս է Արջասպի վրայ. Արջասպ ծիծաղում է. Էսֆոնդիարի քոյրերը գալիս են կուժ առնելու և պատմում են իրենց դժբախտ կացութեան մասին, որ ստիպուած են ջուր կրել։ Էսֆոնդիար բարկանում է քոյրերի վրայ, ապա գաղտնիքը բաց է անում և պատւիրում է դղեակ լինել։ Էսֆոնդիար Թագաւորից Թոյլտւութիւն է խնդրում ի յիշատակ ծովից ազատուելու խնջոյք պատրաստել։ Նա մի մեծ կրակ է վառում, իբր թէ կերակուր եփելու և հրաւիրում է մեծամեծներին ու հարբեցնում։

Փշուքիոնը կրակի ծխից իմանում է, որ ժամանակն է յարձակուելու և շրջապատում է դղեակը. Արջասպն էլ իր զօրքն է պատրաստում. փոհլևան Թարխանն սպանւում է մենամարտում Նուշ Ազոբի ձեռքով։

Գիշերը Էսֆոնդիար բաց է անում արկղները, ընկերներին դինում է, քոյրերին ուղարկում է կայան և գնում է Արջասպի մօտ. տատ է երեկուայ վաճառականից մահ կը ստանաս, որ նա նուէը է բերել Լոռբասպից, Գոշքատպի սէրն էլ վրան։ Մորթում է և դղեակում մարդ թողնելով գնում է Փշուքիոնի մօտ։

Էսֆոնդիար հանդիպում է Քոհրամին, զօտուց բռնում է խփում գետին, կապում տանում է։ Զօրքը սկսում է փախչել. գալիս են Էսֆոնդիարին խնդրում, որ խնայի, բայց նա անողոք է։

Էսֆոնդիար վերադառնում է Գոշքատպի մօտ Հոֆքխանով, իսկ զօրքն ուղարկում է երկար ճանապարհով, ինչպէս և ատաքը, որ հազարաւոր ուղտերի էր բարձած. Էսֆոնդիար առանց պատահարների տեղ է հասնում և մեծ խնջոյք են պատրաստում։

## ԷՍՖՈՆԴԻԱՐԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

Էսֆոնդիար դժգոհ է, որ հայրը իշխանութիւնը չի յանձնում նրան և գանգատւում է մօրը։ Երեք օրից յետոյ հայրը կանչում է Ջամասպին և հարցնում է—երկա՞ր կեանք պէտք է ունենայ Էսֆոնդիար. Ջամասպն ասում է, որ նա կընկնի Ռոստոմի ձեռքից։ Գոշթասպ գահն է նստում և ժողով է գումարում։ Գալիս է Էսֆոնդիար և պահանջում է իշխանութիւնը։ Գոշթասպն ասում է. Ռոստոմը ինքնագլուխ է. Լոհրասպին ընտրելուն նա նրա գահին փոխի տեղ հող ածեց. նրան, հօրը և եղբօրը պէտք է կապես և բերես։ Էսֆոնդիար պատասխանում է, որ Ռոստոմ յարգելի փոհլևան է, դու նրա հետ գործ չունես. ուզում ես ինձնից ազատուել, բայց ես հնազանդ հօրս խօսքին կերթամ։

Կաթայունը կանչում է Էսֆոնդիարին և աշխատում է համոզել, որ նա չերթայ, չի համոզւում և գնում է։

Զաբուլիստանի ճանապարհին Գոմբոդան գլխակի մօտ ուղտը պառկում է և չի վեր կենում. խփում են գլխին, չի շարժւում. գլուխը կտրում են։ Էսֆոնդիար տխրում է և Փշութոնին ասում է. Ռոստոմին չեմ վիրաւորի, խոհեմութեամբ կը վերջացնեմ հետը։

Էսֆոնդիար հրամայում է Բահմանին պատշաճ ձևով գնալ Ռոստոմի մօտ և ասել, որ այս տունը Քէյ Խոսրովից յետոյ անուշադիր է թողել շահերին. հնազանդուիր Գոշթասպին, այլապէս Էսֆոնդիար ստիպուած կը լինի կապել քեզ և տանել։

Բահման գնում է Ռոստոմի մօտ. նրան դիմաւորում է Զալը և ասում է, որ Ռոստոմ որսատեղումն է. Բահման գնում է հեռուից տեսնում է մի անհղատեսիլ հսկայ. մտածում է, որ Էսֆոնդիար չի կարող նրա հետ գուպարել և մի քար է գլորում դէպի Ռոստոմը. նա ոտքով խփում է քարը դէն է շպրտում։ Բահման մօտենում է, նրան հրաւիրում են ճաշի։ Թոհմըթոնը մի ցիռ է ուտում մենակ և զարմանում է Բահմանի քչակերութեան վրայ։ Ճաշից յետոյ յայտնում է պատգամը։



Ռոստոմ տալիս է վեհանձն պատասխան. ես կը գամ քեզ մօտ, բայց ինձ հետ կռուելը երկիւղալի է։ Խոհեմ եղիր, կը գնամ Թագաւորի մօտ, կը համբուրեմ գլուխն ու ոտը և կը հարցնեմ, թէ ինչո՞ւ պէտք է ինձ կապել։ Եւ ուղարկում է Զալին ասելու, որ Էսֆանդիար եկել է, տունը պատշաճ կերպով պէտք է զարդարել։ Էսֆոնդիար Ռոստոմի պատասխանը լսելով զայրանում է, որ Ռոստոմ այդքան ինքնահաւան է։

Ռոստոմ և Էսֆոնդիար իրար մօտ են գալիս. Ռոստոմ հրաւիրում է իրենց տուն, Էսֆոնդիար հրաժարւում է, ասելով, որ այդ դէպքում չի կարող հօր պատուէրը կատարել։ Էսֆոնդիար ճաշում է և Ռոստոմին չի հրաւիրում, բայց ներողութիւն է խնդրում, ասելով, որ վաղը կանցնի Զալին տեսնելու և առաջարկում է գինի խմել։ Գինու ժամանակ Էսֆոնդիար վատաբանում է Ռոստոմի տոհմը. Զալը դիվզադ (դեւորդի) է եղել սպիտակ մազերով, որին կիսաքաղց կերակրել է Սիմորգը հատած մսով. նրա որդին է Ռոստոմը, որ հօր ճանապարհն է բռնել, այստեղից և նրա անհնազանդութիւնը։ Ռոստոմն ասում է—մի շեղուիր ուղիղ ճանապարհից. Զալը յարգելի փոհլևան է. պապս՝

Սամը մեծ քաջագործութիւններ է արել, նույնը և ես. աւելացնում է, որ Էսֆոնդիարի թշնամին իր հայրն է. իրար ձեռք են սեղմում, Ռոստոմի ձեռքից դեղին ջուր է գալիս, Էսֆոնդիարի ձեռքն արնոտում է։ Էսֆոնդիար ասում է. վաղը կը գանք մենամարտի, ես քեզ առանց վնասելու կը կապեմ կը տանեմ. Ռոստոմ ասում է. ես քեզ թամքից կառնեմ կը տանեմ Զալի մօտ, թագաւոր կը պսակեմ, կը տանեմ Գոշթասպի մօտ, դու շահ, ես փահլեւան։

Գինի են խմում և իրար յետեւից պառներ են գնում Ռոստոմի առաջ։ Ռոստոմ կրկին և կրկին աշխատում է համոզել Էսֆոնդիարին չը կռուել, նա միշտ ասում է քեզ կը կապեմ կը տանեմ։ Սկսում են յախորտալ և իրար սպառնալ։ Փշութոնը տեսնելով Էսֆոնդիարի յամառութիւնը, ասում է Էբլիսն է քո մէջ խօսում։

Ռոստոմ տխուր գնում է տուն։ Զալը մտահոգ է. եթէ Ռոստոմն սպանուի, տոհմը կը ջնջուի, եթէ սպանի, մեծ խայտառակութիւն է։ Պէտք է գնալ խընդրել և ծառայութիւն անել։ Ծիծաղելի է նրան թամքի վրայից գրկել բերելը։

Ռոստոմ զինւում և մենակ գնում է Էսֆոնդիարի մօտ։ Սկսւում է մենամարտը. կռւում են նիզակներով, տէգերով, կոպալներով, իրար գոտի բռնելով. երկուսն էլ ջարդուած բաժանւում են։

Ընդհարում է տեղի ունենում զաբուլստանցիների և իրանցիների մէջ. սպանւում է մի զաբուլստանցի և Էսֆոնդիարի որդիքը (Նուշազար և Մեհրնուշ — Զուարէի և Ֆարամորզի ձեռքով). Բոհմոնը վազում է և Էսֆոնդիարին ասում, որ սագզիները բա-



պանեցին որդիներիդ։ Էսֆոնդիար կատաղում է և հայհոյում Ռոստոմին, որ երդւում է, որ ինքը չէ հարկադրողը։ Եղբօրս և որդուս կը բերեմ մօտդ, սպանիր, ասում է նա։ Էսֆոնդիար պատասխանում է, որ սիրամարգի արեան փոխարէն օձի արիւն թափելը վայել չէ։

Ռոստոմ խոնջացած և թուլացած մենամարտից փախչում է սարը, իսկ Ռախշը հազիւ քայլում է տուն. Էսֆոնդիար ասում է—խաբեբայ ծերունի, չեմ ուզում քո մահը, գնա կազդուրուիր և զարմանում է, թէ ինչպէս է այդ հսկան այդպէս խեղճացել։ Նա որդիներին դագաղի մէջ ուղարկում է հօրը—Գոշթասպին, ասելով դու սպանեցիր դրանց։

Ռոստոմի գերդաստանում խորհրդակցում են—ինչ պէտք է անել։ Ռոստոմն ասում է. Էսֆոնդիար ռույինթոն*) է, նրա հետ չի կարելի կռուել, մնում է փախչել լեռները. Զալը խորհրդատրում է դիմել Սիմորղին. այրում է նրա փետուրը և Սիմորղը գալիս է. նա գալիս և կտուցով Ռոստոմի և Ռախշի վէրքերից հանում է փքինները և փետուրով շոյում և ասում է, որ Էսֆոնդիար ռույինթոն է, որովհետև նրա զրահը Զրադաշտն է տուել։ Պէտք է Չինու ծովի ափից գազից**) մի նետ քաղել, կրակի վրայ ուղղել և նրանով խփել նրա աջ աչքին։ Սիմորղի օգնութեամբ նետը բերում են մէկ օրում և ուղղում կրակի վրայ։

Ռոստոմ վերադառնում է ռազմադաշտ. Էսֆոնդիար ասում է. Սոգզի, դու էլ, Ռախշն էլ վեր-

---

*) «Արոյրանձնեայ», այսինքն անխոցելի։

**) Մի բույս, որի վրայ նստում է մանանայ։

քերից մեռած պէտք է լինէին, Զալը ոֆսուն է արել*)

Ռոստոմը խնդրում է դիվլի և Փշուլթոնին վկայ է կանչում, որ ինքն ամէն միջոց գործադրել է Իսֆոնդիարի սիրտը մեղմելու համար։ Եթէ սպանուի, ինքը մեղաւոր չի։

Ռոստոմը լարում է նետը և աղօթում. Իսֆանդիար ասում է—ինչ ես դանդաղում և մի նետ խփում է Ռոստոմի սաղաւարտին։ Ռոստոմ խփում է Իսֆանդիարի աչքին և նա գլորւում է գետին։ Բահմոնն իմանում է և վազում Փշուլթոնին ասում—ամէն բան կորած է։ Վազում են Իսֆանդիարի մօտ, որ նետը հանել էր աչքից և ասում է մի ողբացէք, Ռոստոմը ուժով չի սպանել ինձ, այլ խարդախութեամբ. այդ Զալի և Սիմորղի հնարամտութիւնն է. ահա պոզի նետը։ Ռոստոմը խոստովանում է, որ ստիպուած էր այդ միջոցին դիմել։

Ռոստոմ կամաց ողբում է. գալիս է Զալը և ասում է. Իսֆանդիարին սպանողի օրը կը սևանայ, Իսֆանդիարը Ռոստոմին ասում է. «Ես քեզնից չեմ վշտացել,այդ իմ ճակատագիրն էր. Բահմոնին վերցրու և հայրաբար սովորեցրու կռիւ,որս և բազմելու կանոնները»․Ռոստոմ խոստանում է, Իսֆոնդիար Փշուլթոնին ասում է.«Իմ մահուան պատճառըԳուշթասպը եղաւ.Նրան ասա մի խնջոյք սարքի.Ես այսքան գործեր կատարեցի երկիրը մաքրելու և կրօնը հաստատելու համար, ինձ դագաղն է բաժին ընկնում, իսկ նա թող վայելի կեանքը։ Քոյրերիս մնաս բարով կանես». ասում է և մեռնում։ Ռոստոմ սգում է. Զուարէն ասում է. «հօրն ըսպանեցիր, որդին կաւերի Զաբուլիստանը»։ Ռոստոմը պատասխանում է. «Ինչ անխուսափելի է, կը լինի, դու

*) Կախարդել է։



մի՛ մտածիր»։

Ռոստոմը յարդարում է Իսֆանդիարի դագաղը. բերում են քառասուն ուղտ. ձիու բաշն ու պոչը կտրում են. գուրզը կախում են թամբից։ Ռոստոմը լաց լինելով Բահմոնին տուն է տանում և փայփայում։ Երբ դագաղը տեղ է հասնում, Գուշթասպը սգում է. մեծամեծներն ասում են «դու սպանեցիր»։ Հասնում է Փշուլթոնը և ծանր խօսքեր է ասում հօրը և աւելի ծանր խօսքեր Ջամասպին, որ վատ ուղեցոյց է եղել։ Մայրն ու քոյրերը սարսափելի հեծեծանք են բարձրացնում և սգում են. Նրանք ասում են Գուշթասպին. «Ոչ Սիմորղն սպանեց Իսֆոնդիարին, ոչ Ռոստոմը և ոչ Զալը. դո՛ւ սպանեցիր, ամօթ քո սպիտակ մօրուքին»։

Ռոստոմ մի նամակ է գրում Գուշթասպին, որ ինքն անմեղ է և վկայ է կանչում Փշուլթոնին, (որ գալիս և վկայում է)։

Ջամասպն իմանալով, որ Ռոստոմ ամէն ինչ սովորեցրել է Բահմոնին և գահը նրան է հասնելու, խորհուրդ է տալիս շահին կոչել նրան Զաբուլիստանից։ Գուշթասպ բարեկամական նամակ է գրել տալիս Ռոստոմին, որ առատ նուէրներով յետ է ուղարկում Բահմոնին։ Գուշթասպ շատ գոհ է նրա բարեկրթութիւնից, որ երևան է գալիս բազմի, որսի ժամանակ և այլն և Իսֆոնդիարի տեղն է ընդունում նրան։

## ՌՈՍՏՈՄԻ ՄԱՀՈՒԱՆ ՔԷՆԸ

ՌՈՍՏԱՄ ԵՒ ՇՈՂԱԴ. — Շողադը Զալի որդին էր, շատ գեղեցիկ մի տղամարդ. աստղագէտները գուշակել էին, որ նա կը քանդի Զաբուլիստանը։ Զալը

նրան ուղարկում է Քաբոլ, որի արքայապատեր հետ նա ամուսնանում է։

Ռոստոմ Քաբոլի բնակիչներից մի մի եզան կաշի հարկ էր վերցնում, որ շարունակեց նաև Շողադի ամուսնությունից յետոյ. Շողադ միջոց է փնտրում դրա դէմ և որոշում են, որ նա վիրաւորուած կը ձևանայ և կը պանդատուի Ռոստոմին, որ կը գայ Քաբոլ, այնտեղ հոր կը փորեն, կընկնի մէջը։ Շողադ գնում պանդատւում է Ռոստոմին, որ հետն առնում է Զուարէին, 1.0 ձիաւոր և 100 հետևակ։

Քաբոլի թագաւորը Շողադի դրդմամբ խղճալի կերպով ներողութիւն է խնդրում Ռոստոմից և հիւրասիրելուց յետոյ հրաւիրում է որսադաշտ, որտեղ բազմաթիւ փոսեր էին փորուած, նրանք սրեր և նիզակներ ցցած և երեսը ծածկած։ Ռախշը զգուշանում է գնալ, բայց Ռոստոմի մտրակից երկու ոտով ընկնում է փոսը, սաստիկ վէրքեր են ստանում, բայց դուրս են գալիս։

Ռոստոմ բարկանում է Շողադի վրայ, բայց նա յանդգնութեամբ ասում է. «այդքան արիւն թափելուդ համար ահա մեռնում ես»։ Քաբոլի թագաւորն ասում է բժիշկ բերեմ. Ռոստոմն ասում է Ծորամորզն իմ վրէժը կը լուծի։ Շողադից ուզում է աղեղը և լարում. Շողադ թագնւում է ծառի յետևը, բայց Ռոստոմ նրան կարում է ծառի հետ. ինքն էլ մեռնում է. Զուարէն էլ հորն էր ընկել մեռել։

Զալը լսում է, կռծում է և Ծորամորզին զօրքով ուղարկում է, որ գալիս է վերցնում է Ռոստոմի դիակը, Զուարէի դիակն էլ հորից է հանում, Ռախշի դիակն էլ մի փղի վրայ դրած տանում դամբէն են պատ-



րաստում, Ռախշին էլ մօտը դնում։

Ծորամորզ զօրքով գնում է Քաբոլ, մեծ կոտրած է անում, Քաբոլի թագաւորին քարշ է տալիս պղում է հորը. քառասուն հոգու և Շողադի դիակն այրում է և Քաբոլում նոր շահ է դնում։

Ամէն կողմից հաւաքւում են Զաբոլ և սուգ են անում. Ռուդաբէն վշից խելագարւում է։

## ԷՍՖՈՆԴԻԱՐԻ ՍՊԱՆՄԱՆ ՔԷՆԸ.

16. ԲԱՀՄԱՆ, 99 տարի. —Գուշթասպն իշխանութիւնը յանձնում է Բահմանին և մեռնում։ Բահմոն գանում է, որ Մանուչէհրից սկսած վրէժ են լուծել սպանութիւնների համար. նոյն իսկ Ռոստոմի վրէժը լուծուած է, Էսֆոնդիարի վրէժն էլ պէտք է լուծել։ Ուղարկում է Զալին ասելու, որ եկել է վրէժ առնելու. Զալը ճգնում է համոզել, որ Էսֆոնդիարի ճակատագիրն էր, որ այդպէս եղաւ։ Նա կապում է Զալին և կողոպտում ամբողջ Զաբոլէստանը։ Ծորամորզ զօրք է հաւաքում, երբ օր կռուելուց յետոյ հոգի է բարձրանում և փչում է զաբոլէստանցոց կողմը. բոլորը փախչում են բացի Ծորամորզից, որ մի քանի անգամ գրոհ է տալիս և վերջն ընկճւում. նրան բերում են Բահմանի մօտ, որ հրամայում է կախաղան բարձրացնել և ղրդռշիրը նահատակ է անում։ Զալին արձակում են. նա կռծում է Ծորամորզի մահը։

Բահմոն մի տղայ ունէր՝ Սասան և մի աղջիկ՝ Հումայ անունով։ Աղջիկը գեղեցիկ էր և հօրից յղացաւ. Բահմոն Հումային և նրա ժառանգին (տղայ թէ աղջիկ) գահաժառանգ է նշանակում. Սասան վիրաւորուած նիզաշարը է քաշւում, որտեղ մի զաւակ է ունենում Սա-

սան անունով։ Սա չքաւորութեան մէջ սոխպուած էր հովուութիւն անել։

17. ՀՈՄԱՅ, 32 տարի. — Բահմոն հիւանդանում մեռնում է. գահը բաղմում է Հոմայ, որ աւելի իմաստուն էր, քան հայրը։ Ունենում է մի արու զաւակ, որին ութն ամիս գաղանի պահում է տանը, ապա մի արկղի մէջ ամփոփած ոսկով և թանկագին քարերով Եփրատ գետն է նետում։

Արկղը դուրս է գալիս ափ և լուացարարի ամուսինը գտնում հանում և զարմանում է. տանում է տուն, կնոջը ցոյց է տալիս. նրանց երեխան նոր էր մեռել, իրենց երեխայի պէս պահում կերակրում են և անունը դնում են Դարաբ, այսինքն Ջրատուն*). երբ մեծանում է, ուզում են, որ օգնի իրենց. նա ասում է ինձ տուէք ուսման, որ Ժոնդ ասած**) սովորեմ և նիզակ ու վահան բանեցնել. հրաշալի սովորում է և ուժով ու ճարպկութեամբ գտնում է վազրի ախոյեանն։

Դարաբը սոխպում է լուացարարուհուն ասել նրա ով լինելը և նա անում է արկղի պատմութիւնը. երբ Դարաբն իմանում է, որ փող քիչ մնացել է, այդ փողով ձի ու զէնք ու զրահ է գնում. այդ ժամանակ ռուսները յարձակուել էին Իրանի վրայ և Հոմայ նրանց դէմ էր ուղարկել Ռոշնովադին, որի մօտ ցուցակագրուում է Դարաբը։ Հոմայը գալիս է տեսնում է Դարաբին և հարցնում է ի՞նչ ցեղից ես. Դարաբը պատմում է բոլորը. կանչում են լուացարար ամուսիններին։

Ռոշնովադը աւանդարդը յանձնում է Դարաբին և նա ջարդ է տալիս ռուսներին և գովասանքի

*) Այդ, ի հարկէ, ժողովրդական ստուգաբանութիւն է։
**) Ջենդ Աւեստա։



արժանանում. կայսրը ընծաներ է ուղարկում և հարկ խոստանում։ Լուացարար ամուսինները գալիս են, Ռոշնովադ քննութիւն է անում և հետևանքը յայտնում Հոմային, որ արտասուում է և պատմում իր գլխով անցածը։

Գալիս են Ռոշնովադ և Դարաբ և ընդունւում մեծ պատիւներով. Հոմայ նրան գահ է նստեցնում, ներողութիւն է խնդրում անցածի համար, որին աֆրին*) է ասում մօրը, իսկ մալբեղան մալբեղը և զօրքը աֆրին են ասում Դարաբին, որպէս շահի։ Գոհար են շաղ տալիս և ուրախանում։ Գալիս են լուացարարները, շնորհաւորում և տաս քսակ ոսկի են տանում։

18. ԴԱՐԱԲ, 12 տարի. — Դարաբ գահ բարձրանալուց յետոյ մի մեծ լճի ափին մի մեծ քաղաք է շինում և անուանում Դարաբգարդ։ Արաբների առաջնորդ Շուէյբ զօրքով գալիս է Դարաբի վրայ, բայց երեք օրուայ կռւից յետոյ պարտւում է։ Դարաբ զօրքով գնում է Ռումի թագաւոր Ֆիլիզուսի**) վրայ, յաղթում է և նրա աղջկան, Նահիդին, պահանջում է կնութեան. ուրախանում են և ուղարկում են ընծաներով։ Թիշերը Դարաբը Նահիդի բերնից անախորժ հոտ է առնում, բժիշկները էսկանդար խոտը քսում են քիմքին, դէմքը սևանում է և Դարաբը նրան ուղարկում է հօր տունը։ Նրանից մի տղայ է ծնւում, անունը դնում են Էսկանդար***)։ Մի տատակ ձի էլ այդ դիշեր մի մարուկ է ծնում և նրան պահում են Էսկանդարի համար։

*) կեցցէ։
**) Փիլիպպոս։
***) Ալէքսանդր (Մակեդոնացի)։

Դարաբն էլ մի որդի է ունենում Դարա անունով, որ 12 տարեկան դարձած հօրը վայր է գցում։ Հայրը թագաւորութիւնը տալիս է Դարային և մեռնում է։

19. ԴԱՐԱՅԵԱՆ ԴԱՐԱ, 14 տարի. — Դարան թագաւորելուց յետոյ մի քաղաք է շինում և Զորնուշ անուանում։

Ֆիլեզուս մեռաւ և նրա տեղ թագաւորեց Իսկանդար. մի իմաստուն Արոսթալիս*) անունով նրան առաջնորդում էր դէպի բարին։ Իրանի կողմից եկան հարկ պահանջեցին։ Իսկանդար ասաց. ոսկէ ձու ածող հաւը մեռել է, և զօրք հաւաքեց Եգիպտոս գնաց։ Եօթ օր կռիւ եղաւ, ութերորդ օրը Եգիպտոսի թագաւորը պարտուեց և Իսկանդար զօրքը շարժեց դէպի Եփրատ։ Դարան էլ Իստախրից**) անհամար զօրքեր է հանում։

Իսկանդար որպէս դեսպան տաս թարգմանների հետ գալիս է Դարայի մօտ և իր արտաքինով հիացմունք է պատճառում. Դարայի հարցին թէ «դու Իսկանդարը չե՞ս», նա պատասխանում է ոչ։ Գալիս են հարկատու դեսպանները և ասում են, որ սա Իսկանդարն է, որ մեզ վռնդեց իր մօտից. Իսկանդար թարգմանների հետ փախչում է և չեն կարողանում գտնել։

Եփրատի ափից դաշտ են իջնում և եօթն օր կռւում են. իրանցիների համար աննպաստ հողմ է բարձրանում և Դարան պարտւում է և մեծ կորուստներով փախչում է։ Երկու նոր պարտութիւններից յետոյ հասնում են Ստախր, որտեղ Դարան միացնում է զօրքերը։

Տեղի է ունենում երրորդ մեծ կռիւը. Դարան

*) Արիստոտել։

**) Իստախր, Պերսեպոլիս։



պարտւում է և փախչում Քերման. Իսկանդար հրամայում է խնայել և տկարներին փող է բաշխում։ Քերմանում վճռում են նամակ գրել Իսկանդարին։ Դարան խնդրում է ձեռք վերցնել տիրապետութեան տենչից և հաշտութիւն կապել, ուղարկելով գերի կանանց։ Իսկանդար քաղցրութեամբ պատասխանում է, որ չի վնասել և կանանց յետ է ուղարկում. բայց Դարան ասում է. աւելի լաւ է ինձ համար մահը, քան գնալ Իսկանդարի մօտ որպէս ստրուկ։

Դարան նամակ է գրում Ֆուրին*), Հնդկաստանի թագաւորին և օգնութիւն խնդրում։ Իսկանդար իմանում է և յարձակւում է գործում. Դարայի զօրքերը չեն կռւում և նա 300 հոգով փախչում է։

Դարայի հետն էին երկու մեծ մովբեդներ Մահեար և Ջանուսեար. սրանք մտածում են, որ Դարայի աստղը թեքուել է, դաշոյնը կուրծքը խրենք կամ սրբահարենք. Նրանք սպանում են Դարային և գնում Իսկանդարի մօտ յայտնում։ Նա գալիս է մովբեդների հետ և տեսնում է, որ Դարան կենդանի է. առաջարկում է գնալ Իրան և թագաւորել։ Դարան կտակում է նրան բարեպաշտ կեանք ունենալ և ամուսնանալ իր աղջկայ՝ Ռօշանկի**) վրայ, որից կը ծնուի երկրորդ Իսֆոնդիար։ Իսկանդար լաց է լինում. Դարան ասում է. «Մի լար, օգուտ չունի», բռնում է ձեռքը և մեռնում։ Իսկանդար սգում է և փառաւոր դոխմէ է պատրաստել տալիս։ Ապա երկու կախաղան է շինել տալիս և մարդասպաններին կախում. զինուորները քարերով

*) Պորոս։

**) Ռոկսանային։

հարուածում են կախուածներին և սպանում։ Իրանցիները տեսնելով Էսկանդրի արարքները, նրան թագաւոր են հռչակում։

Էսկանդր մի նամակով դիմում է մեծամեծներին և յայտնում, որ Դարայից չհաց ոչինչ վախուած չէ, նրա տեղն ինքն է բռնում։ Հաւաքուէք Էստախր, բարի գործնեցէք, չարերը կը պատժուին։ Դրամ մը կարէք Էսկանդրի անունով։ Ապա նա Բերմանից գալիս է Էստախր, նստում գահ և գնում Բիանի թագը։

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՁԱՓԱՆԻՇՆԵՐ

Շահնամէն պրուած է բոլորովին այլ պայմանների մէջ, քան Հոմերոսի քերթուածները. այսպէս, մինչդեռ Հոմերոսը ժամանակակից է իր երգած դէպքերի, Ֆէրդովսին նրանցից տասնեակ դարերով անջատուած է։ Հոմերոսը (կամ Իլիականի ու Ոդիսականի հեղինակը) յագեցած է այն մթնոլորտով, որի մէջ թաւալւում են պատմական իրադարձութիւնները, մինչդեռ Ֆէրդովսին ճգնում է իր երևակայութեամբ այդպիսի մթնոլորտ ստեղծել։ Այս է պատճառը, որ Հոմերոսի դէպքերը կենդանի են և աշխոյժ, դարաշրջանն իր հաւատալիքներով, համոզմունքներով, նիստ ու կացով և առհասարակ իր միակոյթով մի ամբողջացած շրջան է ներկայացնում, մինչդեռ Ֆէրդովսու մօտ այդ բոլորը ազօտ է, տարտամ և հակասութիւններով լի։ Դարաշրջանի ոգին Ֆէրդովսին կերտել է հիմնուելով հին աւանդութիւնների, Սասանեան շրջանի արարչագործների և ընդհանրապէս մահմեդական ռեպրեզենտացիայի հիման վրայ։ Բնական է, որ Շահնամէի կուլտուրական չափանիշները յստակ չեն և իրական երևոյթներ չեն ներկայացնում։



Շահնամէի առասպելական ամբողջ դարաշրջանի բարոյական հիմնական չափանիշն է քէնի կամ վրէժի արիւնոտ սկզբունքը, որ գալիս էր ինչպէս Իրանի հին արադիցիանիներից, այնպէս և Արաբիայի խորքերից և զուգընթաց է Իլիականի և Նիբելունգների հիմնական սկզբունքին։ Այս սկզբունքի վրայ է կերտուել Շահնամէի ամբողջ առաջը. վէպն առանց այս սկզբունքի չէր ունենալ իր լեյտմոտիւը։ Պատերազմի գնում են միշտ «սրտերը քէնով լի» كينزبدل ։ Էսֆոնդիարի որդին, Բահմանը, պատրաստուելով վրէժ առնել Ֆարամորզից, մի ամբողջ պատմական ներբող է կարդում վրէժին։

Իրանի առասպելական շրջանում կրօնը վերայական է միաստուածեան յատկնութիւններով և Զրադոշտ (Աստուծոյ) բացարձակ տէրապետութեամբ*)։ Մերթ ընդ մերթ հանդէս է գալիս Ղերիման, որպէս չարութեան ոգի և դրանց կողքին մենք հանդիպում ենք կռապաշտ (پرست) ազգերի ամբողջ շարաններ։

Կեանքն Իրանում այդ շրջանում, ի հարկէ, հոսում էր իր հունով. բայց կան այդ կեանքին ընթացք տուողներ. դրանք վեհապետները չեն և ոչ հրամանատարները. դրանք մովբադներն են և աստղաբաններ (دانشمندان و اخترشناسان.), իսկ խթանը, սանդեանները — երազներն ու նախապաշարմունքները։ Երազնե-

*) Կայ և կատարեալ չփոթութիւն. Զեղդ Աւեստան երևան է գալիս Քէյ Խոսրովի ժամանակ, այսինքն Զրադաշտի քարոզութիւնից (Դազթասպի օրով) շատ ուշ վաղ. (Քէյ Խոսրովը «շատ տնական ծածուկ Զեղդ Աւեստա էր կարդում» (III, 3411)։

րը մոլեգնեցնում էին և արհաւրալից ազդեցութիւն
էին գործում տեսնողի վրայ և մովբոդին դիմելը ան-
խուսափելի էր դառնում։ Եթէ հարկաւոր էր իմանալ
այս կամ այն արքայազնի ապագան, դիմում էին աս-
տղագէտներին, կարիք էր զգացւում իմանալ, թէ ե-
րեխան Սուդաբէլինն է, թէ վհուկ կնոջը, դիմում էին
մովբոդներին։ Քէյ Խոսրովը վերցնում է Բոհմոն ա-
նառիկ դղեակը և մովբոդներ է կարգում այնտեղ*)։

Երդում ուտելը մեծ ույժ ունէր. Գիվը կապկը-
պում է Փիրանին և երդուեցնում է, որ նրա կապերը
կը բանայ Գոլշահը—Փիրանի կինը։

Դասակարգային շերտաւորումը առասպելական
Իրանում բաւական զգալի էր. ժողովրդի գլուխ կանգ-
նած էր շահը, որ և վերին ներկայացուցիչն էր իշխա-
նութեան. ապա գալիս էր ֆէոդալների դասակարգը,
որ երկրի իրական տէրն էր. նա մատակարարում էր
երկրին փահլաւաններ, որոնցով կանգուն և բարձրագը-
լուխ էր Իրանը։ Հոգևորական դասը խիստ ուժեղ էր
շնորհիւ իր սոցիալական դիրքի. նա երկրի մտաւոր
զօրութիւնն էր ներկայացնում։ Ամենից ցածր կանգ-
նած էր գիւղացիութիւնը, որի շարքերից էին դուրս
գալիս այն հարիւր հազարները, որոնք Ֆէրդովսու ա-
սածի համաձայն ամէն անգամ ծածկում էին կռուի
դաշտը,

Կռիւը վարելու բացառիկ իրաւունքը պատկա-
նում էր թագաւորին. եթէ թագաւորը չի կամենում

---

*) Մովբոդները շատ խելօք էին համարւում. Գիվը Ռոստոմին
ցանկանում էր, որ նա յաւէտ ունենայ փղի սիրտ և ույժ և մով-
բոդների խելքը (II, 8462).



կռուել, ես ու դու գործ չունենք (II, 3886). Նրա հրա-
մանից ոչ ոք չի կարող դուրս գալ (բացառութեամբ
Ռոստոմի)։

Զօրքի հրամանատարը արքայազն է. այսպէս,
երբեմն նոյնիսկ Ռոստոմի ներկայութեամբ կիսախենթ
Թուսն է հրամանատարը, որովհետև նա Նովզոր թա-
գաւորի որդին էր։ Բայց Ռոստոմի անձնաւորութիւնը
գերազանցում է գործադրուող աւանդութիւնները,
այսպէս մի դէպքում թէպէտ հրամանատարը արքա-
յազն Ֆարիբորզն է, բայց ժողովի հրաւիրում է Ռոս-
տոմը հէնց նոյնիսկ Ֆարիբորզին և նրան նամակով
ուղարկում է շահի մօտ (II, էջ 278-79)։

Կռիւը տեղի է ունենում նախնական—պրիմի-
տիւ—միջոցներով. փահլաւանները կռուի են դուրս գա-
լիս, գոռում են և դիմում են գուրզին, կոպալին և
վերջապէս գոտեմարտում են, «քուշտի» են բռնում։
Հետագայում յայտնւում է մոնջոնիգը (բաբան, բալ-
լիստա)։

Պրիմիտիւ են բարքերը. բարձրագոյն արքա-
յական պատիւը կամ շնորհն է بر در گرفتن — գիրկն
առնելը, որ անում էր թագաւորը, օրինակ, Ռոստոմին։
Կերուխումի ժամանակ հիացմունքով էին դիտում, թէ
ինչպէս Ռոստոմ մէկը միւսի յետևից ուտում էր գա-
ները, կամ ոչնչացնում էր գերանի վրայ խորոված
ամբողջ ցուլը։

## ՅԱՏՈՒԿ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Որպէս առանձնայատուկ երևոյթ մատնացոյց
կարելի է անել Իրանի փոշին, որ ծերունազարդ բա-
նաստեղծի ուշադրութիւնն այնքան գրաւում է։ Զօրքը

յայտնուելուն պէս բարձրանում է այնպիսիս ոսկալի փոշի, որից բռնւում է երկնքի երեսը։ Երբ պատերազմի ժամանակ քամի է բարձրանում, անպայման պարուրում է այն կողմը, դէպի որը սլանում են փոշու թանձր ամպերը։ Այդ փոշին, որ պարտական է մթնոլորտային տեղումների սակաւութեան, այսօր էլ մեծ չափերով կարելի է դիտել Իրանում։

Մի այլ առանձնայատկութիւն ներկայացնում է ծովային կեանքի երեւոյթների թիւը հասկացողութիւնը. Իրանը չէ թէ ծովեր չունի, այլ նրանք չեն օգտագործուել մինչև մեր օրերը։ Մեծաքանակ գինուորներն ըստ Շահնամէի անցնում են ծովերի վրայից անվտանգ. Ջրերն մեծ ծովից անցնելու ժամանակ, որ եօթն ամիս է տևել, միայն մի անգամ փոթորիկ է բարձրացել, իսկ յետ դառնալիս նոյնքան ժամանակամիջոցում ոչ մի փոթորիկ տեղի չի ունեցել։ Ծովային կեանքի բազմակողմանի յուցադրութեան փոխարէն Շահնամէում մենք գտնում ենք զանազան հրէշների և երևակայական կենդանիների նկարագրութիւնը։

Ազգային առանձնայատուկ երևոյթ է Օմոր Խայեամի երգած Իրանի գինին, որ այնքան մեծ համբաւով կոնծում էին Իրանի վեհապետներն ու փոխանները, չը նայած, որ Ֆէրդովսու ժամանակ կրօնական մեծ արգելք էր դրած նրա վրան։

Կանայք երևան են գալիս Շահնամէում իրենց արևելեան առանձնայատկութիւններով. Սինդոխտը՝ Մէհրաբի կինը, երբ տեսնում է Զալից Ռուդաբէին լուր և զարդեր տանող նաժիշտին, մազերից բռնում է, երեսն ի վայր գետին կործանում, քարշ է տալիս և ուշաթափ վայր գցում։ Դրանով չը բաւականանալով,



կապում է և սկսում է ոտ ու ձեռքին հարուածել։

Շահնամէի առանձնայատկութիւններից կարելի է համարել և բնութեան կատարեալ բացակայութիւնը, եթէ չը հաշուենք դարձեալ Իրանին յատուկ ածական ֆորմուլա դարձած ծագումը՝ «երբ արևը գլուխը հանեց առիւծի կենդանակերպից» چو بزند شید بزز ازبر شیر *)։

Յատուկ երևոյթների թւին է պատկանում և գոհար շաղ տալը, որ տեղի էր ունենում յաղթանակների և մեծ ուրախութիւնների ժամանակ և որ հարուստ անգամներ յիշատակւում է Շահնամէում (օր. بگذرند چندان ندیدند شد که تار هر گوهر زان دران ریزشم — այնքան գոհար շաղ տուին, որ թագաւորը նրա (գոհարի) մէջ անյայտացաւ)։—Այս սովորութիւնը կար և մեզնում և պահուած է մինչև մեր օրերը հարսանիքների ժամանակ։ Մովսէս Խորենացին այդ մասին պահել է մեզ մի սիրուն հատուած. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան»։

## ՋՐԱԴԱՇՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՇԱՀՆԱՄԷՈՒՄ.

Չը նայած մահմեդականութեան մեծ զօրութեան Ֆէրդովսու դարում, մենք չենք տեսնում Շահնամէում զրադաշտական սկզբունքները խեղդուած։ Ընդհակառակը, նրանք կենդանի են և ջատագովուած։

Ռուստամին հաւատար Իրանի մեծ հերոսը—էս-

*) Այն չքեղ գնութիւնը, որ մենք այսօր գտնում ենք Մազդրանում, միայն պատահմամբ է արժանանում Ֆէրդովսու հիացմունքին։ Այլապէս նա գեղի հայրենիքն է pendant յունական կիկլոպների և այլ բազմաթիւ հրէշների ծննդավայրին։

ֆոնդիար այդ կրօնի պաշտպանն է սրով և խօսքով։
Այդ կրօնի շուրջն առաջանում է խորին քէն, որ ի-
րար է բաղխեցնում Իրանն ու Թուրանը, որի ընթաց-
քում տեղի են ունենում մեծագոյն հերոսութիւնները—
Իսֆոնդիարի և Զարիրի նախճիրները։ Շահնամէն
(ճիշտ է, ոչ թէ Ֆէրդովսին, այլ Դոզիցին) ստիպում
է Ռումի, Հնդկաստանի և Եմենի թագաւորներին ըն-
դունել զրադաշտական կրօնը։

Ինչպէս վերևը յիշուեց, Ֆէրդովսին զրադաշ-
տականութիւնը տարածում է նոյնիսկ Քէյ Խօսրովի
վրայ։—Այս բոլոր հանգամանքներն ստիպում են եւ-
րոպական գիտնականներին Ֆէրդովսուն զրադաշտա-
կանների շարքը դասել, կամ գոնէ համարել զրադաշ-
տականութեան երկրպագու, թէպէտ և յայտնի է, որ
նա շիա աղանդի կողմնակից էր։

## ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.

Մահմեդականութիւնը, որ երեք ու կէս դար
նախ քան Շահնամէի հիւսուելը խոր արմատներ էր
ձգել Իրանում, չէր կարող չանդրադառնալ հեղինակի
հոգեբանութեան վրայ և մի շարք մուսուլմանական ե-
րևոյթներ վերագրել հը տալ առասպելական դարաշըր-
ջանին։

Տղան Շահնամէում մուսուլմանական ըմբռնո-
ղութեամբ հօրն է պատկանում և մայրը միան անմը-
ռունչ հանդիսատես է նրա հետագայ բաղդի։ Միայն
տղայի սպանուելու ժամանակ մայրը անցողակի երե-
ւան է գալիս կոծողի դերում։

Ֆէրդովսին կանանց دو ده‌شیوی (երեսը ծած-
կած) է անուանում (III, 1436 և այլն), որ մահմեդա-



կան սովորութիւններից է վերցրած։
Մահմեդականութիւնը թոյլ չէ տուել Ֆէրդով-
սիին ստեղծել հերոսուհիների տիպեր այնքան հերոս-
ների կողքին։ Կանանց տիպերը ոչ մի ակտիւ դեր չեն
կատարում և բոլորովին զուր կը լինի փնտռել Ֆէր-
դովսու մօտ մի Պենելոպէ, Անդրոմաքէ կամ Նաւսիկաա։
Փոքր ի շատէ ուշադրութեան արժանի տիպեր
են առևծասիրտ Գորդաֆորիդ, որին թւում էր, թէ
վիճակուած էր լինել Զոհրաբի ընկերուհին, բայց որ
անմիջապէս խուսափում է մեր տեսողութիւնից և Մա-
նիժէն, որ իր ակամայ մեղքը քաւեց որպէս Բիժոնի
բազմաչարչար պահապան։
Կանանց տիպերին է պատկանում և Իսֆոն-
դիարի թոռը, Իրանի կայսրուհի Հումայը, որի գեղեց-
կութիւնը գայթակղեցրեց հերոսուհու հօրը—շահ Բոհ-
մոնին։ Հումայը սակայն քաջութիւն չունեցաւ դըժ-
բաղդ սիրոյ պտուղը—Դարաբին—լոյս աշխարհ երևան
հանել և գերադասեց նրան Եփրատ նետել, թէև քըն-
քոյշ հոգատարութեամբ։
Այս տիպերից են խելացի Սինդուխտը՝ Ռուդ-
աբէի մայրը, որի դաժան գործելակերպը յիշուեց վե-
րը («Յատուկ երևոյթներ» գլխում) և ինքը Ռուդա-
բէն, որի մահմեդական ոգով ուղղուած սէրը (առանց
սիրոյ առարկային տեսած լինելու) Շահնամէի զարդե-
րից է կազմում։ Նոյնիսկ Ռումի ազատ դուստրը, Քտ-
թայունը, Իրան գալով ոչ միայն անունն է փոխում,
այլ և մահմեդական կնոջ քօղի է արժանանում։
Դրանց կողքին մենք տեսնում ենք հարեմային
դաժան տիպեր, ինչպէս է Սուդաբէն, որ իր տափան-
քին բաւարարելու համար պատրաստ է ամէն հնարա-

ւոր ոճիր գործել։

Բէյ Խոսրով հարցնում է Ռոստոմից Զուարէի, Ֆորամորզի և Դաստանի (Զալի) քէֆը։ Ռուդաբէն և Ռոստոմի կինը (որի անունը չը գիտենք) կարծես գոյութիւն չունեն։ Ֆէրդովսին Ռոստոմի ամուսնանալն իսկ պատմելը աւելորդ է համարում. միայն այդ մասին կողմնակի կերպով խմանում ենք, որ նա Գիվի քոյրն էր (II, 8435)։

Եւ չը նայած մահմեդականութեան այս բացասական ազդեցութեան, մահմեդականութեան ծոցում անուեց և իր գոյութիւնը հնարաւոր դարձրեց Իրանի փոխլեանների փոխլեանը—անմահ Ֆէրդովսին, որ յաւերժացրեց զրադաշտական Իրանի փառքը, մինչդեռ մեզնում քրիստոնէութիւնը անագորոյն կերպով արմատախիլ արեց այն վեհապանծ վէպի արմատները, որի դիպուածով պահուած վշրանքները հիացմունք են պատճառում մեզ։

## ՍՈՒԲԻԵԿՏԻՒԻԶՄ ԵՒ ՕԲԻԵԿՏԻՒԻԶՄ

*(ԱՆՁՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ)*

Արևմտեան վէպից յետոյ, որտեղ այնքան զօրեղ է բանաստեղծի օբիեկտիւիզմը, որտեղ ամբողջ վէպը կարդում ենք առանց նշմարելու հեղինակի ներկայութիւնը, անսովոր տպաւորութիւն է թողնում Ֆէրդովսին իր այնքան քնարական շեղումներով, իր ուղղակի և անուղղակի մասնակցութեամբ դէպքերի ընթացքի մէջ։ Նա չէ ճնշւում իր զգացմունքներն արտայայտել հակառակ բանակից այս կամ այն անձնաւորութեան անունը տալիս։ Նա Գոթսիվոզին, որ Սիաւուշին ատողն էր և նրա սպանութեան պատճառ



դարձաւ, այլ կերպ չի անուանում, քան վատազգի, չարագործ. دژبد زوسگر (I, 11504), تشکد زوسگر (12523)։ Իր վէպի զանազան գլուխների կամ էպիզոդների ընկղմում Ֆէրդովսին զետեղում է երբեմն բաւական մեծ քնարական հատուածներ, որտեղ երբեմն ներբող է հիւսում սուլթան Մահմուդ Ղազնաւիին, երբեմն իր վըշտալի և կարիքաւոր ծերութիւնն է ողբում։ Վիպական հատուածները վերջացնելիս էլ, մանաւանդ երբ որևէ հերոսի անձնական կեանքում մի մեծ փոփոխութիւն է տեղի ունենում, Ֆէրդովսին իր քնարական խորհրդածութիւններն է առաջ բերում և սովորաբար յանգում է աշխարհի կատարեալ ունայնութեան մասին։

Օբիեկտիւիզմի այդպէս ոտնահարումը բնական պէտք է համարուի արևելքում, որտեղ վիպական բանաստեղծները կատարելապէս ազատ են վարուում իրենց նիւթի հետ. այսպէս է բացի Ֆէրդովսուց Ջալեդդին Ռումին, որ իր հռչակաւոր Մասնաւիի մէջ վիպական կտորների հետ հիւսում է բազմաթիւ քնարական հատուածներ։

Դրա փոխարէն վէպի ծաւալման ընթացքում մենք տեսնում ենք կատարեալ օբիեկտիւ վերաբերմունք դէպի դէպքերը։ Այսպէս բազմաթիւ անգամներ Թուրանը յաղթում է Իրանին և Թուրանի հերոսները արժանանում են բարձր գնահատման Ֆէրդովսու կողմից։ Նա երբեմն անցումն է կատարում դէպի Թուրանի սուբիեկտիւիզմը և այդ տեսակէտից վատաբանում կամ հայհոյում է Իրանի հերոսներին։ Այսպէս Շոնգոլ և Խազան սոգդի նախատական անունն են տալիս Ռոստոմին։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ.

Ֆէրդովսու լեզուն պարզ է և վսեմ, փքուածութիւն գոյութիւն չունի. լեզուի վսեմութիւնը ապահովւում է չափաւոր հնաբանութիւններով և արաբերէնի բարբարիզմից խուսափելով։ Այս ինքնըստինքեան սահմանափակ մէջոցներով Ֆէրդովսին կարողացել է ստեղծել բառերի հարուստ պէսպիսութիւն, այսպէս, օրինակ կուխ գագափարն արտայայտելու համար բանաստեղծը գործ է ածում բազմաթիւ հոմանիշ բառեր (սինոնիմներ), ինչպէս كنج, رزرگ, بكر կամ يگر, شاخ, درز, درآ, دراز, كار, زيآ*)։

Շահնամէի յանգերն ընդհանրապէս կարելի է հարուստ և յաջող համարել, սակայն յաճախ տեղի է ունենում նոյն զոյգ վանկերի կրկնութիւնը, որ ոչ միայն ծանր տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ, այլ և իրեն բանաստեղծին դնում է ստեղծագործական շատ դժուարին կացութեան մէջ։ Այս ցուցակը ցոյց կը տայ, որ երբ մենք յանգի մէջ հանդիպում ենք մի սիւնեակում ամփոփուած բառերից մէկին, միւս յանգում մենք կը գտնենք միւս սիւնեակի համապատասխան բառը։

بن—بخ (հիմք—բառ. արտասանւում էր բոն, սոխոն, բայց և بگ (հին)

خواسته—آراسته (զարդարուած—կայք) բայց և خواست, նոյնպէս خواستن—آراستن

ميل—نيل (փիղ—Նեղոս) երբեմն ميل

گيو—ديو (Գիվ—հերոս)

*) Th. Nöldeke, Das Iranische Nationalepos, § 48.



شفنج—درفش (դրօշակ— մանուշակագոյն)

خواب—آب (ղիրասխաբ—ջուր) երբեմն افراسياب

كابلستان—زابلستان (Զաբոլէստան—Քաբոլէստան)

رهم—رهام (երկրագունդ—արև կամ սէր)

كرسيوز—ارجاسپ (փող—հնդկական շեփոր)

هند—سند (Հնդկաստան—Սինդոս գետ)

طوس—كوس (Թուս—Թմբուկ) երբեմն سرخ چشم (աքաղաղի աչք)

بريان شدن—گريان شدن (լաց լինել—խորովուել)

گنج—رنج (տառապանք—գանձ, III դրքից սկսած گنج-ի փոխարէն گنج (հիւր)

Բառերի այսօրինակ դասաւորութեան հետեւանքով հեղինակը ստիպուած է լարել իր ամբողջ հնարամտութիւնը բանաստեղծական տողն այնպէս կառուցանելու, որ միտքը չը խանգարուի և կարողանայ ասել այն, ինչ ուզում էր ասել։ Սակայն այդ դժուարութեամբ է յաջողւում, իսկ սովորաբար առաջ է գալիս մտքի կրկնութիւն*) կամ անհեթեթ արտայայտութիւն, որ համարեա միշտ ուղեկցում է վերոյիշեալ զոյգ վանկերին։ Երևակայութեան թռիչքին տեղ չի մնում և ոչ միայն զուր սպառւում է բանաստեղծի թանկագին եռանդը, այլ և խոշոր չափերով տառապանք է վէպի ծաւալը**)։

*) Օրինակներ. Կարծես թէ ալմասը հոգի ուներ, գուրզը և նիզակն էլ հոգի ունէին (I, 2334). Դուք Աստծուն փառաբանութիւն արէք, յօժարակամ օրհնութիւն արէք (III, 2802). Քաբոլէստանի արէք, յօժարակամ օրհնութիւն արէք (III, 2830), տանի աստղագէտները, Զաբոլէստանի իմաստունները (III, 2830),

**) Եթէ կազմուէր Շահնամէի յանգերի լրիւ ցուցակը, կը պարզուէր, որ այդ հսկայական գրքում յանգերի քանակը բոլորովին յարաբերական չէ տողերի թւին։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ.

Ֆէրդովսու լեզուն պարզ է և վսեմ, փքուածութիւն գոյութիւն չունի. լեզուի վսեմութիւնը ապահովում է չափաւոր հնաբանութիւններով և արաբերէնի բարբարիզմից խուսափելով։ Այս ինքնըստինքեան սահմանափակ միջոցներով Ֆէրդովսին կարողացել է ստեղծել բառերի հարուստ պէսպիսութիւն, այսպէս, օրինակ կուիւ գաղափարն արտայայտելու համար բանաստեղծը գործ է ածում բազմաթիւ հոմանիշ բառեր (սինոնիմներ), ինչպէս جنج, رزم, کار, پیکار կամ یکار, شاخ, نبرد, دروآ. دراو, کار, جنگ*)։

Շահնամէի յանգերն ընդհանրապէս կարելի է հարուստ և յաջող համարել, սակայն յաճախ տեղի է ունենում նոյն զոյգ վանկերի կրկնութիւնը, որ ոչ միայն ծանր տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ, այլ և իրեն բանաստեղծին դնում է ստեղծագործական շատ դժուարին կացութեան մէջ։ Այս ցուցակը ցոյց կը տայ, որ երբ մենք յանգի մէջ հանդիպում ենք մի սիւնեակում ամիսփոսած բառերից մէկին, միւս յանգում մենք կը գտնենք միւս սիւնեակի համապատասխան բառը։

نو—نخ-(հիմք—բառ. արտասանւում էր բոն, սոխոն, բայց և نگ (հին)

خواست—آراست (զարդարուած—կայք) բայց և خواستن—آراستن, նոյնպէս کاست, նուազել

نیو—نیل (փիղ—Նեղոս) երբեմն میل

گیو—نیو (Գիվ—հերոս)

*) Th. Nöldeke, Das Iranische Nationalepos, § 48.



درفش—بنفش (դրօշակ— մանուշակագոյն)

آب—افراسیاب (ՂՓրասիաբ—ջուր) երբեմն خواب

کابلستان—زابلستان (Զաբոլէստան—Քաբոլէստան)

رهم—رم (երկրագունդ—արև կամ սէր)

کرنای—درای‌دنده (փող—հնդկական շեփոր)

هند—سند (Հնդկաստան— Սինդոս գետ)

کوس—طوس (Թուս—Թմբուկ) երբեմն سوخرچشم (աքաղաղի աչք)

نبرد شدن—نبرد شدن (լաց լինել—խորովուել)

گنج—رنج (տառապանք—գանձ, III դրքից

սկսած گنج-ի փոխարէն رنج (հիւր)

Բառերի այսօրինակ դասաւորութեան հետեւանքով հեղինակը ստիպուած է լարել իր ամբողջ հնարամտութիւնը բանաստեղծական տողն այնպէս կառուցանելու, որ միտքը չը խանգարուի և կարողանայ ասել այն, ինչ ուզում էր ասել։ Սակայն այդ դժուարութեամբ է յաջողւում, իսկ սովորաբար առաջ է գալիս մտքի կրկնութիւն*) կամ անհեթեթ արտայայտութիւն, որ համարեա միշտ ուղեկցում է վերոյիշեալ զոյգ վանկերին։ Երևակայութեան թռիչքին տեղ չի մնում և ոչ միայն զուր սպառւում է բանաստեղծի թանկագին եռանդը, այլ և խոշոր չափերով տառապանում է վէպի ծաւալը**)։

*) Օրինակներ. Կարծես թէ ալմասը հոգի ունէր, գուրզը և նիզակն էլ հոգի ունէին (I, 2334). Դուք Աստծուն փառաբանութիւն արէք, յաժարակամ օրհնութիւն արէք (III, 2802). Քաբոլէստանի աստղագէտները, Զաբոլէստանի իմաստունները (III, 2830), և այլն։

**) Եթէ կազմուէր Շահնամէի յանգերի լրիւ ցուցակը, կը պարզուէր, որ այդ հսկայական գրքում յանգերի քանակը բոլորովին չնչին տոկոսի չէ հասնում։

Արաբական մոթոզարեբ չափը ամբողջ մի յե-
ղաշրջում մտցրեց պարսկերէն լեզուի մէջ, որովհետև
շատ բառեր ըստ իրենց կառուցման դուրս էին մնում
այս չափից և հեղինակն ստիպուած էր փոխարինել
նրանց այլ բառերով։ Այսպէս, դուվազդահ (տասներ-
կու), որ ⌣ — ⌣ — սխեման ունի, փոխարինուել է
դէհ օ դօ (տասն և երկու), որ մտնում է մոթոզարեբի
տակ, ունենալով ⌢ — — սխեման։ Այս պատճառով
ապա և ինքըցխայով տեղի են ունենում բառերի մէջ
կրճատումներ և երկարացումներ, նայած պահանջին։
Այսպէս, փոնջ օ դահ (پنج و ده հինգ և տասն) փոխ.
փոնզդահ (پنزده 15), բոդ (بد էր) փոխանակ «բուդ»ի
(بود), հոշ (هش) փոխանակ հուշ-ի (هوش ուշ, միտք)
ամոխտէ (آمخته) փոխ. ամուխտէ (آموخته սովորած), գո-
րոհ (گره) փոխ. գորուհ (گروه բազմութիւն, «գրոհ»)։
Բառերի ընդարձակում՝ مانیده (թողած), آوریده (բերուած)։
Բարդ բառերի մասերի փոխարկութիւններ՝ փորդէ
սորայ (پرده‌سرای) փոխ. սորա փորդէ (سراپرده տաղա-
ւար)։ Հնչիւնների կրկնութիւններ՝ زرین (ոսկէ) بریدن
(կտրել) پریدن (թռչել) և այլն։

Մոթոզարեբ չափը ստեղծեց մի շարք անյար-
մարութիւններ. տողերը 11 վանկանի են և երկու
տողը (մի բէյթը) մի ամբողջութիւն է կազմում. այդ-
պիսով իւրաքանչիւր երկտող սովորաբար մի ամբող-
ջական միտք պէտք է արտայայտի։ Այդ ևս ճնշում է
առաջ բերում բանաստեղծի վրայ, մանաւանդ եթէ հա-
մեմատենք նրան իր յոյն կամ հռոմէացի եղբայրա-
կիցների (Հոմերոսի և Վիրգիլիոսի) հետ, որոնց մօտ
տողերը (հեկզամետր չափում) բաղկացած են 13-17



վանկից և ազատ են միաւորուելու երկ-երկու, երեք-ե-
րեք և այլն և կամ մենակ մնալու, նայած կարիքին։

Շահնամէի տողերի յանգաւորումը պարզում է,
որ շատ բառեր արտասանւում էին այլ կերպ, քան
այժմ. այսպէս خورد (կերաւ) և گرد (փոշի) բառերի
յանգաւորումը ցոյց է տալիս, որ خورد արտասանւում
էր ոչ թէ «խորդ», ինչպէս ներկայումս, այլ «խորդ».
այսպէս և سخن և بن բառերի համադրումից եզրա-
կացնում ենք, որ سخن արտասանւում էր սուխուն. بگفت
(ասաց) ‖ برفت (գնաց). برفت արտասանւում էր «բը-
րոֆտ». خود (ինքը) ‖ بد (վատ). خود արտասանւում էր
«խոդ» և այլն։

Բառախաղերի օրինակները مناچهر (բաց դէմ-
քով) և منوچهر (Մոնուչեհր անուն), گرازان گراز (հպար-
տացող վարազ), روان روان (ճախրող հոգի) և այլն քիչ են
և առանձին ճարտասանական արժէք չունեն։ Այլիտերա-
ցիայի համար էլ նիւթը մեծ մասամբ մատակարարում
է ինքը լեզուն և չի կարելի ասել, որ ոտանաւորի այս
կողմը առանձին հոգածութեան առարկայ է եղել Ֆէր-
դովսու համար. օրինակներ دام و دد վայրի և ընտանի
կենդանիներ, نان و نمک հաց ու աղ, درد و داغ խարան ու
վիշտ և այլն։

Չափազանցութիւնները (հիպերբոլները) մեծ
տեղ են բռնում ոչ միայն քանակով, այլ և որակով։
Այս կողմից Շահնամէն յիշեցնում է պարսկական վէպի
աւագ ներկայացուցչին—պահլաւերէն Yatkar-i Zäriran
հերոսագիրքը։ Չափազանցութիւնների առարկայ է ա-
ռաջին հերթին զօրքը։ Զօրքի երևալուն պէս բարձրա-
նում է սարսափելի փոշին, որից ցերեկը գիշերուայ է

փոխւում և օրեր շարունակ չը գիտես դիշե՞ր է, թէ ինչ է։ «Հեծեալների փողուց և թմբուկի ձայնից օդը կուպր դարձաւ, երկիրը նրենոս» (I, 2333, նոյնը և I, 2865)։ «Երկիրը ճեղքւում է ձիերի սմբակներից, լեառը ծով կորեց և դաշտը լեռ դարձաւ»։ Լեռները չափազանցութիւնների առիթ են տալիս. այսպէս՝ սարն այնքան բարձր է, որ ոչ մի արծիւ չէր կարող բարձրանալ այնտեղ։ Փոհլևաններից Ռոստոմ և Էսֆոնդիար բազմաթիւ չափազանցութիւնների նիւթ են տալիս. այսպէս, Ռոստոմը մի քանի անգամ ամբողջ բանակներ է խորտակում։ Եօթ փոհլևաններ կռւում են ղֆրասիաբի զօրքերի դէմ և յաղթում են։

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՂՄԸ.

Եթէ ի նկատի ունենանք այն պայմանները, որոնց մէջ ստեղծագործուել է Շահնամէն, մենք միայն սքանչանալ կարող ենք այն հուժկու տաղանդից, որ կերտել է այդ հոյակապ յօրինուածքը։ Ֆէրդովսին այդ հսկայական նիւթն ունեցել է արձակ գրուած և այն ոտանաւորի է վերածել և այդ արել է այնպիսի վարպետութեամբ, որ ոչ միայն գողտրիկ քերթուած է ստեղծել, այլ և ինչպէս ցոյց է տալիս մի քանի ազգութիւնների քննութիւնը, հաւատարիմ է մնացել բնագրին։

Այդ ձևով յօրինուած այս գլուխ գործոցը միացնում է հերոսական տոնը խորը հայրենասիրական շնչի հետ։ Նա սաւառնում է իր հերոսների մթնոլորտում, ապրում է նրանց ապրումներով, մասնակից է լինում նրանց ուրախութիւններին և արիւմֆներին և վշտակցում է նրանց տառապանքներին։ Նրա պաշտած



հերոսների — Ռոստոմի, Զոհրաբի և Էսֆոնդիարի սքանչագործութիւնները ուռճացնում են ծերունի գուսանի կուրծքը փոթորկալի յոյզերով, որոնք պոռթկում են անվերջ դիթիրամբներով որպէս զրուատանք նրանց մեծագործութիւնների... Նա կենդանութիւն է պարգեւել ոչ միայն վաղուց մեռած, այլ և երբէք գոյութիւն չունեցած հերոսներին, հուժկու կերպով մղել է նրանց Թուրանի հորդաների, Մազոնդրանի դևերի և Ռումի կիրթ գնդերի դէմ, անվերջ յաղթանակներ է շնորհել նրանց և ինքն իր ծերունազարդ գլուխը պսակել է անմեռ դափնիներով։

Ֆէրդովսու հայրենասիրութիւնը անզուգական է։ Շատ թանկ են նրա համար իր սիրած հերոսները, բայց նրանց բոլորից էլ թանկագինը կայ, այդ — Իրանն է, որին նա պաշտամունքի առարկայ է դարձրել իր և իր բոլոր հերոսների համար և թախծի առարկայ Իրանից դուրս տառապողներին, որոնցից մեծագոյնն է Սիաւուշը։ Ամբողջ այդ հսկայական հերոսագիրքը բացավառուած է հայրենասիրական հրով և եթէ մինչազգային հայրենասիրական անկեա կարելի լինէը կազմել և մասնակցողները կարողանային գիտակցօրէն վերաբերուել, առաջին հայրենասէրի մրցանակը անշուշտ Ֆէրդովսին պէտք է շահէր։ Այս է պատճառը, որ բաժան բաժան եղած Իրանը միացրեց և բնակչութեան մէջ ազգային գիտակցութիւն ներշնչեց ոչ թէ այս կամ այն շահն ու սոլթանը, այլ Ֆէրդովսին. և այս է պատճառը, որ Իրանի երախտագէտ որդիքը պօէտների պօէտ են հրատարակել նրան և Իրանի պանթէոնում մեծագոյն բանաստեղծի գահն են յատկացրել նրան։ Իրաւունք ունի Իրանը պարծենալ Ֆէրդովսիով։

Փոհլևանների պաշտամունքին զուգընթաց, նրանցից էլ աւելի բարձր, կանգնած է շահնշահի անձնաւորութիւնը։ Նա է երկրի տէր-տիրականը, նա է երկրի բաժան բաժան ուժերը միացնողը, ի մի ձուլողը։ Միայն զօրքը չէ, որ գլուխ է խոնարհում նրա առջև. փոհլևանների փոհլևանը — Ռոստոմ, բացառութեամբ զայրոյթի մի երկու պոռթկումից, անվերջ կրկնում է, որ ինքը ստրուկն է շահի։ Այս արքայասիրութեան ջիղը, որի համար առանձին արտայայտութիւն ունի Ֆերդովսին — خسروپرست (արքայապաշտ), Ֆերդովսին մտցրել է Իրանի ժողովրդի մէջ, որ նրան ուղեկցել է նաև հետագայ դարերում։

Իր հերոսական յաղթ խառնուածքին Ֆերդովսին միացնում է անսահման քնքոյշ գծեր։ Նա սիրոյ և գգուանքի ոսկեհուռ ոստայնով է շրջապատել մատաղ Զոհրաբին։ Զոհրաբը իրանցի չէ, բայց չէ՞ որ նա Ռոստոմի զարմն է, Ֆերդովսու հիացմունքի առարկայի։ Նա զօրքով կը գայ Իրան, առելի Քէյ Քաուսին գահազուրկ կանի և իր պաշտելի հօրը թագաւոր կը հռչակի և իր քնքոյշ մօրը — թագուհի։ Բայց դժպհի ճակատագիրը ծառացել է նրա դէմ և այլ կերպ է տնօրինել. և ահա ծերունազարդ բանաստեղծը գալարւում է Զոհրաբի շուրջը, ինչպէս կաթոգին մայր, նրբին փայփայանքով նկրտելով յետ մղել ճակատագրի այդ անագորոյն հարուածը — բայց իզուր։ Նոյնպիսի ճակատագրի անխուսափելիութիւնը ցոյց տալու համար Ֆերդովսին Իսֆոնդիարի քնքոյշ կրծքում դնում է հակամարտութեան դևին, որ չը նայած բանաստեղծի քնքոյշ հոգածութեան, անշեղ գլորում է նրան դէպի կատաստրոֆա։



Չը նայած վէպի վազքը ծանրացնող արդէն յիշած հանգամանքներին, Ֆերդովսին մեզ պարգևում է հոգեբանական նուրբ պատկերներ, որոնց դեռ առիթ կունենանք անդրադառնալու։

Վէպի ամբողջ ընթացքում ծերունի բանաստեղծը իրեն զգում է սիրառատ հօր դերում. նա առիթը բաց չի թողնում, որ իր խորհրդածութիւններից բաժին չը հանի մեզ խրատի ձևով։

Հազարաւորներով են Ֆերդովսու գողտրիկ արտայայտութիւնները. նրանք ծաւալւում են վէպի ամբողջ կառուցուածքի վրայ. յիշենք այստեղ մի քանիսը նրանցից։

1. Իրանի փոհլևան Գուդորզն արտայայտում է իր քէնի խորութիւնը դէպի Թուրանի թագաւոր Աֆրասիաբ.

نجویم براین کینه آرام و خواب
من و گرز و میدان افراسیاب (II, 9283)

Քէնից ես չեմ փնտրում հանգիստ, քուն անխաբ,
Ես եմ գուրզս, մէյդանն ու Աֆրասիաբ։

2. Ռոստոմ իր հռչակաւոր ձիուն, Ռախշին կորցրած լինելով, թամքը շալակած գնում է ձիուն որոնելու. Ֆերդովսին հեգնօրէն նկատում է.

چنین است رسم سرای درشت
گهی پشت زین و گهی زین بپشت (I, 8512 և II, 7501)

Այսպէս է աշխարհի օրէնքը կոպիտ,
Մերթ թամքի մէջ բազմած, մերթ թամքը մէջքիդ։

3. Ռոստոմ նետահարում և սպանում է Թուրանի ահարկու փոհլևան Աշկբուսին.

سوبکشاۀینهبرسیرتدزوچ

سوبدادوتستدهانزآرهپس (II, 5509)

*Երբ նա նետահարեց Ղշկբուսի կրծքին,*
*Երկինք համբոյր առեց հերոսի ճակտին։*

4. *Սուդաբեի գովքից.*

دنمکوسگودنلالیا

دنقوچشانلرجنخوچشانز (I, 7516) *ևլն ևլն։*

*Հասակը բարձրադիր, մազերը կամար,*
*Լեզուն որպէս դաշոյն, շուրթերը շաքար։*

*Որոնք են Ֆէրդովսու Շահնամէի մարգարիտները, նրա ամենագեղեցիկ հատուածները։ Շատերն են պատասխանել այդ հարցին, բայց պատասխաններն անշուշտ սուբիեկտիւ են, անձնական տպաւորութիւնների արդասիք. նոյնպիսի պատասխան կը տանք և մենք։*

*Երբ կարդում ես մի դրուագք և ակամայից սիրտդ ճմլւում է կրծքիդ տակ, երբ թափահարում ես թևերդ օդնութեան հասնելու վշտահար հերոսին, երբ նրա տառապանքը արտասուքի անվերջ կաթիլներ են քամում աչքերիցդ, երբ կուրծքդ համազարկ է տալիս հերոսիդ կրծքին, այդ նշանակում է, որ հեղինակը կախարդել, հմայել է քեզ, նա իր նպատակին է հասել. այդպիսի կտորները գեղեցիկ են և այդպիսի կտորներից առաջինը Շահնամէում Ռոստամ և Զոհրաբն է, այն չքնաղ լեգենդան, որ դեռ երկար դարեր արտասուքներ կը քամեցնի վշտահար հօր և նրա անմեղ չքնաղ զաւակի զալարումները կարդացողի աչքերից։ Սա յաւերժական, անմեռ գրուագք է, նման Սաւիտրիին, նման Հեկտորի մահին, նման Զիգֆրիդի լեգենդին։*



*Ռոստամ և Զոհրաբ էպիզոդը կարդացւում է խորին թախիծով. կսկիծը խորանում է, երբ մենք գիտակցում ենք, որ կոյր ճակատագիրը անընդհատ մղում է Ռոստամին դէպի սպանութիւն. կոյր ճակատագրի խաղը վարպետօրէն է նկարագրել մեծ բանաստեղծը. ակամայից զայրանում ես, երբ բոլոր միջոցներն սպառուել էին Ռոստամի և Զոհրաբի համար միմիանց ճանաչելու. գոնէ Ռոխշը, Ռոստամի ձին, ճանաչէր իր որդուն... Սա մի համաշխարհային ողբերգութիւն է, որտեղ ճակատագիրը նոյն անխուսափելի դերն է կատարում, ինչ որ դասական ողբերգուների մոյրան. ճակատագրի այդ չարաբաստիկ գործը մեծ վարպետութեամբ է զարգացրել Ֆէրդովսին։*

*Շատ գեղեցիկ են, բայց Ռոստամ և Զոհրաբի կախարդական հմայքը այն չափերով չունեն, Էսֆոնդիարի, Սիաւուշի, Բիժոն և Մոնիժէի էպիզոդները։ Ռազմական հատուածները մեծ մասամբ աղդու են և գեղեցիկ. յիշենք Ռոստամի կռիւը Խազանի, Ղշկբուսի, Սպիտակ դևի, մանաւանդ Զոհրաբի հետ։*

## ՏԻՊԵՐԸ.

*Վիպական երկի բարձր գեղարուեստականութիւնը վկայւում է նրա անմեռ տիպերով. աղօտ տիպերը նշան են գեղարուեստական վրիպումի։ Շահնամէի տիպերի շարանների մէջ կան այնպիսիները, որ մէկ տիպերի շարանների մէջ կան այնպիսիները, որ մէկ տիպերի շարանների մէջ կան այնպիսիները, որ*

շրջապատում է տիպերի մի փաղանգ, որոնց մէջ յիշենք Քէյ Խոսրովին, Գիվին, Բիժոնին, Ծերունի փոհլևաններին—Զալին, Թուսին ու Գուդարզին, աւագ Թագակիրներից Ֆերէյդունին ու Մոնուչէհրին և այլն և այլն։

Պարսկական վէպ իսկական մաքով պէտք է համարել փոհլևանների առասպելները. Թագաւորների պատմութիւնը, որ կցուած է դրանց, եկամուտ տարր է վէպի մէջ և նպատակ ունի լրացնել և պատմական միութիւն ու ամբողջութիւն մտցնել վիպական նիւթի մէջ։

Վէպի այս մարդում բանաստեղծը հանդէս է գալիս որոշ ըմբռնումով, կոնցեպցիայով, այն է փոհլևանը, գոնէ տիեզերական փոհլևանը—جهان پهلوان—Ջհան փոհլևանը, ինչպիսիք են Ռոստամը, Զոհրաբը և Էսֆոնդիարը—վեր է զօրքից, բանակից։

ՌՈՍՏԱՄ.—Այս ըմբռնումով Ջհան փոհլևան Ռոստամը Իրանի ապաւէնն է (پناه ایران)։ Եւ չը նայած դրան, նա կատարելութիւն չի, բանաստեղծը ոչ միայն չի իդեալականացրել նրան, այլ և ցուցադրել է նրա հոգու մէջին անկիւնները իրենց ամբողջ ժահրոտ բովանդակութեամբ։

Յիշենք նախ նրա կենսական մի քանի առանձնայատկութիւնները. նրա տեսքը անսովոր վիթխարի է և նա արժանացել է تهمتن (թահմթան—հսկայամարմին) կամ پیلتن (փիլթան—փղամարմին) տիտղոսին*). զուր չէը, որ մայրը, Ռուդաբէն, երբ երկունքի

*) Նոյն իսկ Էսֆոնդիարը զարմացած էր ճանաչելով այդպիսի վիթխարի մի հսկայ։



օրերը մօտեցել էին, արիւն էր քամում աչքերից, նրա երեսը զաթրան էր կարել նա ուշագնաց էր լինում և բոլորը, սկսած Զալից, մազերը փետելով շրջապատել էին նրան. կարիք զգացուեց Սիմորղին կանչել և կախարդանքով ու դաշոյնի գործողութեամբ (օպերասիոնով) հազիւ կարելի եղաւ լոյս աշխարհ բերել Ռոստոմին։ Սամը, Ռոստոմի պապը, նրա համար նշանակում է տաս ծծմայր. դեռ փոքր ժամանակը նրա կերակուրը հինգ մարդու բաժին էր. երբ մեծացաւ, ամէն անգամ մի քանի գառն էր յօշոտում կամ մի ամբողջ ցիւ (III, 7519)։ Դրան համաչափ ընթանում էր գինարբութիւնը և Ջհան փոհլևանը այդ կրքի դերին էր (III, 7426)։

Նա խելացի էր և իր խորհուրդների մէջ ծանրակշիռ. այդ կողմից նա հարազատ ժառանգն էր Զալի, որ ընդհանուր խորհրդատու էր։ Իսկ որպէս զասպատիարակ Ռոստոմին աննման էր. նրա սանն էր բարեկիրթ և քաղցրաբարոյ Սիաւուշը. Էսֆոնդիար, նրա նեռից մեռնելիս, նրան է յանձնում իր որդու—Բահմանի դաստիարակութիւնը։ Ռոստոմ յուսահատուել չը գիտէր, լաւատես էր իր վէհոների նկատմամբ և վճռները գործադրում էր անպայման։ Նա համբերատար է մեծ չափով, բայց երբեմն գիտէ բռնկուել ցասումով. այսպէս, Զոհրաբի դէմ գնալուց առաջ, երբ նա երեք օր կոնծել էր և Քէյ Քաուսը բարկացել էր, Ռոստոմ նրան սպառնալիքներ է տալիս. «Երբ ես բարկացած եմ, շահ Քաուսն ոչ է—ասում է նա — ...թէ Քաուսը մօտս, թէ մի բուռ հող...» Այսպիսի մի շարք անարգանքից յետոյ, նա աշտանակում է ձիուն և հեռանում Զաբոլէստան (I, 9105, ff.)։

Նա գիտէ և իրեն գնահատել. բարկացած ժա-

մանակ Քառասին ասում է. «Եթէ ես ընդունէի թագ և գահ, այս մեծութիւնն ու բաղդը դու չէիր ունենալ». արքայական գահին ուշք չեմ դարձրել, պահպանել եմ օրէնքը, կարգը և ուղիղ ճանապարհը: Մի շարք դէպքերում, ի միջի այլոց և Էսփոնդիարին նա առանձին պարծանքով պատմում է իր մեծագործութիւնները:

Այս հսկան մի սրտառուչ հաւատարմութիւն է տածում դէպի թագակիր վեհապետները, լինեն դրանք արժանաւոր, ինչպէս էր Քէյ Խոսրով, կամ անարժան՝ Քէյ Քառսի նման:

Հաւատարմութեան հետ նա արդարադատ է և մեծահոգի: Երբ Էսփոնդիար նրան հարկադրում էր կամ կռուել, կամ թոյլ տալ իրեն կապելու, նա ամէն կերպ քաղցր խօսքերով ճգնում էր համոզել նրան, որ այդ արդարացի չէ. նրան, վաստակաւոր ջհան պոհլեւանին կապել որքան ստորացնել է նշանակում. իսկ սպանելը այնքան էլ հեշտ չի և կամ ինչու. իսկ ինքը ինչպէս ձեռք կը բարձրացնի այդքան սիրելի մի անձնաւորութեան վրայ, ինչպէս Էսփոնդիարն է:

Նրա ոյժն այնքան ահարկու էր, որ քայլելիս ոտները քարերի հետ խրւում էին գետնի մէջ և նա ստիպուած էր խնդրել Աստծուն յետ վերցնել ուժի մի մասը: Ահա թէ ինչու նա վստահ էր իր ուժի վրայ. նա առանց տատանուելու դուրս է գալիս ոչ միայն առիւծների, փղերի ու վիշապների դէմ, այլ և վստահ մենամարտում է սարսափելի Սպիտակ դևի հետ և ամբողջ բանակներ է խորտակում: Ազգանի կուրից առաջ իրանցիներն ամէն ինչ կորցրել էին. չը նայած նոր ուժերի կենարոնացման նրա դէմ, Ռոստամ յաղթական է դուրս գալիս:



Ռոստամ դիւրահաւատ է. նա Փուլադվոնդին զգեստնելիս կարծում է, որ նա մեռաւ, մինչդեռ Փուլադվոնդը վեր է կենում և փախչում է: Նա զգայուն է և յաճախ արտասուում է:

Ռոստամ քինախնդիր է և դաժան. Սիաւուշի քէնի շրջանում, երբ Ֆարամորզ ղֆրասիաբի որդուն Սորխէին բռնում բերում է հօր մօտ, Ռոստամ չի նայում նրա ցաւակցութեան Սիաւուշի մահուան առթիւ և Թուսի խղճահարութեան և Սորխէին յանձնում է Զաւարէին, որ մորթի:

Ռոստամն ունի և վատ հակումներ, որոնք եւս են դալիս գլխաւորապէս «Ռոստամ և Զոհրաբ» էպիզոդում:

Նա խորամանկ է և գործում է անթոյլատրելի միջոցներով: Երբ Զոհրաբ նրան գետին էր գլորել և ուզում է դաշոյնով կուրծքը պատռել, նա կարողանում է նրան համոզել, որ կրկին անգամ գօտեմարտեն: Յաղթող հանդիսանալու տենչով բռնուած նա դիմում է Աստծուն և խնդրում է ուժի այն մնացորդը, որից նա հրաժարուել էր, որպէսզի յաղթել կարողանայ պատանի Զոհրաբին: Էսփոնդիարի ուժից ընկճուած նա չի ուզում մեռնել, սարն է փախչում: Աւելի վատթարը. չը ցանկանալով ոչ կապուել, ոչ մեռնել, «դիվզադ» (դևորդի) Զալի խորհրդով և Սիմորղի խրատով այդ ծերունի հսկան մինչև Զինական ծովի ափն է գնում դաշի նետ քաղելու համար, որպէսզի ակամայ հակառակորդի աչքը շամիրի և այդպիսով նրան տառապալից մահ պատճառի:

Այն անսահման վշտի մէջ, ուր նա էր ընկել որդուն սպանելով, իր ապաքինող զաւակին ողբալիս

Նա մտածում է այն մասին, որ Զալը և Ռուդաբէն կը պախարակեն նրան, ինչ պէտք է ասի նրանց որպէս արդարացում (I, 9996)։

Նա հիւանդոտ նախանձախնդրութիւն ունէր իր փոհլևանական արժանիքի վերաբերմամբ. նա մտածում էր. այդքան սխրագործութիւններ են պատմում այդ հրաշալի տղայից (Զոհրաբից). յանկարծ նա յաղթէ և սպանէ նրան, Ռոստամին. ոչ, աւելի լաւ է ծածկել անունը, որպէսզի յաղթողը չիմանայ, որ Ռոստամին է սպանել. և նա յամառ կերպով ծածկեց իր անունը Զոհրաբից և որդեսպան դարձաւ։

Ասենք մեծ փոհլևանը ինքն էլ զգում էր իր պակասութիւնները. «Աշխարհումս ինձ նման մէկը չը կայ, բայց մարդավարութեան մէջ (ژدر.) նրա մօտ մանուկ էի», խոստովանում է նա իր ողբի ընթացքում։

Ռոստամը տանից երկար բացակայելով, կարօտում և միշտ յիշում էր ծերունի հօրը—Զալին։

Մի դէպք չը կայ, երբ նա այդպէս անձկութեամբ յիշի իր քնքոյշ մօրը—Ռուդաբէին. այդ ևս այն գիտակցութեան արդիւնքն է, որ որդին հօրն է պատկանում և ոչ մօրը։

Վերը յիշուեց, որ Ռոստամի, ինչպէս բոլոր սիստանցիների վիրաւորական մակդիրը սոգզի էր, որ Մ. Խորենացուն ծանօթ է սագճիկ ձևով։

ԶՈՀՐԱԲ.—Զոհրաբի մասին կարճ բան կայ ասելու, որովհետև նրա կեանքն էլ կարճ էր. բայց այն, ինչ նա թողել է յետնորդներին, գեղեցիկ առաքինութիւնների մի բուրաւէտ փունջ է։ Իր հուժկու կուրծքով և անսահման ուժով նա մի քնքոյշ ծաղիկ էր, թարմ որպէս առաւօտեան այգը, անմեղ, ինչպէս նո-



րածնի հոգին։

Նրա դէմքը միշտ ժպտուն էր. դժուարին դէպքերում, երբ յուսահատութիւնն է մարդու շրջապատում, ժպիտն էր սահում նրա դէմքի վրայով։

Նա բարեսիրտ էր և բարեմիտ. նա առանց երկար մտածելու ընդունում է հօր խորամանկ առաջարկը, որ գետին գլորուած Ռոստամը խուսափի մահից և երկրորդ անգամ զօտեմարտի, որպէսզի նրա մատաղ կուրծքը ցցի իր դաշոյնը։

Նա արդարամիտ է, մեծ գովասանքով է խօսում չը ճանաչուած Ռոստամի մասին, որ իր հակառակորդն էր մենամարտի ժամանակ։

Ծնողասիրութիւնը լցնում էր նրա հոգին փոթորկալի տենչերով—զօրքով գալ Իրան, Քէյ Քաուսին գահազուրկ անել և գահին բազմեցնել տխեղերական փոհլևան Ռոստամին, իր անծանօթ, բայց պաշտելի հօրը և նրան ընկեր թագուհի տալ իր սիրասուն մօրը։

Իր դժբախտութեան մէջ նա պարծենում և սպառնում է իր հօրով.

Արդ, թէ դու այնուհետ ձուկ դառնաս ջրում,
Կամ սև կտրես մռայլի մէջ գիշերուան,
Կամ աւկայծող աստղ դառնաս երկնքում
Մաքուր սէրդ երկրից կտրես յաւիտեան,
Ահեղ վրէժ կը լուծի քեզնից հայրըս,
Երբ լուր առնի, որ աղւեսից է պարձըս։
(I, 9828-30)

Նրա վշտագին հայրենասիրութիւնը մենք նըկատում ենք նրա ողբերգութեան պահուն. կուրծքը պատռած, նա մի խնդիր ունի հօրից—խնայել Թուրանին։

Նա անսահման ներողամիտ է. իր վերին ծայր գժբաղդութեան մէջ միայն պատահելով հօրը իրեն ըսպանողի դերում, նա մոռանում է իր մահացու վիշտը և մխիթարւում է, որ գուցէ հօրը երջանիկ կը գտնի նորից երկնքում։

Զոհրաբի տիպը գերում է իր անաղարտութեամբ և վեհութեամբ և աւելի ողբերգական է դարձնում նրա մահը։ Նման տիպ է

ՍԻԱՒՈՒՇ.— Մինչդեռ Զոհրաբ ձգտում էր գտնել հօրը, իսկ ճակատագիրը նրան տանում էր այնպիսի մի գծով, որ նա առանց հօրը ճանաչելու ընկնի հօր ձեռքից, Սիաւուշը կանգնած էր կրկնակի երկընտրանքի առաջ. դրանցից առաջինն էր ընտրել հօր պատիւը և առհասարակ մարդկային արժանապատւութիւնը իրեն սպառնացող վտանգի հետ, թէ՞ գրաւիչ յանցանքը։ Սուդաբէն կանգնած իր կանացի մերկ հասակով անդունդի խորքում, իր ամբողջ գայթակղութեամբ ցած է ձգում Սիաւուշին. բայց նա կռթնած է մարդկային, մանաւանդ հօր պատւի զգացմունքին, և ձգտում է հեռու այդ ժահահոտ խորխորատից. հետևանքը—Սիաւուշի յաղթական կերպով կրակի միջից անցնելը։

Երկրորդ երկընտրանքը, այն էր—անարդարոյն և թեթևամիտ հօր կողմը լինել, թէ՞ նրա և Իրանի երդուեալ թշնամու—Աֆրասիաբի։ Չը կարողանալով տանել հօր անմիտ կամայականութիւնները, նա անցնում է Թուրան և դրանով նախօրօք վճռում է իր ապագայ ճակատագիրը—մորթուել Թուրանի դաշտերում։

Այս բարի, անմեղ և խոհուն երիտասարդը, որի հմայքը մեծ էր բոլորի համար, մեռաւ մարտիրո-



սական մահով և Իրանի վրայ վրէժի նոր ծանր պարտականութիւն դրուեց։ Նրա դաստիարակ Ռոստոմ մեծ փոհլևանը որպէս վրէժ ուխտում է աւերել Թուրանը և ոչ միայն ամայացնում է այդ երկիրը, այլ և ժամանակաւոր կերպով բարձրանում է Աֆրասիաբի գահը։ Բայց Սիաւուշի մեծ վրէժը լուծում է նրա որդին—Քէյ Խոսրով, որ կրկնակի պատերազմներում ոճրագործներին մորթոտեց և Իրանի փառքը նոր սխրագործութիւններով մեծացրեց։

Սիաւուշին յատուկ գծերից մէկն այն էր, որ նա բռնութիւն չէր կարող տանել, լինէր դա սիրային—տարփաւոր մօր կողմից, թէ քաղաքական—խելացնոր հօր կողմից։

Ֆիզիքական զանազան մրցութիւնների մէջ նրան հաւասար չը կար. իսկ իբրև հրամանատար նա ցոյց տուեց իր շնորհքը—ստիպելով Աֆրասիաբին հաշտութիւն խնդրել։

ԻՍՖԱՆԴԻԱՐ.— Եթէ կարելի լինէր Իսֆոնդիարին, այս տարաբախտ հերոսին, մէկի հետ համեմատել, այդպիսի մէկը կարող է լինել առաջին հերթին Զոհրաբը։ Երկուսն էլ երիտասարդ ու գեղեցիկ, երկուսն էլ առիւծասիրտ, երկուսն էլ օժտուած լաւագոյն առաքինութիւններով, վերջապէս երկուսն էլ Ռոստոմի սիրասունները և երկուսն էլ կորան խարդախութեամբ Ռոստոմի ձեռքից։ Երկուսն էլ համեմատելի են իրենց ուժով. չափանիշը Ռոստոմն է. Զոհրաբի ձեռքից Ռոստոմ տապալուեց գետին, իսկ Իսֆոնդիարի ձեռքից հազիւ կենդանի փախաւ լեռը։

Իսֆոնդիարը Գուշթասպի որդին էր. արդէն Գուշթասպը յայտնի փոհլևան էր, բայց որդին գերա-

գանցեց հօրը և դարձաւ ժամանակի առաջին փոհլեւանը։

Որպէս այդպիսին նա համեմատելի է երկրորդ հերթին Ռոստոմի հետ. երկուսն էլ զարհուրելի ուժի տէր, երկուսն էլ Իրանի ապաւէնը Թուրանի դէմ, երկուսն էլ փառաւորուած պանծալի սխրագործութիւններով։

Իսֆոնդիարի քաջագործութիւնները Թուելիս Ֆէրդովսին ուղղակի ընդօրինակում է Ռոստոմի համապատասխան սխրագործութիւններից, այնքան նրանք նման են. այսպէս, Իսֆոնդիարի հոֆտխանը (եօթ կայան—եօթ արկածները) համարեա նոյնն է, ինչ որ Ռոստոմի հոֆտխանը իր առիւծներով, վիշապներով ու վհուկներով և մի քանի տարբերութեամբ։ Իսֆոնդիարի որպէս վաճառական Ռույին դղեակը գնալը ընդօրինակումն է Ռոստոմի նոյնպիսի երթից Թուրան Բիժոնին ազատելու, նոյնպիսի բարկութեամբ քոյրերի վրայ, ինչպէս Ռոստոմ բարկացել էր Մոնիժէի վրայ։

تهمتن (հսկայամարմին) Ռոստոմի տիտղոսն է. բայց Իսֆոնդիարն էլ երեք անգամ անուանուած է Շահնամէում تهمتن (III, 6473 և երկու այլուր)։

Իր հսկայական ուժից զատ Իսֆոնդիարը روئین تن էր (արոյրամարմին էր), այսինքն անխոցելի էր Աքիլլէսի և Զիգֆրիդի պէս։

Իսֆոնդիարը ոչ միայն ապաւէն էր Իրանի, նա ապաւէն էր նաև զրադաշտականութեան, որի առաջին առաքեալն էր. նա «Ժոնդ օ ասթան» ձեռքին Ռում, Հնդկաստան և Եոմոն է գնում և քարոզում «Զորթոհեշտի» վարդապետութիւնը։ Նա խիստ կրօնա-



սէր է և առանց Աստուծոյ անունը տալու գործի չի ձեռնարկի։

Իսֆոնդիարը ներողամիտ է, նա կապանքներից նոր ազատուած անցնում է թշնամու կոտորած մարդկանց շարքերի միջով և հասնում է Գորազմի դիակին. այն Գորազմի, որ պատճառ էր դառել նրա տառապագին կապանքներին և թագաւորի սիրելին էր։ Նա պատմում է Գուշթասպին, որ տեսնելով այդ դիակը, «ողբացի այն չարախօս մարդու վրայ և շահի սըրտի վշտից խորովուեցի» (III, 6011)։ Այսպէս մեծահոգի էր Իսֆոնդիարը։

Հակառակորդների վերաբերմամբ նա արդարադատ է. թէպէտ նա մեծ նշանակութիւն չէր տալիս Ռոստոմի ուժին, բայց նրա գործերը գնահատում էր. «Մոնուչէհրի գահակալութիւնից մինչև Քէյ Ղօբադ ամբողջ Իրանը ուրախ էր Ռոստոմով։ Բոլորը նրան անուանում էին Ռախշի տէր, աշխարհակալ, առիւծասիրտ և թագաբաշխ» (III, 7259,60)։ «Նրանից աւելի մեծագործ մէկը Իրանում չի երևալ որքան և փնտռես» (III, 7319)։

Չը նայած Գուշթասպի արարքներին, որոնք տանում էին Իսֆոնդիարին դէպի կորուստ, նա վեհանձնօրէն է վերաբերւում դէպի հայրը. Բոհմոնին ուղարկում է Ռոստոմին ասելու, որ «Գուշթասպին հաւասար թագաւոր չի նստել ռազմով, խնջոյքով, դատողութեամբ և ոսկով» (III, 7407), կամ՝ «Երդւում եմ հօրս, այն թանկագին առիւծի կեանքով» (III, 7433)։

Իր այդ բոլոր բարեմասնութիւնների հետ միասին Իսֆոնդիար խոնարհ ու հլու զաւակ է, այն աստիճան, որ գիտակցելով հանդերձ, որ հօր պատուէրը նրան դէպի կորուստ է տանում, նա ամէն զոհողու-

թիւններով աշխատում է կատարել այդ պատուէրը։ Երբ Գոշթասպ ուղարկում է Էսֆոնդիարին ճակատագրական կռւի Ռոստոմի հետ, նա պատասխանում է. «Եւ սակայն ես քո մի սարուկն եմ, կորագլուխ պատրաստ եմ հրամանիդ ու խորհրդիդ» (III, 7279)։ «Ինչպէս հրաժարուեմ կատարել շահի հրամանը» (III, 7322) ասում է նա մօրը, երբ վերջինս աշխատում է համոզել նրան չը գնալ ընդդէմ Ռոստոմի։ Տարօրինակ է ծնողասիրական այդ ապշեցուցիչ օրինակների կողքին միւս ոչ պակաս ապշեցուցիչ վերաբերմունքը դէպի մայրը. նա մօր թախանձանքներին՝ չը կռւել Ռոստոմի հետ— ոչ մի ուշադրութիւն չի դարձնում և գնում է։

Այդ բոլոր բարեմասնութիւնների հետ Էսֆոնդիար մի թուլութիւն ունէր. նա հռչակաւոր ջհան փոհլևան էր. այդ նրան քիչ էր. նա ունէր գահակալական փառասիրութիւն և ամէն սխրագործութիւնից յետոյ հօրից գահն էր պահանջում։ Էսֆոնդիարի այս տենչը զուգադիպում էր Գոշթասպի համամնան կրքի հետ, որով նա ոչ մի կերպ չէր ուզում գահը ձեռքից տալ և նոյնիսկ որդուն դիտակցօրէն մահուան ուղարկեց, միայն թէ գահը պահի իր համար։

Գահասիրական այս տենչը տարօրինակ կերպով միանալով ծնողասիրական զգայմունքի հետ, հակառակութեան սև գնն են մացնում Էսֆոնդիարի սիրասուն սրտի մէջ և նա հակառակում է Ռոստոմի բոլոր բարեմիտ առաջարկներին, մինչև որ վերջապէս սկսւում է ահաւոր մենամարտը, որ ճակատագրական է լինում Էսֆոնդիարի համար։

ԲԻԺԱՆ.—Մնացած փոհլևանների մէջ ոչ այնքան իր նշանակութեամբ, որքան իրրև ցայտուն տիպ



աչքի է ընկնում Ռոստոմի թոռը, Գիվի որդին—Բիժոնը, որ Բիժոն և Մանիժէ էպիզոդի հերոսն է։

Բիժոնի բնաւորութեան երկու գծերը շատ ակընբախ են. խիզախութիւնը և կարեկցութիւնը։ Երբ նա կապանքների մէջ տարուում է Ղիբասիաբի մօտ և նա նրանից հաշիւ է պահանջում գործածի համար, Բիժոն ընկճուելու փոխարէն ասում է. բերէք հազար հոգի թուրանցիներ, ես մենակ դուրս կը գամ նրանց դէմ կռուելու (II, 7997 ff.)։ Ապա հպարտութեամբ ասում է. «Կախաղանից ու սպանուելուց ես չեմ վախենում» (II, 8011)։ Երբ նա կամենում էր մենամարտել Հումանի հետ և հայրն ու պապը (Գիվն ու Գուդարզը) չէին ուզում թոյլ տալ նա բռնկում է և ասում է կերթամ շահի մօտ բողոքելու (II, 9775)։ Երբ Բիժոնը լսում է, որ Հուման Իրանի փոհլևաններին մարտի հրաւէր է կարդացել և նրանցից ոչ ոք արձագանք չի տուել, «բռնկուեց ինքն իրեն ինչպէս ընձառիւծ (փոլոնգ)» և հրամայեց թամքել նժոյգը։

Հէնց որ Բիժոն իմանում է, որ Գոստահոմը մենակ է գնացել Փիրանի երկու եղբայրների – Լոհակի և Յարշիդվարդի յետևից, անմիջապէս դիմում է պապին, հրամանատար Գուդարզին և զժուարութեամբ իրաւունք է ստանում գնալ նրան օգնութեան (II, 475)։ Յայտնի է, թէ ինչպիսի քնքոյշ հոգատարութեամբ է շրջապատում նա վիրաւոր Գոստահոմին և Լոհակի ու Յարշիդվարդի զլուխների հետ միասին բանակ է բերում։ Ինքը Քէյ Խոսրով խոստովանում է Գոստահոմին, որ «Բիժոնի նման ոչ ոքի չեմ տեսել այս աշխարհում» (II, 11720)։

Ք. Խոսրովի կատկ նուէրների մէջ, կարելի է

ասել, ամենափայլունը Բիժոնինն էր, որ տալով նըրան, Քէյ Խոսրով ասում է. «ընդունիր յիշատակ և միայն բարի սերմեր ցանիր» (III, 3177):

Բիժոնը մինչեւյն ժամանակ ներողամիտ է. նա ներում է իր մահացու թշնամի Գորգինին:

Զը նայած իր աննշան տարիքին, Բիժոնը փոխհանդների մէջ պատուաւոր տեղ էր գրաւում: Նա ևս կորաւ հօր՝ Գիվի և այլ հերոսների հետ ձիւնի մէջ, երբ հետևելով Քէյ Խոսրովին, նրա անյայտանալու օրը սար էր բարձրացել:

Մենք շատ հեռու կերթայինք, եթէ մի առ մի քննէինք Շահնամէի միւս տիպերը, գլխաւորապէս փոխհանդների, բայց և թագաւորների:

Այդպիսիք են աւագ փոխհանդները— ՍԱՄ, Զալի հայրը, նոյնքան իմաստուն, որքան և հզօր. Ռոստամին Ֆէրդովսին սովորաբար նրա հետ է համեմատում:

ԿԱՐԵՆ (Շահնամէում արաբականացրած Զաբէն) Քաւէի ցեղից, հզօր փոխհան:

ՋԱԼԷՋԱՐ (այսինքն ծերունի Զալ, այսպէս կոչուած՝ սպիտակ մազերի պատճառով) կամ Դոստան, շնորհիւ իր դաստիարակութեան (Սիմորղի ձևքով)՝ կախարդութիւն սիրող, մեծազօր փոխհան, որ սակայն սխրագործութիւնների փոխարէն որպէս դեկոր նստած Զաբոլէստանում, անդորը կեանքն էր վայելում, վտանգաւոր տեղերը ուղարկելով Ռոստամին: Նա քաջ խորհըրդական էր:

Անցողական շրջանն են ներկայացնում ԹՈՒՍԸ, Նովզոր թագաւորի որդին, մի բաւական տխմար ծերունի հերոս և ԳՈՒՇԴԱՐԶ Քէշվադէգան, Գիվի հայրը,



զօրեղ և խելացի փոխհան:

Միջին շրջանի հերոսների մէջ առաջին տեղը բռնում է Գիվը, այն քաջարի հերոսը, որ եօթ տարի Թուրանի դաշտավայրերում թափառելուց յետոյ գտաւ Քէյ Խոսրովին և մեծամեծ արկածներից յետոյ մօր— Ֆարոնդիզի հետ Իրան բերեց: Նա ինքը շատ անգամներ է կրկնում, որ Ռոստամից յետոյ հզօրագոյն փոխհանը Իրանում ինքն է (Էսֆոնդիարը դեռ մանուկ էր կամ չէր ծնուած): Գիվի բնոյթագծերից աչքի է ընկնում նրա հիւանդոտ որդեսիրութիւնը. որքան որդին (Բիժոնը) խիզախ է, այնքան նա զգոյշ է և վերապահ:

Միւս փոխհանները սովորական փոխհաններ են:

Թագաւորներից աչքի են ընկնում որպէս դրական տիպ Քէյ Խոսրովը, որպէս բացասական՝ Քէյ Քաուս և Գուշթասպ:

Քէյ ԽՈՍՐՈՎ, որին ինչպէս և միւս առասպելական հերոսին՝ կիւրոսին, ճիշտ համանման պայմանների մէջ հովիւներին յանձնեցին: Հրաշալի կերպով (Գիվի հզօր բազուկով) նա խլուեց Թուրանից և Իրան բերուեց, ուրտեղ հէնց առաջին քայլերից ցուցադրեց իր բարձր մտաւորական կարողութիւնը: Նա խելացի էր վերին աստիճանի և պետական գործերը կարգադրում էր որպէս լաւ սովորած դաս: Նրան օտար չէր և կախարդութիւնը: Ծագելով մօր կողմից Ղֆրասիաբից, նա այնպիսի քէն է երևան հանում դէպի Ղֆրասիաբը, ինչպէս ոչ ոք վերջինիս թշնամիներից և հետաքրքիր է, որ նոյն շաւղի վրայ կանգնած է նաև նրա մայրը՝ Ղֆրասիաբի աղջիկը— Ֆարոնդիզ: Այս շահնշահին

կեանքի վերջում այցելից մի ահեղ յոռետեսութիւն, որ նրա անհետացման պատճառ դարձաւ։

ՔԷՅ ՔԱՌԻՍ, որ իր գահը վիճեց Քէյ Խոսրովին, փոխոխամիտ, թեթեւամիտ, փոքրոգի և ապերախտ թագաւոր էր։ Բանի անգամ նա զայրացել է դուր տեղը Ռոստոմի վրայ, այն Ռոստոմի, որ նրա գահի նեցուկն էր։ Նրա գործն էր կարծես խանգարել Ռոստոմին նրա շինարարական աշխատանքների մէջ։ Նա ուներ անմիտ քինախնդրութիւն։ Ռոստոմ իր ողբերգական վիճակում, երբ նա իր սեպհական ձեռքով ճեղքել էր իր անծանօթ զաւակի կուրծքը և փառս Իրանի, որպէս վերջին յուսալի միջոց նուշդարու (բալասան) է խնդրում Քէյ Քաուսից։ Քէյ Քաուս կատաղութեամբ սերժում է, ասելով, որ Զոհրաբն իրեն վիրաւորել է։

Իսկ ԳՈՇԹԱՍՊ, չը նայած իր խոստմնալից երիտասարդութեան, ագահ թագաւոր է դառնում և կառչում է գահին. նա իր դէմ գահն ունեցած կրքով պատճառ է դառնում իր որդու՝ աննման հերոս Իսֆանդիարի կորստեան։

Մեծ թագաւորներ են Ջամշիդ, Ֆէրէյդուն, Մանուչէհր, բայց նրանց մասին բովանդակութեան մէջ պատմածով բաւականանանք։

## ՖԷՐԴՈՎՍԻՆ ՇԱՀՆԱՄԷՈՒՄ.

Ֆէրդովսին մեզ ներկայանում է Շահնամէում որպէս մի պատկառելի ծերունի, որ անվերջ կարիքի մէջ, առանց մի տեղից դրամական նպաստ առանալու, քարշ է տալիս իր գոյութիւնը. բայց կրծքին պինդ սեղմած ունի հսկայական ֆոլիանտը, որի մէջ Իրանի փառքն էր թագնուած։ Եւ որպիսի հպարտութեամբ



կարիքի մէջ խեղդուած բանաստեղծը քանի հազար դէրհամն ստանալով՝ մի մասը ֆոզո՛ւի (գարեջրի) է տալիս, իսկ մեւս մասը բալնիսի ծառայողին է նուիրում։

Կեանքի ծանր բեռը իր կնիքը դրոշմել էր ծերունի բանաստեղծի սոցիալական կամ աւելի ճիշտ՝ կոմիքական համոզմունքների վրայ։ Նա յոռետես էր աշխարհային գործերի նկատմամբ և այդ յոռետեսութիւնը երեան է գալիս Շահնամէի մէջ ամէն քայլափոխում։ Կեանքը մեզ մերթ ուրախութիւն է բերում, մերթ երկիւղ. «լաւագոյնն այն է, որ տիեզերափայլ պաւաթը ձեռքներիս*) օր օրի վրայ անցկացնենք (II, 3902)։ Ֆէրդովսին երբեմն ամբողջ տողեր է նուիրում մեր մարդ անկարողութեան (II, 309) և այս վիճակից ելնում է՝ հրաւիրելով փառաբանել Տէրոջը... «Ինչ պըտակ կամ խոյր ես դնում գլխիդ, երբ նրա վրայով է անցնելու մահուան ճիրանն ու առաջը» (III, 3350). «Այս է ճիւնն աշխարհի գործը. չի ուզում բանալ մեզ իր գաղտնիքը։ Ծովի մէջն նետանգը (կոկորդիլոս, ծովային հրէշ), նոյն ինքը ռազմական առիւծը սուր ճիրաններով մոծակի ու մրջիւնի հետ մահուան ճիրանում մէկ են» (III, 9174-6)։

Իսկ քանի քանի անգամ են կրկնւում յոռետես բանաստեղծի վերապահ խօսքերը چنین است... (այսպէս է...). «Այսպէս է խաբեբայ աշխարհի կանոնը. երբեմն վերելք է, երբեմն վայրէջք» (II, 5684), կամ «Այսպէս է երկրագնդի և ժամանակի օրէնքը. երբեմն վիշտ ու ցաւով, երբեմն ուրախ» (II, 2624) և կամ

*) Խօսքը գինու մասին է։

«Այսպէս է այս ասպնջական երկրի օրէնքը. երբեմն նազանք ու քաղցրութիւն, երբեմն ցաւ ու տառապանք» (II, 8931)։

Այս տողերն արդէն ֆատալիզմ են և մեր բանաստեղծը ֆատալիստ է. ամէն բան նախասահմանուած է և դա օրէնք է. մէկին այս է վիճակուած, մէկին այն։ Մնում է պատասխանել այն ցաւոտ հարցին, թէ—իսկ ինչ անել. Օմար Խայեամը կասէը—խմենք. մեր բանաստեղծն էլ, ինչպէս տեսանք, դէմ չէ խմելուն (II, 3902). բայց Ֆէրդովսին աւելի շրջահայեաց է. նա գտնում է, որ այսպէս է, դաժան է, անսիրտ է, բայց ուրիշ ձև չը կայ, ուրեմն օրհնենք պատճառը—ստեղծողին։ Եւ նա առանց հիմունքի չէ այդպէս վարւում. բացի բնական նախասահմանութիւնից կայ և մարդու միջամտութիւնն աստուածային գործերի մէջ չար դիտաւորութեամբ. այսպէս է եղեռնագործութիւնը, որին վերջ պէտք է տալ։ Եւ նա վերջ կունենայ, որովհետև աշխարհում կայ արդարադատութիւն չարագործների նկատմամբ։ Բանաստեղծի համար աքսիոմա է, որ բոլոր եղեռնագործները կրելու են իրենց արժանի պատիժը. չէ որ պատուհասուեցին Զոհակ, Թուր ու Սալմ, Ղիբրասիաբ, Գորսիվոզ, Գորուչի և այլն։ «Այսպէս է Աստուծոյ հրամանն ու գծած ուղին. ով որ կարի անմեղի գլուխը, նրա գլուխը կը կարեն անվախ, աներկիւղ, և անմաքուր սիրտը գետնին կը յանձնեն» (III, 2648)։ Այստեղից մի քայլ ևս և ահա Ֆէրդովսու օպտիմիզմը։ Այս բոլոր հակայական բանակները շարժում է նա չարը պատժելու և բարի գործ կատարելու։ «Բարով պէտք է զարդարել մարմինը; որովհետև բարին չի կարելի բաժանել մարդուց» (III, 3351)։ Եւ



բանաստեղծը ոգևորւում է այդ բարով. ամբողջ Շահնամէն իւր հակայական հերոսամարտով—բարու պայքարով ընդդէմ չարի—դժուար կարող էր առաջացած լինել առանց Զրադաշտի վարդապետութեան ազդեցութեան։ Ահա թէ ինչպէս է Ֆէրդովսու պեսսիմիզմը հաշտւում կեանքի հետ. և դրա մէջ ոգևորութեան աղբիւր է գտնում բանաստեղծը։

Ֆէրդովսու ընդհանուր յոռետեսութեան մէջ նում է նրա մասնաւոր յոռետեսութիւնը կանանց վերաբերմամբ. «Աշխարհում ընտրիր միայն առաքինի կին. չարագործ կինը նախատինք է մարդու համար։ Կինն ու վիշապը երկուսն էլ լաւ է հողի տակը լինեն, լաւ է, որ աշխարհը այդ երկու անմաքուրներից մաքուր լինի» (I, 10677-78)*). «Երբ պատշաճ զաւակը լոյս աշխարհ եկաւ, սիրտը պէտք է կորել կանանց սիրուց» (I, 10768)։ Հեղինակի այս համոզմունքները, ինչ աղբիւրից և գալիս լինեն նրանք, հասկանալի են դարձնում այն նուաստ դերը, որ վիճակուած է Շահնամէի հերոսուհիներին։

Անշուշտ Ֆէրդովսու մօտ յոռետեսութիւնը և լաւատեսութիւնը ահեղ պայքարի մէջ էին. մեծ մասամբ յաղթանակողն էր լաւատեսութիւնը և դրա արդիւնքն է Շահնամէի հերոսամարտը. բայց բանաստեղծի կեանքում շրջաններ էր լինում, երբ նա բռնկւում էր անմեկին յոռետեսութեամբ և նրա համար այդ շրջաններում սիրելի էր արտադրել այնպիսի կտորներ, ինչպէս Ջէյ Խոսրովի անհնարին յոռետեսութիւնը, որ արձագանք էր բանաստեղծի սեպհական խոհերի։

*) Թւում է թէ երկրորդ երկտողը հետագայում աւելացրած պէտք է լինի։

Ֆերդովսին, որ իր կեանքում շատ էր տեսել ճնշումներ, հարստահարութիւններ և զրկանքներ, չէր կարող այդ զրկանքներին լուռ հանդիսատես լինել. բայց մարդասիրութեան սահմանները նեղ են գալիս նրա վեհ հոգու համար և նա թեակոխում է կենդանական աշխարհը և կանգ է առնում նրա ամենաաննշան ներկայացուցիչներից մէկի՝ մրջիւնի շահերի պաշտպանութեան վրայ:

Մրջիւնին մի զրկիր, որ հատ է տանում,
Հոգի ունի, երջանիկ է այդ հոգին.
Սևահոգի է այն մարդը քարասիրտ,
Որ կուզէ ընկճուած տեսնել մրջիւնին:

Այս տողերի մէջ ծերունազարդ բանաստեղծը ելնում է մարդկային արժանապատուութեան զենիթը, որ քչերին է մատչելի և քարասիրտ, անզգայ աշխարհին մի հրամայական պատգամ է տալիս — չը զրկել մրջիւնին, ուր մնաց մարդուն:

Հոգու—թէկուզ այդքան աննշան կենդանու հոգու անաղարտ պահպանման այդ փիլիսոփայութիւնը գերում է մեզ իր վեհութեամբ և Ֆերդովսուն բարձրացնում է մարդասիրութեան վերին ոլորտները:

Նկատենք Ֆերդովսու մի յատկութիւնը ևս. Շահնամէում աստղագէտներին այնքան մեծ տեղ շընորհելուց յետոյ նա առանձնապէս հաւատ չի ընծայում նրանց. Քէյ Խոսրովի և Աֆրասիաբի մեծ կռւին, երբ երկու կողմից էլ աստղագէտները տքնում էին գալիք դաղտնիքը գուշակել, «Երկրագունդը (լռիկ) կռւին էր գնում, աստղագէտը խիստ անօգնական էր» (III, 382):

Այն բարձր բարոյականութիւնը, որ իր մէջ էր



կրում մեծ բանաստեղծը, չէր կարող նրա մէջ ամփոփուած մնալ: Եւ օգտուելով բանաստեղծի քնարական տրամադրութիւններից, նա յաճախ դուրս է գեղւում նրա գրչից թանկագին խրատների ձևով, որոնք բըղխում են նրա ընդհանուր աշխարհայեացքից և որոնցով վխտում է Շահնամէն. «Աշխարհը ոչ ոքի մնալու չէ, նրանով շատ չը պէտք է ուրախ լինել» (II, 6105) և այլն և այլն:

## ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ
## ՀԱՅԿԱԿԱՆ, ՅՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԷՊԻ ՀԵՏ

Այս մեր համեմատական էսքիզը այլ նպատակ չունի, քան հետաքրքրութիւն առաջացնել դէպի վէպի համեմատական ուսումնասիրութիւնը, առանց մի լրիւ գործի յաւակնութիւն ունենալու: Համեմատելիս, մանաւանդ յունական և գերմանական վէպի հետ, ազդեցութիւնները չի, որ մենք փնտրում ենք (այդ մասին, կարծում ենք խօսք չի կարող լինել), այլ անալոգիաներ, որ արդիւնք են նմանօրինակ պայմանների:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԷՊԸ.—Հայկական վէպը երկու է. մէկը հին, որի փշրանքները պահուած են գլխաւորապէս Մ. Խորենացու պատմութեան մէջ, միւսը նոր— Սասմայ Ծռեր: Հնարաւոր է, որ իրանական վէպի ազդեցութիւնը եղել է հայկական հին վէպի վրայ, բայց այդ հաստատելու համար մեզ նիւթ պակասում է: Յամենայն դէպս յայտնի է, որ VII-րդ դարում պարսկական վէպից ամբողջ հատուածներ յայտնի էին Հայաստանում:

Այսպէս Մովսէս Խորենացին Սահակ Բագրա-

տուննուն թռուցիկ տեղեկութիւններ է տալիս Բիւրասպ Աժդահակի (այսինքն Զոհակի) մասին, նրա առաջին անբարի բարերարութեան, դևերի նրան սպասաւորելու, ուսերի համբուրելու և այդ տեղից վիշապներ ծնելու մասին։ Այստեղից էր, որ յաճախեց չարութիւնը և մարդկանց ոչնչացումը որովայնի պէտքերի համար։ Իսկ ապա մի ոմն Հրուդենն (Ֆէրէյդուն) պղնձէ կապանքներով կապելով նրան, տարաւ Դըմբաւընդ (Դմաւոնդ) սարը. ճանապարհին Հրուդենը քնեց և Բիւրասպը ձգեց դէպի բլուրը, Հրուդենն արթնացաւ, տարաւ մի այր և կապեց և ինքը անդրիի նման կանգնեց նրա դէմ. այստեղից նա հնազանդուեց շղթանուրին և չի համարձակւում ելնել և ապականել երկիրը*)։

Այս առթիւ Խորենացու Ագէքսանդրեան ի-մաստասէրների ոճով արած քննադատութիւնը միայն պատմական արժէք ունի։

Խորենացու այս հատուածի համեմատութիւնը Շահնամէի հետ ցոյց է տալիս հատուածի հարազատութիւնը։

Մի այլ հատուածի մէջ Տորք Անգեղի նկարագրութեան ժամանակ յիշում է Ռոստամին և աւելացնում է, որ Տորք Անգեղը անսահման ուժի տէր է եղել, բայց ինքը նրա ոյժը նկարագրելու համար այնպիսի չափազանցութիւններ չի անի, ինչպէս անում են պարսիկները, պարգևելով Ռոստամ Սագճիկին 120 փղի ոյժ**)։ Այս հատուածում հետաքրքիր են Ռոստամի ոյժի առասպելական կոնկրետ չափը, Խորենացու քննադա-

*) Մ. Խորենացի, I, Ի պարսից առասպելեաց։

**) Մ. Խորենացի, Բ. գլուխ, Ը.



տական վերաբերմունքը դէպի առասպելը և Ռոստամի սագճիկ մակդիրը, որ ինչպէս վերը յիշուեց, սոգդի բառն է։

Շարունակութեան մէջ Խորենացին կանգ է առնում Տորք Անգեղի պերազանց ուժի վրայ և պատմում է, ինչպէս նա եղունգներով տախտակի նման ողորկ էր դարձնում որձաքարը և այլն։

Իսկ Տորք Անգեղի բլրաձև վէմերով թշնամու նաւ խորտակելը, անշուշտ արձագանք է, հաւանական-նաբար գրական, Ողիսականի Պոլիֆեմ կիկլոպի։

Սիւռուշի և Քէյ Խոսրովի շուրջոնգ ձի նստելը նման է հայկական վէպի «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ» պարբերութեան (Բ. գլ. Ծ.)։

Ոսկի, գոհարեղէն և մարգարիտ շաղ տալու մասին խօսուեց վերը։

Թուսի كش زرين ոսկէ կօշիկը յիշեցնում է կարմիր զգեստ միոյ ոտին, որ Արգաւանի մենաշնորհն էր (Բ. գլ. Խէ.)։

Իսկ Զոհակի Դմաւոնդում փակելը յիշեցնում է Մասեաց քաջերի Արտաւազդին այրի մէջ արգիլելը (Բ. գլ. ԿԱ.)։ Նման առասպել գոյութիւն ունի և վրացիների մօտ Ամիրանի մասին։

Հայկական նոր վէպի մէջ ևս անալոգիաներ գտնում ենք. թէենք մի երկուսը։

Ռւստամի և Զոհրաբի ձի ընտրելը նման է Դաւթի քուռակ ընտրելուն*)։ Ռանդուխտ խանումի Դաւթի հետ մենամարտի անալոգիան ունենք Զոհրաբի և Գորդ Աֆարիդի մենամարտի մէջ։

*) Սասմայ Ծռեր, էջ 29։

Ռոստոմի և Զոհրաբի մենամարտի նմանութիւ-նը հակառակ ելքով (զաւակն սպանում է հօրը) գըտ-նում ենք Դաւթի սպանութեան մէջ, որ տեղի ունե-ցաւ Զմլկեր սուլթանի աղջկայ ձեռքով։

Թերևս աւելորդ չը լինի յիշել, որ մինչդեռ հայկական հին վէպը պարսկականի նման արիստոկրա-տիք է, նոր վէպը դեմոկրատիք բնոյթ ունի։

ՅՈՒՆԱԿԱՆ ՎԷՊԸ.—Յունական վէպի մի հիմ-նական տարբերութիւնը իրանականից այն է, որ այս-տեղ աստուածները ոչ միայն մասնակցում են հերոս-ների կեանքում, այլ և տոն են տալիս նրան. մարդ-կանց կամքը կախուած է աստուածներից. կռիւ վարե-լու համար հերոսները միայն միջոց են. նրանց գրգը-ռողը աստուածներն են, որոնք կուզենային, որ կամ յոյները յաղթէին կամ տրոյացիք և կամ այս ինչ հե-րոսը սպանուէր կամ յաղթանակէր։ Աւելին, նրանք միջամտում են մահկանացուների կռւին, իրար հետ կռւի են բռնուում կամ իրար սպառնում են (Զևսը Նեպ-տունին) հերոսների պատճառով։ Այդ խիստ կենդա-նութիւն է տալիս յունական վէպին, իսկ պարսկակա-նում բնականաբար բացակայում է։

Նմանութիւնները անչափ շատ են, մանաւանդ Շահնամէի և Իլիականի մէջ, որոնցից մի քանիսը մի-այն մատնացոյց կանենք։

1. Ամէն անգամ կռւի պատրաստուելիս յիշւում են երկու կողմի աչքի ընկնող հերոսները։

2. Հերոսներն առանց վախ մտածելու թշնա-մու բանակին և խօսում են։

3. Իրանցիք և յոյները թէկուզ պատրաստելիս լի-նեն, բայց այդ կողմի հերոսները համարեա միշտ յաղ-



թող են, իսկ յաղթուելու դէպքում վրէժ պէտք է հա-նել, ինչպէս Պատրոկլի կամ Սիաւուշի վրէժը։

4. Զոհրաբը Հոմերից, ինչպէս և Ֆորուդը Թո-խարից մէկ մէկ հարցնում են, թէ ովքեր են իրանի փոհլևանները. այդ յիշեցնում է Պրիամի հարցումը Հե-լենէին յոյն հերոսների մասին։

5. Իրանական վէպի մէջ որդեսիրութիւնը (Գիվ և Բիժոն—Իլիականում Թետիս և Աքիլլ) և եղբայրա-սիրութիւնը (Գոշթասպ և Զոբիր—Իլիականում Ագա-մեմնոն և Մենելաոս) խիստ զարգացած են, բայց ըն-կերասիրութիւնը, ինչպէս Իլիականում Աքիլլ և Պատ-րոկլ—պակասում է։

6. Երկու վէպի մէջ էլ հերոսները վիճում և եր-բեմն իրար վիրաւորում են. այսպէս Գուդարզի և Թուսի վէճը Քէյ Խոսրովի թագաւորելու առթիւ յի-շեցնում է Ագամեմնոնի և Աքիլլի հռչակաւոր կռիւը I երգում։

7. Այս կողմը աւելի է զարգացրած Իլիականում և վերաբերում է նաև վհատեաններին։ Այսպէս Նեստոր և Ոդիսևս պախարակում են Ագամեմնոնին (IX և XIV), Գլաւկոս Հեկտորին (XVII). իրանական վէպում այդ անհնարին է (բացառութիւն կազմում է Ռոստոմը)։

8. Եթէ հերոսների նմանութիւն փնտռենք, բացի վերը յիշածներից (տ. «Տիպերը»), Բիժոնին իր խե-լամտութեամբ կարող ենք նմանեցնել Դիոմեդին, որ խիզախում էր նոյնիսկ աստուածների հետ կռուելու։ Ոդիսևսի և Նեստորի տիպը չունի Իրանը, ինչպէս և Հեկտորի տիպը—Թուրանը։ Յոյների ապաւէնը ոչ թէ Աքիլլէսն է, հզօրագոյն հերոսը, որ խուսափում էր կռուից, հակառակ Ռոստոմի և մանաւանդ Էսֆենդիա-

բի, այլ Այաքս, երկրորդն ուժով, որ սակայն միշտ մասնակցում էր կռիւներին։

9. Կերուխումի պատկերները, որ այնքան լի է Շահնամէում, որտեղ գինին հոսում է ջրի նման, հազուագիւտ են Հոմերոսի մօտ, որտեղ գինին էլ ջրով են խմում։

10. Իրանի փոհլևանները կուռում են ձի նստած կամ հետիոտն, իսկ յոյն հերոսները կառքից։

11. Ինչպէս Իրանի հերոսները ամէն դէպքում փառաբանում են Իզդին, այնպէս էլ յոյները՝ Զևսին։

12. Ինչպէս Իրանի, այնպէս և յոյն հերոսները կազմակերպում են խաղեր և մրցութիւններ։ Յիշենք Սիաւուշի գալստեան առթիւ Ղֆրասիաբի կազմակերպած մրցութիւնները և Պատրոկլի յուղարկաւորութեան առթիւ Աքիլլի և Ալկինոսի Ոդիսևսի գալստեան առթիւ կազմակերպածները։

13. Պետական կառուցման պրինցիպները և տեղենցները երկու երկրներում հակառակ են. Իրանում միապետական են, վեհապետի միահեծան կամքով, իսկ Յունաստանում հասարակապետական ազորաններով (ժողովներով), ճառերով, պայքարով և վէճերով, որոնց այնքան կենդանի նկարագրութիւնը տալիս է Հոմերոս։

14. Կուի գնալիս հագնում են և զինուում. երկու վէպերն էլ մեզ պահել են այդ զրահաւորուելու բազմաթիւ պատկերները։

15. Վրդովուած հերոսները հայհոյում են իրար. Ռոստոմին սոգդի են անուանում (Շոնդոլը, Խազոնը, Էսֆոնդիարը). Աքիլլեսը Հեկտորին շուն է անուանում։



16. Գէյ Խոսրովի Զարեհ ծովից անցնելիս տեսած հրէշները և հրաշալիքները յիշեցնում են Ոդիսևսի տեսածներն իր արկածների ժամանակ։

17, Ֆէրդովսին Շահնամէում յաճախ հրաւիրում է ընթերցողին լսել պատմող երգչին گنجی, իսկ Հոմերոս ամէն անգամ դիմում է մուսային, որին Թէա ևս անուանում է (աստուածուհի)։

18. Հոմերոս իր նկարագրութիւնը կենդանի դարձնելու համար լայն գործածութեան մէջ է մտցնում մակդիրները (epitheton ornans), ինչպէս pater androntе theonte (աստուածների և մարդկանց հայրը —Զևս), boopis Hera (կովաչեայ Հերա) և այլն և նմանութիւնները, որոնք խիստ պատկերաւոր են և վերցրած են մեծ մասամբ բնութիւնից և կենդանական աշխարհից. այսպէս Ագամեմնոնը ցուլ է նախրի մէջ. ինչպէս հովւի շները չեն քնում, այնպէս և զօրքի առաջնորդները. նմանութեան համար օգտագործում են ծովի ալիքները, մեղուները, զեփիւռը, վայրի թռչունների երամը, հրդեհը, կռունկների կռկռոցը, եղջերու բռնած առիւծը, շակալների խումբը, գայլերի վոհմակը և այլն և այլն։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԷՊԸ.— 1. Ինչպէս Շահնամէի ջհան փոհլևանները սպանում են վիշապին, այնպէս և գերմանական վէպի գլխաւոր հերոսը—Զիգֆրիդ։

2. Մինչդեռ էսֆոնդիար վիշապի թոյնից հարբում է և ուշաթափւում, Զիգֆրիդ լողանում է վիշապի արեան մէջ և անխոցելի է դառնում։ Նոյն անխոցելութեան հանգամանքն ունէր և Էսֆոնդիար. նա ن نوذر էր (արոյրամարմին), բայց դրա պատճառն այլ էր, նրա զրահը Զարդոշտն էր տուել։

3. Գերմանական վէպում նոյնպէս, ինչպէս և իրանականում, հակայական դեր են խաղում երազները այլ և շան ոռնոցը։

4. Դահլիճն այրուած ժամանակ Հագէնը, գերմանական վէպի տխուր հերոսը, առաջարկում է խմել ըստպանուածների արիւնը. Գուդրունը Փիրանին սպանելուց յետոյ խմում է նրա արիւնից։

5. Գորդ Ալֆորիդը, աւելի փոքր չափերով, յիշեցնում է գերմանական վէպի դաժան հերոսուհուն—Բրունհիլդին։

6. Իրանական վէպի սիրած շոբրոնդին («սեաւ») փոխարինում է գերմանականում սպիտակ ձին։

7. Եթէ Զոհրաբին և Էսֆոնդիարին (այլ և երիտասարդ Ռոստոմին) կարելի է համեմատել բոցոտ Աքիլլէսի և լուսաճաճանչ Զիգֆրիդի հետ, ապա Ֆրասիաբի նմանութիւնը մենք գտնում ենք գերմանական վէպի դաժան հերոս Հագէնի հետ։

8. Ինչպէս գիտենք, Շահնամէն կերտուած է քէնի և վրէժի սկզբունքների վրայ. նոյնն է և Իլիականում, որտեղ մղիչ ոյժը Աքիլլէսի հռչակաւոր քէնն է Ագամեմնոնի դէմ և Պատրոկլի սպանման քէնը։ Այդ քէնի զգացմունքը և նրա հետևանքներն աւելի սարսափելի են գերմանական վէպում, որտեղ Զիգֆրիդի սպանման վրէժը լուծելու համար Կրիմհիլդան ամուսնանում է Էցելի (Ատտիլլայի) հետ և ամբողջ բուրգունդական թագաւորական տունը սրի է քաշել տալիս։

Մի քանի խօսք էլ ասենք ռուսական վէպի մասին։ Ռուսական ժողովրդական հէքեաթների հերոս Երուսլանը Ռոստոմն է. նրա հայրն է Լազարը (Լազարևիչ), որ այդպէս է դարձել ժողովրդական ստու-



գաբանութեամբ Զալ զար-ից. կիկօուսը Քէյ Քաուան է։

Ռուսական վէպի վրայ էլ աշխատեցին գտնել պարսկական վէպի ազդեցութիւնը*), բայց կոնցեպցիայի հեղինակը—Վսեվոլոդ Միլլեր հրաժարուեց իր տեսութիւնից ակադեմիկոս Դաշկևիչի ակադեմիական քննադատութիւնից յետոյ։ Բայց դրանից յետոյ էլ որոշ գիտնականներ կանգնած են ազդեցութեան տեսակէտի վրայ։

## ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆէրդովսու թերութիւնները վերաբերում են ոչ այնքան իր ստեղծագործական տաղանդին, որքան ընտրած նիւթի յատկութեան և ստեղծագործման պայմաններին։

Կապը դէպքերի մէջ թոյլ է և բանաստեղծը ստիպուած է օգնութեան գալ ընթերցողին ճառերով և նամակներով և յիշեցնելով, որ այսինչ կտորը վերջացաւ, այսինչն է սկսւում։

Տասնեակ դարերով անջատուած լինելով իր նկարագրած նիւթից, Ֆէրդովսին գտնուել է թերևս աւելի վատ պայմաններում, քան Վերգիլիոս. բայց նա պատուով է դուրս եկել փորձութիւնից. նա չի ընկել կեղծ դասականութեան հոսանքը, ինչպէս վերջինս, բայց նրա ներկայացրած դարաշրջանը ցայտուն չէ և ոչ ռելիէֆ։

Ցաճախ մենք տեսնում ենք միամիտ դատողութիւններ և պատկերացումներ. պետական գործու-

*) Всевод Миллер „Экскурсы в область русскаго эпоса“, М. 1892.

նէուԹիւն մենք չենք տեսնում, բայց գանձարանները միշտ լիքն են և երբեմն միլիոնների, եթէ ոչ միլիարդների նուէրներ են տրւում այդտեղից։

Յայտնի չէ, շփոթութիւն պէտք է համարել, Թէ գիտակցօրէն գրւած, որ Էսկոնդոբը—Ալ. Մակեդոնացին—փոխլուի էր սովորում։

Անախրոնիզմները վերաբերում են քրիստոնէական հոգևորականութեան Էսֆոնդիարի շրջանում, երբ զրաղաշատականութիւնը դեռ նոր է տարածւում (ս. III, 3692, 4008, 4147–9, 9787, 9989). երևան են գալիս այդ շրջանում եպիսկոպոսները (اسقف-ները և بوكس -ները)։

Մի շարք դէպքերում Ֆէրդովսին ինքը իրեն է նմանում (ինչպէս այդ անում է և Հոմերոս). Զոհրաբի ձին յիշեցնում է Ռոխշին. Բոհմանը ժայռը գլորելով ուզում է սպանել Ռոստամին, ինչպէս Ֆերէյդունի եղբայրները. Էսֆոնդիարի հոգիախանները և այլ սխրագործութիւնները Ռոստամի գործերի նմանութիւններն են։ Ռոստամը ձիու թամքը շալակում է Սեմենգան գընալիս և ծովից դուրս գալուց յետոյ, որտեղ գցել էր նրան ղրվան դևը։

Բանաստեղծական նիւթի հետ Ֆէրդովսին ազատ է վարւում. Ղլբորզ սարը նա զետեղում է Հընդկաստանում. Մազոնդրանի մեծութիւնը հսկայական չափերի է հասցնում։ Ամբողջ Իրանով իրարից բաժանուած Սոլմը և Թուրը գործում են որպէս զրացիներ ևն.։

## ԴՈԶԻԶԻՆ ՇԱՀՆԱՄԷՈՒՄ

Դոզիզին իր վիպագրական տաղանդով անշուշտ անհամեմատ ցածր է Ֆէրդովսուց, սակայն նա էլ ունի իր արժանիքները։



Մի փոքր համեմատութիւն ցոյց կը տայ նրա նմանութիւնը և տարբերութիւնը Շահնամէի հեղինակից։ Նա որոշ դէպքերում ունի նոյն յանգաւորումները, ինչ որ Ֆէրդովսին։

داستان—باستان (III, 4588), ديو—نيل (III, 5035), سخن—بن (III, 5230)։ Կրճատումներ. ەدىپ փոխանակ ەدىپ։—ز և ژ յանգաւորւում են. جهان ازبدان وژ تشتی—برزمزن ون دراندر تشتی։—Դոզիզու մօտ տեսնում ենք նոյն արտայայտութիւնները, ինչ որ Ֆէրդովսու մօտ. چوخ—دیرخ։—համեմատութիւն Բիսութունի լեռան հետ։

Դոզիզին ունի բառեր, որ Ֆէրդովսին չի գործածում (پیغو բազէի մի տեսակը—تکین քաջ, عجم փոխանակ ایران*), تیز տուրք, پس (=پسر որդի)։

Կռիւը Դոզիզու մօտ աւտոմատիք է, իրար յետևից գալիս և սպանում են։

Սուբիեկտիւիզմը Դոզիզու մօտ աւելի ուժեղ է. նա օրինակ չի կարող իր զգացմունքները թագցնել, երբ հերոսներն ընկնում են և նա շարունակ կրկնում է دريغ—ափսոս։

Դոզիզին Ֆէրդովսու նման պեսսիմիզմ չունի և շատ աւելի յախուռն է, քան Ֆէրդովսին։ Դոզիզին ակնբախ կողմնակից է զրաղաշատականութեան. համեմատել II, 4705, 4748–49, 4819, մանաւանդ էջ 226։

Մինչդեռ Ֆէրդովսու մօտ մենք տեսնում ենք որդեսիրութեան օրինակ (Գիվը հանդէպ Բիժոնի), եղբայրասիրութեան օրինակ տալիս է Դոզիզին յանձին Գոշթասպի, որ չի ուզում կռւի ուղարկել եղբօրը՝

*) Բացառութեամբ سرای بدین مرد ەنز عجم հռչակաւոր տողի։

Զորիրին, որի մասին գուշակել էին, որ նա կը սպանուի (նոյնպիսի գուշակութիւն եղել էր նրա որդոց մասին, բայց Գոլթատպ նրանց համար քայլեր չի անում)։

## ՇԱՀՆԱՄԷԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շահնամէի աղբեցութեան տակ և նրա հետևողութեամբ 11-րդ դարից սկսած առաջ են գալիս մի շարք վէպեր, որոնք նպատակ ունեն լրացնելու Ռոստոմի ազգատոհմի այն փոհլևանների գործերը, որոնցով Ֆէրդովսին ըստ հեղինակների կարծիքի անհրաժեշտ չափով չէր զբաղուել իր Շահնամէում։

Այսպէս առաջացան ԳԱՐՇԱՍՊՆԱՄԷ, որի հեղինակը աշխատել է Գորշասպին՝ Սամի հօրը և Զալի պապին, ներկայացնել աւելի հզօր փոհլևան քան Ռոստոմը։ Զաւիը նոյնն է ինչ որ Շահնամէինը, որ այնուհետև դառնում է վիպական չափ։ ՍԱՄՆԱՄԷՆ Սամի սխրագործութիւնների նկարագրութիւնն է և բաղկացած է 11 հազար երկտողից։ ՋՀԱՆԳԻՐՆԱՄԷ. Ջհանգիրը Ռոստոմի որդին է, որ Զոհրաբի պէս հեռու հայրական տնից ապրում է Թուրանում և գնում է Իրան կռւի և մենամարտում է հօր հետ, բայց նրանք ճանաչում են իրար և որդին անցնում է Իրանի կողմը, մի շարք քաջագործութիւններ անում և սպանւում մի դևից։

ՖԱՐԱՄՈՐՋՆԱՄԷ, 1500 երկտող. այստեղ պատմուած է Հնդկաստանի թագաւոր Նոշադի Բէյ Քաուսից օգնութիւն խնդրելը, Ֆորամորզի Հնդկաստան գնալը և Նոշադի թշնամիներին և հրէշներին կոտորելը։

ԲԱՆՈՒԳՈՇԱՍՊՆԱՄԷ. սրա հերոսուհին Ռոստոմի աղջիկն է, Գիվի կինը, որ կապում է Գիվին իր գօտիով. այս մինուոյն արարքն է, ինչ որ գերմանական վէպում Բրունհիլդինը իր ամուսին Բուրգունդիայի թագաւոր Գունթերի վերաբերմամբ։

ԲՈՐՋՈՒՆԱՄԷի հերոսը Բորզուն է, Զոհրաբի որդին, թէպէտ այստեղ երևան են գալիս շատ հերոսներ և տեղի է ունենում շատ արկածներ. Ղֆրասիաբ նրան Իրան է ուղարկում, բայց նա գալիս է և գերի ընկնում։

ԲԱՀՄԱՆՆԱՄԷ, 10 հազար երկտող. Բահմանը, ինչպէս յայտնի է, Ռոստոմի ազգատոհմից չէր, բայց վէպի նիւթը վերաբերում է այդ ազգատոհմին, այն է՝ Ռոստոմի մահուան, Էսֆոնդիարի վրէժն առնելուն Ռոստոմի տանից և նրա անդամներին (տղայ, թէ աղջիկ) հետապնդելուն։

12-րդ դարից սկսած գաղարում են երևալ այս ուղղութեամբ գրուածքներ, բայց դրա փոխարէն ընկնում է ռոմանը (որի խոշորագոյն ներկայացուցիչն է Նէզամին, որի օրինակին հետևեցին շատերը) և վիպական պատմուածքը (Դարաբնամէ և այլն)։

Եւրոպացի գիտնականներից առաջինը, որ ըզբաղուեց Շահնամէով, անգլիացի գիտնական Ջոնսն էր, որ 18-րդ դարու վերջը գատաւոր էր Բենգալում. նա Շահնամէն համարում էր կոլլեկտիւ աշխատանքի արդիւնք։

Ապա Ֆէրդովսու Շահնամէով հետաքրքրուում է Գէօթէն, որ իր «Արևմտեան և Արևելեան դիւանում» գրմանք է յատկացնում Շահնամէի կատարելութեան համար։

Շահնամէի առաջին թարգմանութիւնը պատ-

կանում է Գորրէսին Գերմանիայում, որից յետոյ Ֆրիդրիխ Ռիւքերտ տուեց Ռոստոմ և Զոհրաբի հռչակաւոր ազատ թարգմանութիւնը, որից նոյնպէս ազատ թարգմանութեամբ Ժուկովսկին կազմեց իր Ռոստոմ և Զոհրաբը, որին հետևեցին Շահնամէի նորանոր թարգմանութիւններ։

Առաջին թարգմանութիւնը Անգլիայում տեղի է ունեցել 1829 թ. Ատկինսոնի ձեռքով։

Առաջին եւրոպացի քննադատը, որ գրում է Ֆէրդովսու մասին, Համմէր Պուրգշտալլն է (1774-1856), որ նրան որպէս ռազմական ցանաստեղծ աննման է համարում։ Շատ բարձր է գնահատում Ֆէրդովսուն նաև Բաումգարտէնը, մինչդեռ անգլիացի Աուսլէյ նրա մասին աննպաստ կարծիք է յայտնում։

1838 թ. սկսուեց Շահնամէի շքեղ հրատարակութիւնը արևելագէտ Մոլի (Mohl) ձեռքով ֆրանսերէն արձակ թարգմանութեամբ, որը (ֆրանսերէը) հրատարակուեց և առանձին՝ Le livre des Rois վերտառութեամբ 7 հատորում։ Այս գիրքն ունի իր ընդարձակ ներածութիւնը, որտեղ Մոլը կանգ է առնում Ֆէրդովսու կեանքի հանգամանքների վրայ և ցոյց է տալիս նրա ազդեցութիւնը հետագայ վիպական գրականութեան վրայ։

Միւս քննադատներից Նէթէն կանգ է առնում Ֆէրդովսու տաղանդի քնարական կողմի վրայ, իսկ Պաուլ Հորն խօսում է Ֆէրդովսու ազդեցութեան մասին պրովանսալ գրականութեան վրայ։

Grundriss der Iranischen Philclogie հրատարակութեան երկրորդ հատորում (Ստրասբուրգ, 1896—1904) գերմանացի ականաւոր գիտնական Նէօլդէքէն



զետեղեց մի ընդարձակ յօդուած Das Iranische Nationalepos վերնագրով, որտեղ նա զատում է Ֆէրդովսու կենսագրութիւնը առասպելական տարրերից և տալիս է Շահնամէի բանասիրական ուսումնասիրութիւնը։ Այս նշանաւոր աշխատութիւնը մի քանի անգամ յիշատակուած է սոյն գրքում։ Նէօլդէքէից յետոյ եկող գիտնականները (Բրաուն, Կրիմսկի) կրկնում են նրա ասածները և այսպիսով, մինչև սոյն թւականը, այսինքըն Ֆէրդովսու ծննդեան հազարամեայ յօբելեանը, Եւրոպայում Ֆէրդովսու մասին գրած ամենակարևոր աշխատութիւնը Նէօլդէքէինն է, որ, ինչպէս ասացինք, ծանրանում է խնդրի բանասիրական կողմի վրայ։

Յիշենք Ֆէրդովսու նշանաւոր թարգմանութիւնները—իտալերէն լեզուով Pizzi, Թուրին, 1886-1888, լրիւ, չափական։

Անգլերէն լեզուով Rogers, 551 էջ, 1907 թ. և Warner եղբայրների, 9 հատոր, 1905-15 (լրիւ չափական թարգմանութիւն)։

Արևելեան լեզուներով ևս Շահնամէն թարգմանուած է. յիշենք նախ և առաջ արաբերէն արձակ թարգմանութիւնը Ալբոնդարի Իսպահանիի, հէջրի 615-23 (1218-26)։

Շահնամէն թարգմանուած է նոյնպէս վրացերէն լեզուով։

Հայերէն թարգմանութիւններից յիշենք Սամուէլ Գիւլզադեանի թարգմանութիւնները՝ Ռուստէմ և Զոհրաբ, Սիաւուշ և Զոհակ (լրիւ թարգմանութիւններ), Դր. Թիրեաքեանի թարգմանութիւնը՝ Արդաշիր Բաբկան և հազարամեակի առթիւ Յ. Միրզայեանի մի քանի հատուածների թարգմանութիւնը և այլն։

Մեծ բանաստեղծի ծննդեան հազարամեակի առթիւ նորանոր թարգմանութիւններ տեղի են ունենում զանազան լեզուներով։

Հազարամեակի առիթով արևելագէտների համագումարում Թէհրանում կարգացուեցին մի շարք զեկուցումներ և լոյս տեսան բրոշիւրներ, որոնց մէջ յիշատակութեան արժանի է Մէհր ամատրի մի առանձին համարը ژوله‌ی فردوسی, հատուածներ զանազան յօդուածներից, էջ 303 (401-704),

Շահնամէի հրատարակութիւնները բազմաթիւ են։

Եւրոպացիների ձեռքով կատարած հրատարակութիւններից պէտք է յիշել նախ Լոմպդենինը՝ Կալկաթա, 1811, Թէօռներ Մաքանինը՝ Կալկաթա, 1829, Մոլի վերոյիշեալ հրատարակութիւնը Փարիզում. Թարպմանութեամբ և Vullers-ի, ապա նրա մահից յետոյ Landauer-ի հրատարակութիւնը (կիսատ մնացած), Liber Regum qui inscribitur Schahname (Արքայապիրք, որ կոչւում է Շահնամէ)։ Պարսկական հրատարակութիւնները՝ Բոմբէյ, հէջրի 1262, 1272, Թէհրան, 1247, 1267, 1279, Թաւրիզ, 1275, Լուքնով 1287, հրատ. Amuzanda Shirmard Irani 1913. Թէհրանի նորագոյն հրատարակութիւնն է Խաւորինը, 5 հատոր, Թէհրան, 1311 շամսի (1932 թ.) որոշ թերութիւններով, բայց յարմար գործածութեան համար. որանից օգտուել ենք մենք սոյն գիրքը շարադրելիս։

Ներկայումս Թէհրանում պատրաստւում են նոր հրատարակութիւններ։

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԵՒ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Այս բոլորից յետոյ եթէ համարձակուենք մեր



գնահատականն ասել Ֆէրդովսու մասին, մենք նրա տեղը կը գտնենք մեծ վիպագիրների կաճառում՝ Հոմերոսի, Վերգիլիոսի և այլ նշանաւոր վէպերի հեղինակների կողքին։

Այս բանը չէր կարող չը պատահել ինքը, մեծ բանաստեղծը և նա իր բարձր արժանաւորութեան գիտակցութիւնը հանդէս է բերում սուլթան Մահմուդի դէմ դրուած երգիծաբանութեան (սատիրի) հետևեալ տողերում, որոնք յիշեցնում են Հորացիոսի քրմաշունչ «Յուշարձանը»։

Փառքը հերոսների՝ հզօր, անուանի
Մէկ մէկ իմ մատեանում կացուցի յայտնի.
Բոլոր մահացածներն այն հնամենի
Իմ հրաշագործ ձեռքով դարձան կենդանի։
Յիսուսի պէս մէկ մէկ այդ մեռածներին
Ես կեանք ներշնչեցի գրչով վերստին.
Փոխ մեծ ծառայութիւն մատուցի, արքայ,
Յիշատակդ աշխարհում անմեռ կը մնայ.
Ապարանքներն ամէն կը նահանան
Անձրևից ու ստից վառ արեգական։
Ես գրչով հիմք գրի վեհ ապարանքի,
Որ հողմ ու անձրևից ահ երբէք չունի։
Եւ իմ երկի գլխով դարեր կը դառնան,
Սակայն խոհուն մարդիկ այն միշտ կը կարդան։

Եւ իրաւ, այն խանդավառ վերաբերմունքը, որ ցոյց տուեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհը մեծ բանաստեղծի յիշատակի նրա ծննդեան հազարամեակի առթիւ, պարզ ցոյց տուեց, որ այդպիսի հազարամեակներ նրա երկի գլխով դեռ շատ կը դառնան, սակայն խոհուն մարդիկ այն միշտ կը կարդան։

(ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


I ՖԷՐԴՈՎՍՈՒ ԴԱՐԸ 1

1. Ֆէրդովսու նախորդները 8
2. Ֆէրդովսու ժամանակիցները 24
3. Ֆէրդովսու հաւատքի կենսագրութիւնը 30

II ՇԱՀՆԱՄԷ 36

1. Ձափը 36
2. Կառուցուածքը 37
3. Աղբիւրները 38
4. Շահնամէի բովանդակութիւնը 43

I Շրջան, պետութեան կազմակերպումը 45
II Շրջան, Քէն առ Զոհակ 47
III Շրջան, Իրաջի սպանման քէնը 48
Ռոստամ և Զոհրաբ 55
IV Շրջան, Սիաւուշի քէնը 62
Քամուս Քուշանիի միջնադէպը 67
Տասներկու հերոսների պատմութիւնը 74
Քէյ Խոսրովի և Աֆրասիաբի մեծ պատերազմը 77
Քէյ Խոսրով ազատում է Ջէհնին 80
Կրօնական քէն 84
Էսֆոնդիարի եօթ արկածները 87
Էսֆոնդիարի մենամարտը Ռոստամի հետ 90
Ռոստամի մահուան քէնը 95
Էսֆոնդիարի սպանման քէնը 97

5. Կուլտուրական չափանիշներ 102
6. Յատուկ երևոյթներ 205
7. Զրադաշտականութիւնը Շահնամէում 107
8. Մահմեդականութեան ազդեցութիւնը 108
9. Սուբիեկտիւիզմ և օբիեկտիւիզմ 110
10. Բանասիրական վերլուծութիւն 112
11. Գեղարուեստական կողմը 116
12. Տիպերը 121
13. Ֆէրդովսին Շահնամէում 136
14. Համեմատութիւն հայկական, յունական և գերմանական վէպի հետ 141
15. Թերութիւնները 149
16. Դոգմին Շահնամէում 150
17. Շահնամէի ազդեցութիւնը և հրատարակութիւնները 152
18. Գնահատականը և ինքնագնահատականը 156

# فردوسی و شاهنامه او

تألیف روبن ابراهامیان

جلد اول

۱۳۱۳

مطبعه « مدرن » طهران

1000

ՀՀ Ազգային գրադարան
NL0374360

ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ

| | |
|---|---|
| Բաբա Թահէր | 3 ռիալ |
| Արտասահմանում | 40 սենթ |
| Բոհրամ Գուր և Ազադէ | 1 ռիալ |
| Արտասահմանում | 2 ֆրանկ |

ԳԻՆՆ Է՝

| | |
|---|---|
| Պարսկաստանում | 10 ռիալ |
| Արտասահմանում | 12 ֆրանկ |

9186